



Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈՒՆՎԱՐ • ՓԵՏՐՎԱՐ • ՄԱՐՏ 2020



Որքա՛ն հաճելի է քո հարկի տակ, զորությունների՝
Տեր. իմ հոգին քո գավիթն է ցանկանում ու փա-
փագում: Սիտս ու մարմինս ցնծում են կենդանի
Աստծով: **ՍԱՂՄՈՍ 83. 1-2**

Հարգելի՛ բարեկամ,

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած ար-եւհայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Սիսիանի Սուրբ Գրիգոր եկեղեցին կամ Սիսավանի վանքը

գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի արևելյան բլրալանջին: Ըստ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ հայոց թվականությունից առաջ այն հիմնադրել է Սյունյաց Վարազդուխտ իշխանուհին: Վանքի առջև Սյունյաց իշխանները կառուցել են արքունական տուն և իշխանանիստ ապարանք: 670-689 թթ. Սյունիքի Կոհազատ իշխանը՝ հոգևոր առաջնորդ Հովսեփ Ա-ի և Թեոդորոս Սիոն վանականի օժանդակությամբ հիմնովին վերակառուցել է այն, վերանորոգել գմբեթը, որտեղ փորագրել է տվել իր անունը: Սրբատաշ կապտավուն բազալտից կառուցված Սբ. րիգոր եկեղեցին ոճով նման է Սբ. Հովհաննիս Կոստանյանի, միջանկյալ երեք քառորդ խորշերով, քառախորան, չորս անկյուններում ավանդատներով ճարտարապետական հորինվածք է: Գմբեթի տասներկու նիստերով թմբուկը զարդարված է կամարաշարով, քիվերը՝ հյուսածո զարդաքանդակով, գմբեթակիր կամարները հենվում են ուլորազարդ խոյակների վրա: Ներսում պահպանված են Կոհազատ իշխանի, Հովսեփ եպիսկոպոսի և Թեոդորոս վանականի պատկերաքանդակները՝ համապատասխան մակագրություններով և քարտաշ-վարպետների նշանագրերով: Եկեղեցին երկու մուտք ունի՝ հարավային ու արևմտյան կողմերում: Եկեղեցու շուրջը գերեզմանոց է՝ հին ու նոր տապանաքարերով:

Միջնադարում զավթիչների արշավանքների ու ասպատակումների հետևանքով շրջակա բնակավայրերը ամայացել էին, իսկ վերաբնակվողներին հայտնի չէր եկեղեցու իսկական անունը: Այդ պատճառով տեղացիներին այն առավել հայտնի է Սբ. Հովհաննես անունով, որը կառույցին տրվել է արևմտյան ափին պահպանված «Հովհաննես եկեղեցական» արձանագրության հիման վրա: Եկեղեցին հիմնովին վերանորոգվել է 1959-1961 թթ: (www.wikipedia.org).

Կողքի Նկար էլիսըն Ֆիլիպսի, Կալիֆոռնիա, ԱՄՆ
Cover Photo by: Allison Phillips, California, USA



Ջիաց մեր հանապազորդ

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածուխյուններ

ՀՈՒՆՎԱՐ, ՓԵՏՐՎԱՐ, ՄԱՐՏ 2020

ԼԱ ՏԱՐԻ

Ա. ԵՌԱՄՍԾԱԿ

Մեր խորին շնորհակալուխյունն ենք հայտնում Radio Bible
Class ընկերուխյանը, որի թուլլուվուխյամբ Our Daily Bread
գրքուլկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածուխյունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցուխյուն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցուխյան
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլվոստ՝ amaa.armenia@amaa.am

Աղոթելու հիշեցում

«Մի քանի տարի առաջ չգիտեմ ինչու, քեզ համար աղոթելու մղում ունեցա», բլջային հեռախոսիս հին բարեկամիցս այսպիսի մի գրուծյուն ստացա, որին կցված էր այդ մասին հիշեցնող մի խոսուն պատկեր. «Աղոթի՛ր Զեյմսի համար: Աղոթի՛ր նրա մտքի, խորհուրդների և խոսքերի համար»: Անվանս կողքին նա երեք տարեթիվ էր նշել: Նայեցի դրանց ու շունչս կտրվեց: Անմիջապես ուզեցի ճշտել, թե կոնկրետ ո՞ր ամսին է ինքը սկսել ինձ համար աղոթել: Պատասխանեց, որ հուլիս ամսին: Հենց այդ ամսին էր, որ պատրաստվում էի գնալ տնից արտասահմանում սովորելու համար և գիտեի, որ դիմագրավելու էի զանազան դժվարություններ. անձանոթ լեզու, մշակույթ, դավանանքի մարտահրավերներ:

Կարդա՛

Ա Տիմ. 2. 1-8

...Իմ աղոթքներում անդադար, գիշեր ու ցերեկ հիշում եմ քեզ: Բ. Տիմ. 1.3

Տեսնելով այդ գրուծյունը՝ հասկացա, որ ես ստացել եմ այդ ջերմեռանդ աղոթքի պարգևը: Ընկերոջս՝ ինձ համար աղոթելու ցանկությունը հիշեցրեց Պողոսի՝ իր երիտասարդ միսիոներ ընկերոջը՝ Տիմոթեոսին տված աղոթելու հորդորը. «Արդ աղաչում եմ ամենից առաջ աղոթք անել, խնդրանք, աղաչանք, գոհություն՝ բոլոր մարդկանց համար» (Ա. Տիմ. 2. 1): «Ամենից առաջ»-ը ցույց է տալիս գերազույն նախապատվության միտքը: Պողոսը բացատրում է, որ մեր աղոթքները կարևոր են, որովհետև Աստված «ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն ու զան ճշմարիտ գիտակցության» (Հմ. 4):

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, խնդրում եմ օգնի՛ր ինձ հաճախ աղոթել մարդկանց համար , որպեսզի փոփոխություն կատարես նրանց կյանքում: Ամեն:

Ո՞ւմ համար ես ուզում աղոթել այս նոր տարում և ի՞նչ ես անելու մշտապես հանուն նրանց աղոթելու համար:

Լավ է քեզ համար

2016-ին աշխարհում մարդիկ 98,2 միլիոն դուլար են ծախսել շոկոլադի համար: Այս թիվը տպավորիչ է, բայց ոչ զարմանալի: Որովհետև շոկոլադը համեղ, քաղցր և շատ հաճելի ուտելիք է: Եվ մարդիկ շատ են ուրախացել, երբ իմացել են նաև դրա օգտակարություն մասին: Շոկոլադի բաղադրության մեջ մի նյութ կա, որի չափավոր օգտագործումը օգտակար է ծերության և սրտի հիվանդության դեպքում:

Սողոմոն իմաստունն ասում է, որ մեկ այլ «քաղցր» բան էլ կա, որն արժե օգտագործել: Դա իմաստությունն է: Նա իր որդուն առաջարկեց մեղր ուտել, որովհետև այն «հաճելի է» (Առ. 24,13) և բաղդատեց դրա քաղցրությունը իմաստության հետ: Նա, որ Աստծո իմաստությամբ է սնվում, տեսնում է, որ ոչ միայն հոգու համար է քաղցր, այլև օգտակար է՝ սովորեցնելու, խրատելու և մեզ պատրաստելու մեր կյանքում անելիք «ամեն բարի գործի համար» (Բ. Տիմ. 3.16-17):

Իմաստությունը մեզ կարողություն է տալիս ճիշտ որոշումներ ընդունելու և մեզ շրջապատող աշխարհը լավ ճանաչելու: Հետևաբար արժե դրանից օգտվել և այն բաժնեկցել մեր սիրելիների հետ, ինչպես որ Սողոմոնը փափագեց անել իր որդու հետ: Մեզ համար հաճելի կլինի Աստծո իմաստությամբ ուրախանալը: Իրականում այն քաղցր մի ուտելիք է, և Աստված քաջալերում է, որ նրանով ուրախանանք:

Կարդա՛

Առակներ 24. 13-14

Այդպես էլ իմաստության գիտությունը քաղցրալիտի լինի քո հոգու համար, որովհետև եթե գտնես այն, քո վախճանը լինելու է բարի, և չի կտրվելու քո հույսը: Առ. 24.14

Աղոթք - Հայր, շնորհակալ ենք Քո խոսքի քաղցրության համար: Խնդրում ենք՝ սնուցի՛ր մեզ Քո իմաստությամբ: Ամեն:

Աստծո խոսքի քաղցրությունը զգա և փառք տո՛ւր Նրան:

Աստված սպասեց

Աստվածի բանաստեղծ Դենիս Լևերտովը երբ դեռ տասներկու տարեկան էր, իր գրած բանաստեղծություններից մի քանիսը ուղարկեց Հայտնի բանաստեղծ Տ. Էլիոթին՝ սպասելով նրա պատասխանին: Չարմանալիորեն Էլիոթը երկու ձեռագիր էջ քաջալերական պատասխան գրեց նրան: Իր «Գետակը և շափուղան» ժողովածուի առաջաբանում Դենիս Լևերտովը բացատրում է, թե ինչպես է բանաստեղծությունը իրեն անաստվածությունից առաջնորդել դեպի քրիստոնեական հավատը: «Ավետում» բանաստեղծությունը Մարիամի՝ Աստծուն հանձնվելու մասին է: Հեղինակը նկարագրում է, թե ինչպես Սուրբ Հոգին մերժում է Մարիամի վրա ճնշում բանեցնելը և փափագում, որ նա ազատ կամքով ընդունի Հիսուս մանուկով իր հղի լինելը: Բանաստեղծության կենտրոնական բառերն են «Աստված սպասեց»:

Կարդա՛
Եսայի 30. 8-18

Աստված նորից
գթալու է ձեզ, վեր է
կենալու, որպեսզի
ողորմի ձեզ:
Ես. 30.18

Մարիամի պատմության մեջ Լևերտովն իրեն էր տեսնում: Աստված առանց որևէ բան պարտադրելու սպասում էր, որ իրեն սիրեն: Եսայի մարգարեն այս նույն ճշմարտությունն է նկարագրում՝ ասելով. «Աստված նորից գթալու է ձեզ, վեր է կենալու, որպեսզի ողորմի ձեզ» (30.18): Նա պատրաստ էր, բայց սպասեց, որ նրանք ցանկություն ունենան ստանալու այն, ինչ ինքը պիտի տա նրանց (Հմ.19):

Չարմանալի է, որ մեր Արարիչը, աշխարհի Փրկիչը նախընտրում է սպասել, որ մե՛նք իրեն ընդունենք: Աստված, որ դյուրությամբ կարող է մեզ հաղթել, հեզ համբերություն է ցուցաբերում: Սուրբը մե՛զ է սպասում:

Աղոթք - Հայր, զարմանում եմ, որ Դու ի՛նձ ես սպասում: Վստահում եմ Քեզ և փափագում, խնդրում եմ՝ Ե՛կ ու ողորմիր ինձ: Ամեն:

Աստված սիրով քեզ է սպասում, որ դու քո ազատ կամքով հանձնվես իրեն:

Կատարելապես տեղադրված

Գիտնականները հաստատում են, որ մեր մոլորակը գտնվում է արևից այնպիսի ճիշտ հեռավորության վրա, որպեսզի օգտվի նրա ջերմությունից: Եթե քիչ ավելի մոտ լինեք, ջուրը կգոլորչիանար, ինչպես Վեներայի վրա է: Իսկ եթե ավելի հեռու լինեք, ամեն ինչ կսառչեք, ինչպես Մարսի վրա է: Երկիրը նաև ճիշտ ծանրություն ունի՝ առաջացնելու համար ճիշտ ձգողական ուժ: Եթե մի քիչ պակաս լինեք քաշը, առանց ձգողական ուժի, երկիրը անբերրի կլինեք, Լուսնի նման: Իսկ եթե ավելի ծանր լինեք, քան է և ավելի մեծ ձգողական ուժ ունենար, պիտի կյանքեր թունավոր գազերը, որոնք խեղդում են կյանքը, ինչպես որ Յուպիտերի վրա է:

Կարդա՛
Յոթ 38. 4-11

Որտե՞ղ էիր դու, երբ ես երկրի հիմքերն էի գցում: Յոթ. 38. 4

Ֆիզիկական, քիմիական ու կենսաբանական բարդ փոխազդեցությունները, որոնցից կազմված է մեր երկիրը, Արարչի հսկողության ներքո են: Այդ բարդ արվեստի գործին հպանցիկ մի ակնարկ ենք տեսնում, երբ Աստված Հոբի հետ խոսում է մեր հասկացողությունից դուրս երևույթների մասին: «Որտե՞ղ էիր դու, երբ ես երկրի հիմքերն էի գցում: Ասա՛ ինձ, եթե խելամիտ ես ու իմաստուն: Ո՞վ է սահմանել դրա չափը, եթե գիտես, կամ ո՞վ է լար գցել դրա վրա: Ինչի՞ վրա է հաստատվել օդակը դրա, ո՞վ է դրել անկյունաքարը դրա» (Հոբ. 38. 4-6):

Ստեղծագործության վերաբերյալ այս ակնարկը պատճառ է դառնում զարմանքով մտածելու, որ երկրի վիթխարի օվկիանոսները խոնարհվում են Նրա առջև, որ «ծովը փակեց դարպասներով, երբ այն իր մոր որովայնից ծնվեց դուրս եկավ: Սահմաններ դրեց նրա համար՝ փականքներ ու դարպասներ, և ասաց. «Կգաս մինչև այդ վայրն ու այլևս առաջ չես անցնի» (Հմ 8-11): Հիացմունքով օրհնենք, որովհետև այս կատարյալ երկիրը մեզ համար է չինել, որպեսզի Աստծուն ճանաչենք ու Նրան վստահենք:

Աղոթք - Արարի՛չ Աստված, շնորհակալ եմ այս կատարյալ երկրի համար, որ Դու ես ստեղծել: Ամեն:

Տե՛ս Աստծո հիանալի ու զարմանահրաշ ստեղծագործությունը և Իրեն փառավորի՛ր:

Լույսով կիսվել

Մտեֆանը իր ծնողներին ասաց, որ ամեն օր դպրոց է գնալու ավելի վաղ, սակայն պատճառը չբացատրեց: Ծնողներն ամեն ինչ անում էին, որ նա ամեն օր ժամը 7-ն անց 15-ին դպրոց հասնի:

Զմռան մի օր Մտեֆանը ավտոպատահարի զոհ դարձավ: Դրանից հետո միայն նրա հայրն ու մայրը իմացան, թե իրենց որդին ինչու էր շուտ գնում դպրոց: Պարզվում է՝ նա և ընկերները հավաքվում էին մուտքի մոտ՝ որպեսզի ժպիտով ու ազնիվ բառերով ողջունեն դպրոց եկող աշակերտներին: Նրանց այդ գեղեցիկ արարքը բոլոր աշակերտներին բարի գալստյան և ընդունված լինելու զգացում էր տալիս:

Կարդա՛ Մատթեոս 5.14-16

Դուք աշխարհի լույսն եք. մի քաղաք, որ սարի վրա է կանգնած, չի կարող թաքնվել: Մատթ. 5.14

Մտեֆանը, որպես Հիսուսին հավատացող, ուզեց իր ունեցած ուրախութիւնը բաժանել նրանց հետ, ովքեր ունեն դրա կարիքը: Նրա օրինակը լավագույն հիշեցումն է այն մասին, որ Քրիստոսի սիրո լույսը ցոլացնելու լավագույն ձևը ազնիվ արարքներն են ու ջերմ ընդունելության հոգին:

Մատթեոս 5. 14-16-ում Հիսուսը հայտնում է, որ Իր մեջ է «աշխարհի լույսը» և «մի քաղաք, որ սարի վրա է կանգնած, չի կարող թաքնվել» (Հմ.14): Հին քաղաքներն առհասարակ կառուցվում էին սպիտակ կրաքարով, որն առավել փայլուն էր դարձնում արևի շողերը: Թող որ մենք էլ փայլուն քարերով կառուցված քաղաքների նման Աստծո լույսը տանք բոլորին (Հմ.15): Եվ մինչ մեր «լույսը մարդկանց կլուսավորի» (Հմ.16), թող նրանք Քրիստոսի սիրո ողջունի փորձառութիւնն ունենան:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Ստեֆանի օրինակի համար: Օգնի՛ր, որ ես էլ նրա նման ազնվություն ու սիրո ջերմ ողջույն տամ բոլորին: Ամեն:

Մեր շուրջը կան մարդիկ, որոնք կարիք ունեն Աստծո հանդեպ սիրո ջերմ արտահայտությանը մեր միջոցով:

Աստծո նախապատվությունը

Տճնդյան տոներին համայն քրիստոնյա աշխարհի ուշադրությունը կենտրոնանում է ծնվող մանկան՝ Հիսուսի վրա: Անկասկած, ներկայացման կենտրոնական դեմքը Նա է: Սակայն մենք հաճախ մոռանում ենք դրա բուն հեղինակին՝ «բեմադրողին» և «արտադրողին»: Այսինքն՝ Հայր Աստծուն, որին պետք է տրվի նախապատվությունը ոչ միայն Ծնունդի ժամանակ, այլև միշտ:

Հիսուսի ծնվելուց մոտավորապես 700 տարի առաջ Եսայի մարգարեն ասաց, որ ծնվող մանուկը «պիտի կոչվի հզոր Աստված»: Իսկ նրա ծնվելուց ինը ամիս առաջ էլ մի հրեշտակ Հովսեփին ասաց, որ «նրա անունը էմմանուել կդնեն, որը նշանակում է՝ Աստված մեզ հետ է»: Անմիջապես Հիսուսի ծնվելուց հետո էլ հրեշտակները Աստծուն օրհնում էին և ասում. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում» (Ղուկ. 2. 14):

Բնական է, որ նորածին մանուկն իր շուրջն է կենտրոնացնում բոլորի ուշադրությունը: Հիսուսի աշխարհ գալուց հետո և դրանից ի վեր մինչև այսօր մարդիկ ավելի շատ իր վրա կենտրոնացած են թվում, քան իր երկնավոր Հոր: Հիսուսը եկավ Աստծո կողմից, որպեսզի մարդուն հայտնի Աստծո մասին և իրենով նրան հաշտեցի Աստծո հետ, և ոչ թե ծածկի նրան: Հետևաբար, Ծնունդի մասին խորհրդածելիս կամ տոնելիս չպետք է մոռանալ նախապատվությունը միշտ Աստծոն տալ:

Այո՛, Ծնունդից առաջ, Ծնունդի ժամանակ կամ Ծնունդից հետո՝ նախ ԱՍՏՎԱԾ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ հաճեցիր Որդուդ ուղարկել աշխարհ՝ մեզ փրկելու: Օգնիր՝ միշտ հիշել, որ Ծնունդի հեղինակը Դու՛ ես, իսկ հերոսը՝ Քո Միածին Որդին: Ամեն:

Ո՞րն է մեր նախապատվությունը: Աստված, թե՞ ուրիշ բան:

Կարդա՛ր

Մատթեոս 1. 18-25

«...Նրա անունը էմմանուել կդնեն, որ թարգմանվում է «Աստված մեզ հետ» Մատթ. 1.23

Գաղտնի առաքում

Մահացու հիվանդությունյամբ տառապող Կիմին հերթական անգամ ողջունեց դռան մոտ գրված զանգակաձև շուշաններով, վարդագույն կակաչներով և դեղին նարգիզներով լի մի ծաղկաման: Արդեն յոթ ամիս մի անանուն հավատացյալ կանոնավոր կերպով ծաղիկներ էր ուղարկում Կիմին՝ սուրբբարային քաջալերական գրությունյամբ ու ստորագրությունյամբ՝ «Միրով՝ Հիսուս»:

Կիմը այդ գեղեցիկ ծաղիկների լուսանկարը տեղադրեց դիմատետրի իր էջում: Ծաղիկները նրան առիթ տվեցին մի անծանոթի ցուցաբերած ազնվությունյամբ ուրախանալ և երախտապարտ լինել Աստծուն՝ իր ժողովրդի միջոցով իրեն ցուցաբերած սիրո համար:

Այսպես, ծաղիկների յուրաքանչյուր առաքում պատճառ դարձավ, որ Կիմի բարեկամները նույնպես երախտապարտ լինեն այն ժամանակի համար, որ Աստված տվեց Կիմին: Իսկ նա վստահ էր, որ յուրաքանչյուր ծաղիկ ու ձեռագիր գրություն Աստծո կարեկից սիրո հաստատումն են:

Ծաղիկներն ուղարկողի անծանոթ լինելու հանգամանքը արտահայտությունն է այն հավատամքի, որ Հիսուսը քաջալերում է կիրառել, երբ մի բան ենք տալիս: Տերը մեզ ասում է. «Ողորմությունը մարդկանց առաջ, նրանց երեւալու համար չանեք, այլպես վարձ չեք ունենա ձեր Հորից, որ երկնքում է» (Մատթ. 6.1): Մեր բարի գործերը պաշտամունքի արտահայտություններ են լինելու, որոնք հորդում են այն սրտերից, որոնք չնորհակալ են Աստծուն՝ իր արած բարիքների համար: Աստված ուզում է, որ մեր առատաձեռնությունյան գրգապատճառը սերը լինի:

Աղոթք - Տեր, շնորհակալ ենք այն հիշեցման համար, որ Քրիստոսը տվածների համար Քեզ շնորհակալություն հայտնելու առանձնահատուկ ու սքանչելի ձևը ուրիշներին տալն է: Ամեն:

Գաղտնի կերպով ուրիշներին տալը ուշադրություն է դարձնում Հիսուսի վրա:

Կարդա՛

Մատթեոս 6. 1-14

Բայց դու երբ ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե քո աջն ի՞նչ է անում:
Մատթ. 6.3

Չարյուր տարի անց

Կինորեմադրիչ Ռոդ Սերլինգն ասել է. «Ուզում եմ, որ Հարյուր տարի անց մարդիկ ինձ հիշեն»: «Առավոտյան գոտի» հեռուստատեսային հաղորդաշարի հեղինակը երազում էր, որ մարդիկ մի օր իր մասին ասեն. «Նա հեղինակ էր»: Մեզանից շատերը կարող են Սերլինգի նման հիշվելու մասին երազել՝ խորհելով, որ դա մեր կյանքին իմաստ ու կայունություն է տալու:

Հոբի պատմությունը մի մարդու մասին է, որը փորձում է իմաստ գտնել իր ապրած դժվար օրերի մեջ: Մեկ ակնթարթում նա ոչ միայն իր ստացածները կորցրեց, այլև նրանից խլվեցին իր ամենաթանկ բաները՝ զավակները: Հետո նրան իր բարեկամները հանդիմանեցին, ասելով, որ արժանի է այդ ճակատագրին: Հորը ցավից հառաչելով ասաց. «Ի՛նչ կլինեք, որ կարողանայի ես գրել խոսքերս, հավիտենական մի մատյանի մեջ գրանցել դրանք՝ երկաթե գրչով կապարի կամ թե վեմերի վրա փորագրելով» (Հոբ 19. 23-25):

Հոբի խոսքերը «վեմի վրա հավերժ փորագրված են», որովհետև դրանք արձանագրված են Աստվածաշնչում: Բայց Հոբը ավելի մեծ իմաստ էր ուզում գտնել իր կյանքում, քան իր թողած ժառանգությունն էր: Իր փնտրածը նա գտավ Աստծո իր նկարագրի մեջ, երբ ասաց. «Գիտեմ հավերժական է Նա, ով երկրի վրա պիտի փրկի ինձ» (19. 25): Այս իմացությունը նրան տվեց ճշգրիտ ցանկությունը: Նա ասաց. «Ինքս անձամբ քաջ գիտակցում եմ, ինչ որ տեսել եմ ես իմ աչքերով, ոչ թե ուրիշը: Այդպես ամեն ինչ իմ ծոցում հանգավ» (Հմ.27): Ի վերջո Հոբը գտավ ոչ միայն այն, ինչ ակնկալում էր, այլև շատ ավելին՝ ամեն բանի իմաստը և կայունության աղբյուրը (42.1-6):

Աղոթք -Չայր, ամեն բան անցավոր է՝ բացի Քեզանից: Փառաբանում եմք Քեզ Քո նկարագրի համար: Ցո՛ւյց տո՛ւր մեզ այն, ինչը կարևոր է: Ամեն:

Ինչպե՞ս ես ուզում, որ մարդիկ քեզ հիշեն:

Կարդա՛ր
Չոբ. 19. 21-27

Գիտեմ՝ հավերժական է Նա, ով երկրի վրա պիտի փրկի ինձ: Չոբ 19. 25

Թերված աշտարակը

Հավանաբար գիտեք Իտալիայի Պիզա քաղաքի թեքված աշտարակի մասին: Իսկ ձեզ հայտնի՞ է, որ Սան Ֆրանցիսկոյում նույնպես այդպիսի մի աշտարակ կա: Այն կառուցվել է 2008-ին և կոչվում է Հագարամյակի աշտարակ: Հիսուսույթ հարկանի աշտարակը հպարտ, բայց մի փոքր թեք կանգնած է քաղաքի կենտրոնում: Խնդիրն այն է, որ դրա կառուցողները պետք եղած չափով չեն փորել աշտարակի հիմքերը: Եվ այժմ ստիպված են ավելի մեծ գուժարներ ծախսել այդ հիմքերն ամրացնելու համար: Նաև համոզված են, որ այդպիսով կառուցյուր դառնալու է ամուր և նույնիսկ երկրաշարժերի ժամանակ կանգուն է մնալու:

Այս պատմություն մեջ ո՞րն է ցավալի դասը: Այն, որ հիմքերը շատ կարևոր են: Երբ հիմքը հաստատուն չէ, աղետ կարող է պատահել: Հիսուսը նման մի բան սովորեցրեց Լեռան քարոզի ավարտին, որն արձանագրված է Մատթեոսի 7. 24-27 համարներում: Նա համեմատում է երկու շինարարների, որոնցից մեկը իր տունը կառուցել է ժայռի, իսկ մյուսը՝ ավազի վրա: Երբ փոթորիկն եկավ, ժայռի վրա կառուցված տունը կանգուն մնաց:

Հիսուսը հստակորեն հաստատում է, որ մեր կյանքը հիմնված է հնազանդության և Իրեն վստահելու վրա (Հմ.24): Երբ Իր վրա հաստատվենք, մեր կյանքը հաստատուն հիմք կունենա՝ Աստծո զորություն և անսահման շնորհի մեջ: Քրիստոսը բնավ չի խոստանում, որ փոթորիկներ չեն լինելու: Բայց հաստատում է, որ երբ Ինքն է մեր հիմքը, այդ փոթորիկներն ու ուժեղ քամիները չեն կարողանա մեր հաստատուն հիմքերը խարխլել:

Աղոթք - Հայր, փոթորիկները անխուսափելի են կյանքում: Օգնի՛ր, որ կարողանանք հիմնվել Քո խոսքի վրա ու զորացնել Քեզ վրա հաստատված մեր հիմքը: Ամեն:

Քամիներն ու փոթորիկները կլինեն. մեզ մնում է զորացնել մեր հավատը՝ Աստծո վրա հաստատելով մեր անձը:

Կարդա՛ր Մատթեոս 7. 24-27

Արդ նրան, ով որ իմ այս խոսքերը լսում է ու դրանք կատարում, մի իմաստուն մարդու կնմանեցնեմ, որ իր տունը ժայռի վրա շինեց: Մատթ. 7.24

Այստեղ վիշապներ կարող են լինել

Միջնադարյան քարտեզներում այդ ժամանակներում հայտնի աշխարհամասերը նշելիս ավանդաբար նաև այսպիսի գրություն էին թողնում. «Այստեղ վիշապներ կարող են լինել»: Հավանաբար մտածելով, թե այդպիսի սարսափելի արարածներ կան այդտեղ:

Որևէ փաստական օրինակ չկա, որը կհավաստեր, որ միջնադարյան քարտեզագետներն իրոք այդ բառերը գրել են, ուղղակի սիրում եմ այդպես մտածել: Թերևս «այստեղ վիշապներ կարող են լինել» արտահայտությունը ես էլ ուզեմնայի գրել՝ որպես զգուշացում այն բանի, որ իրականում չգիտենք, թե ինչ կարող է պատահել, երբ այդ անծանոթ տեղերը հասնենք:

Սակայն ինքնապաշտպանություն համար արված այս արտահայտությունը հակասում է քաջալերանքի այն հրավերին, որ ստացել եմ որպես Տեր Հիսուսին հավատացող (Բ. Տիմ. 1.7): Կարելի է ասել, որ ես նույնիսկ չգիտեմ, թե իրականում ինչն է վտանգավոր: Պողոսը բացատրում է, որ Քրիստոսին հետևելը երբեմն ցավ է պատճառում (Հմ.8): Սակայն նրանք մահից զալիս են դեպի կյանք և Հոգու միջոցով հավիտենական կյանք ժառանգելու խոստում են ստանում:

Երբ Աստված նման հիանալի պարգև է տալիս մեզ, վախենալով նեղվելը իրապես ողբերգական կարող է լինել: Դա շատ ավելի վատ է, քան մեր դիմագրավելիքները անծանոթ տեղեր առաջնորդվելիս: Կարող ենք մեր անձերն ու անորոշ ապագան վստահել իրեն:

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, շնորհակալ ենք մեզ տված նոր կյանքի ու այն ամենի համար, ինչը մեզ ազատում է մեր վախերից ու սոսկումներից: Օգնի՛ր, որ մեր խաղաղությունը գտնենք Քո մեջ: Ամեն:

Աստծուն ապավինելով ու բարեկամների աջակցությամբ մենք կարող ենք հաղթահարել ամեն վտանգ ու դժվարություն:

Կարդա՛

Բ Տիմոթեոս 1. 6-14

Որովհետև Աստված մեզ երկչոտության հոգի չտվեց, այլ զորության, սիրո և զգաստության:

Բ Տիմ. 1.7

Միակ թագավորը

Հինգ տարեկան էլթոնը լսում էր հովվին, որը խոսում էր այն մասին, որ Հիսուսը, թողնելով երկինքը, եկավ աշխարհ: Երբ հովիվը իր աղոթքում շնորհակալություն հայտնեց, որ Նա մեզ համար խաչվեց ու մահացավ, էլթոնը զարմանքով բացականչեց. «Օ՛, ո՛չ, Նա մեռա՞վ»:

Քրիստոսի ծնված օրից ի վեր կային մարդիկ, որ Նրա մահն էին ուզում: Իմաստուն մոգերը Հերովդես թագավորի իշխանության ժամանակ եկան Երուսաղեմ և ասացին. «Որտե՞ղ է հրեաների ծնված թագավորը. որովհետև մենք արևելքում նրա աստղը տեսանք ու եկանք նրան երկրպագելու» (Մատթ. 2.2): Այս լսելով թագավորը վախեցավ մտածելով, որ կորցնելու է իր դիրքը և հրաման արձակեց, որ Բեթղեհեմում և նրա շուրջ գտնվող տարածքում եղած երկու տարեկան և դրանից ցածր տարիքի բոլոր տղա երեխաներին կոտորեն: Սակայն Աստված պահպանեց իր Որդուն, մի հրեշտակի միջոցով հորդորեց Հովսեփին ու Մարիամին մանկանը փախցնել Եգիպտոս: Նրանք փախան և Նա ազատվեց (Հմ.13-18):

Երբ Հիսուսն իր առաքելությունն ամբողջացրեց, աշխարհի մեղքերի համար խաչվեց: Խաչի վրա նրա գլխավերևում Նրա հանցանքը գրված դրեցին՝ «ԱՅՍ Է ՀԻՍՈՒՍԸ՝ ՀՐԵԱՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԸ» (27.37): Սակայն երեք օր անց Նա հաղթական դուրս եկավ գերեզմանից, երկինք համբարձվեց ու նստեց իր գահի վրա՝ որպես Արքայից Արքա և Տերերի Տեր (Փիլ. 2.8-11):

Թագավորը՝ Տեր Հիսուսը, մեռավ մեր մեղքերի համար: Ուստի արտոնենք, որ Նա իշխի մեր սրտերին:

Աղոթք - Տեր Հիսուս, շնորհակալ եմ, որ մեր մեղքերի համար մեռար՝ մեզ շնորհելով ներում: Սովորեցրու՝ մեզ հանձնվել Քո իշխանությանը: Ամեն:

Հիսուսը քո կյանքի տերն ու թագավորն է: Կա՞ն արդյոք կյանքիդ մեջ մասեր, որտեղ Ինքը չի թագավորում:

Կարդա՛
Մատթ. 2. 1-12

...ԸՆԿՆԵԼՈՎ ԵՐԿՐ-
ՎԱԳԵՑԻՆ ՆՐԱՆ:
Մատթ. 2.11

Փառաբանության ապրելակերպ

Վալլաս Սթեֆենի մայրը մահացավ հիսուն տարեկանում: Հետագայում նա «Ուշացած նամակ» վերնագրով հուշ-ը գրեց, որում գովում էր մոր առաքինությունները. նա ամուսնանալով՝ երկու որդի էր մեծացրել ԱՄՆ-ի դժվարին պայմաններում: Նա քաջալերում ու օգնում էր նույնիսկ նրանց, ովքեր արժանի չէին: Վալլասը հիշեց իր մոր ուժը, որը ներկայանում էր նրա անուշ ձայնով ու երգով: Եվ գրեց. «Դու բոլորովին առիթը բաց չէիր թողնում երգելու»: Վալլասի մայրը ողջ կյանքի ընթացքում երգեց՝ երախտապարտ լինելով իր ունեցած մեծ ու փոքր օրհնությունների համար:

Սաղմոսերգուն նույնպես առիթն օգտագործում էր երգելու համար: Նա երգում էր թե՛ լավ, և թե՛ վատ օրերին: Այդ երգերը պարտադրանքով կամ հարկադրանքով չէին, այլ բնական պատասխան էին «Երկինքն ու երկիրն ստեղծողին (145. 6), նրան, «ով հաց է տալիս քաղցածներին» (Հմ.7), բացում է կույրերի աչքերը (Հմ.8), «ընդունում է որբերին ու այրիներին» (Հմ.9): Այս մեկը իսկապես երգելու մի ապրելակերպ է, որը ժամանակի ընթացքում ավելացնում է մեր ուժը, երբ մենք ամեն օր վստահում ենք «Հակոբի Աստծուն» (Հմ.5.6), որը միշտ հավատարիմ է:

Ոչ թե մեր ձայնի որակը, այլ մեր տված պատասխանը Աստծո արած բարությունը պետք է դառնա փառաբանություն ապրելակերպ:

Աղոթք - Երկինք ու երկիր ստեղծող Աստված, երբ մի պահ կանգնում ու նստածում եմ, տեսնում եմ, որ ինձ պաշտպանելու Քո նախատեսությունները անսահման են: Թող կյանքս փառաբանության երգ լինի այնքան ժամանակ, քանի դեռ ապրում եմ: Ամեն:

Երգն ու փառաբանությունը թող քո ամենօրյա կյանքի կարևոր մասը լինեն:

Կարդա՛
Սաղմոս 145

Սաղմոս պիտի երգեմ իմ Աստծուն, քանի կամ:
Սաղմ. 145.2

Ամենքս ունենք կարեկցության կարիք

Ջեֆր Հիսուսի նոր հավատացող էր, երբ ավարտեց համալսարանն ու սկսեց աշխատել յուզի մի խոշոր ընկերությունում: Որպես վաճառող՝ նա շատ ճամփորդեց ու այդ ընթացքում լսեց մարդկանց պատմությունները, որոնցից շատերը սրտաճմլիկ էին: Նա հասկացավ, որ իր գնորդները ոչ միայն յուզի, այլև կարեկցության, Աստծո կարիք ունեն: Այս փորձառությունը առիթ դարձավ, որ նա հաճախեր Աստվածաբանական դպրոց, որպեսզի Աստծո մասին ավելի շատ բան իմանար և ի վերջո հովիվ դառնար:

Ջեֆրի կարեկից հոգու աղբյուրը Հիսուսն է: Մատթեոսի 9. 27-33-ում երկու կույր ու չար ոգով լցված մարդկանց հրաշքով բուժվելու գործում հպանցիկ ակնարկ կա Քրիստոսի կարեկցության մասին: Իր երկրային առաքելության ժամանակ Հիսուսը ավետարանը քարոզեց ու բժշկեց «ման գալով բոլոր քաղաքներում ու գյուղերում» (Հմ.35): Ինչու՞: «Տեսնելով բազմությունները՝ գլխաց նրանց, որ հոգնել ու ցիրուցան էին եղել, ինչպես ոչխարները, որ հովիվ չունեն» (Հմ.36):

Աշխարհը լի է նեղություններ ու ցավեր ունեցող մարդկանցով, որոնք Փրկչի հոգատարության կարիք ունեն: Իր ոչխարներին առաջնորդող, պաշտպանող ու հոգ տանող հովիվի նման Հիսուսն իր կարեկցությունը տարածում է բոլոր նրանց վրա. ովքեր գալիս են իր մոտ (11.28): Հոգ չէ, թե որտեղ ենք և ինչ հարց ենք լուծում մեր կյանքում, իր մեջ մենք կգտնենք քաղցրություն մը ու հոգատարությամբ լի մի սիրտ:

Աղոթք - Երկնավոր Հայր, երախտապարտ ենք Քո ցուցաբերած կարեկցության համար: Առանց Քեզ մենք կկորչենք: Օգնի՛ր, որ Քո տված կարեկցությունը ուրիշներին էլ հասցնենք: Ամեն:

**Միշտ կարիք ունենք Աստծո կարեկցության:
Փառք Իրեն, որ մեզ պարգևում է պետք եղածը:**

Կարդա՛ր
Մատթեոս 9. 27-38

Տեսնելով բազմությունները՝ գթաց նրանց, որ հոգնել ու ցիրուցան էին եղել, ինչպես ոչխարները, որ հովիվ չունեն: Մատթ. 9.36

Դանդաղելու ժամանակ

1840-ականներին էլեկտրոնային ժամացույցի հայտնագործումից ի վեր շատ բան է փոխվել: Այժմյան մեր օգտագործած «իմաստուն» ժամացույցները, հեռախոսներն ու համակարգիչները ժամանակը «պահում են»: Կյանքի ընթացքը կարծես ավելի արագ է թվում, նույնիսկ ժամանցի համար մեր ճեմելը շտապելով է լինում: Այս մեկը հատկապես զգալի է քաղաքներում: Մասնագետներն ասում են, որ սա իր բացասական անդրադարձն է թողնում մեր կյանքի վրա:

Մասնավորապես դասախոս Ռիչարդ Ուայզը նկատում է. «Մենք պարզապես ավելի ու ավելի արագ ենք շարժվում և մարդկանց հետ հարաբերվում ենք հնարավորինս արագ: Եվ դա մեզ առիթ է տալիս մտածելու, որ հիմա ամեն ինչ լինելու է»:

Մովսեսը՝ Աստվածաշնչի ամենահին սաղմոսներից մեկի հեղինակը, խոսելով ժամանակի մասին, հիշեցնում է, որ Աստված Ինքն է հսկում կյանքի զնացքը: «Հազար տարին Տիրոջ աչքում երեկվա օրվա պես է, որ անցավ, կամ գիշերվա մի պահի պես» (89. 4):

Հետևաբար, ժամանակը տնօրինելու գաղտնիքը արագ կամ դանդաղ ընթանա՛լը չէ: Կարևորը Աստծո մոտ մնալն է և ժամանակն իր հետ անցկացնելը, հետո իրար հետ կքայլենք: Նախ իր հետ, Նրա, ով ստեղծեց մեզ (138.13) և գիտե մեր նպատակն ու ծրագրերը: Մեր ժամանակը երկրի վրա հավիտենական չէ, բայց կարող ենք այն իմաստնությամբ տնօրինել, ոչ թե ժամացույցին նայելով, այլ մեր յուրաքանչյուր օրը Աստծուն տալով: Ինչպես Մովսեսն է ասում. «Մովորեցրու՛ մեզ, որ այնպես հաշվենք մեր օրերը, որ սրտով իմաստուն լինենք» (89.12):

Կարդա՛

Սաղմոս 89. 4, 12-15

Այսպես, ինձ ցույց տուր քո աջը, և սրտով խոնարհների՛մ քո իմաստությունը: Սաղմ. 89.12

Աղոթք - Շնորհքի Աստված, երբ մեր քայլերը Քեզնից շեղվեն, մեզ ետ՝ մոտդ կանչի՛ր, որ Քեզ մոտ մնանք: Ամեն:

Բոլորս էլ մեր կյանքի ընթացքն ունենք, բայց շատ կարևոր է, թե որքան ժամանակ ենք անցկացնում իր հետ՝ մեր օգտի համար:

Քայլել Հոգու հետ

Հայտնի հեղինակ Մալքոլմ Լեդվելը հայտարարում է, որ տասը հազար ժամ է անհրաժեշտ որևէ արվեստի մեջ հմտանալու համար: Մի՞թե նույնիսկ հանճարեղ արվեստագետների և երաժիշտների համար ի ծնե իրենց ունեցած տաղանդը բավարար չէ կատարելություն հասնելու համար: Պարզվում է, որ նրանք իրենց արվեստի մեջ խորանալու կարիք են ունեցել ամեն օր:

Որքան էլ տարօրինակ թվա, մենք էլ այդպես պետք է վարվենք, երբ ուզում ենք իմանալ Սուրբ Հոգու գործության մեջ ապրելու մասին: Գաղատացիներին ուղղված նամակում Պողոսը եկեղեցու անդամներին քաջալերում է իրենք իրենց հեռացնել աշխարհից, եթե ուզում են մոտենալ Աստծուն: Միաժամանակ բացատրում է, որ դա հնարավոր չէ անել ուղղակի մի շարք օրենքների հետևելով: Այլ հարկավոր է քայլել Սուրբ Հոգու հետ: Բնագրում Պողոսը «քայլել» բառի համար օգտագործում է հունարեն «պերիպարթիո» բառը, որը բառացիորեն նշանակում է մի բանի շուրջը քայլել կամ էլ ճամփորդել: Հետևաբար Պողոսի համար Հոգու հետ քայլել նշանակում է ամեն օր ընթանալ Սուրբ Հոգու հետ և ոչ թե բավարարվել մեկ անգամ իր գործության փորձառություններով:

Աղոթենք, որ մենք էլ ամեն օր լցվենք Հոգով ու իր գործի մասին լսենք, որովհետև Նա խրատում է, առաջնորդում, մխիթարում և պարզապես մեզ հետ է: Եվ «Հոգուց առաջնորդվելով» (Հմ.18)՝ ավելի ու ավելի լավ կլսենք իր ձայնը և կհետևենք իր առաջնորդությունը:

Աղոթք - Սուրբ Հոգի՛, օգնի՛ր, որ քայլեմ Քեզ հետ այսօր ու ամեն օր: Ամեն:

Տիրոջ շնորհքով մեկ անգամ փրկվում ենք, սակայն Հոգու հետ քայլելու կարիք ունենք ամեն օր:

Կարդա՛ր
Գաղ. 5. 13-18

Սակայն ասում եմ.
«Հոգով գնացեք ու մարմնի ցանկությունը չեք կատարի»: Գաղ.5.16

Բե՛ր ունեցածդ

«Քարի ապուրի» հին պատմությունը՝ իր զանազան տարբերակներով պատմում է մի քաղցած մարդու մասին, որը մտնում է մի գյուղ, բայց նրան ոչ մեկը չի ուզում կերակրել: Մարդը ջրով լի կաթսան դնում է կրակին և դրա մեջ մի քար է դրում: Ժլատ ու նենգ գյուղացիները սկզբում դիտում են, թե ինչպես է նա սկսում խառնել «ապուրը»: Բայց աստիճանաբար նրանցից մեկը բերում է մի քանի գետնախնձոր, մյուսը՝ մի քանի գազար, մեկը՝ սոխ, մյուսը՝ կանաչեղեն, մի բուռ գարի: Ու շուտով կրակին դրված «քարի ապուրը» դառնում է համեղ ճաշ:

Կարդա՛ր
Հովհ. 6. 4-14

Հիսուսն ասաց.
«Դրանք այստեղ,
ի՞նձ մոտ բերեք»:
Մատթ. 14.18

Այս պատմությունը ունեցածով կիսվելու մասին է, եթե նույնիսկ այդ ունեցածը աննշան է թվում: Հովհաննու 6. 1-14-ում կարդում ենք մի տղայի մասին, որը կարծես թե միակն էր ժողովրդի մեջ, որ մտածել էր իր հետ ուտելիք վերցնելու մասին: Հիսուսի աշակերտները շատ բան չէին կարող անել այդ տղայի հինգ հացով ու երկու ձկով: Բայց երբ այդ քիչը տրվեց, Հիսուսն օրհնեց, ավելացրեց ու դրանով կերակրեց հինգ հազար քաղցած մարդկանց:

Մեկն էլ ասում էր. «Պետք չէ հինգ հազարին կերակրել, դու միայն քո հացերն ու ձուկը բեր»: Ինչպես որ Հիսուսը մեկ հոգու ուտելիքը վերցրեց ու աներևակայելի զորությունբ բազմապատկեց (Հմ.11), նաև պիտի ընդունի մեր ջանքերը, տաղանդն ու ծառայությունները, երբ պատրաստ լինենք Իրեն հանձնել: Նա ուզում է, որ մենք մեր ունեցածը պատրաստակամորեն իրեն հանձնենք:

Աղոթք - Տե՛ր, օգնի՛ր, որ իմ ամբողջ ունեցածս քեզ հանձնեմ՝ իմանալով, որ Դու քիչը կարող ես բազմապատկել: Ամեն:

Ի՞նչ ես պահում Աստծուց: Պատրաստ եղի՛ր քո ունեցածը Իր ձեռքերի մեջ դնելու, անկախ նրանից, թե որքան է այն :

Մրրիկ հետապնդողները

Մրրիկներ որոնող թղթակից-լուսանկարիչ Ուորեն Ֆրայդլին ասում է. «Մրրիկ հետապնդելը նման է եռաչափ հսկա շախմատի, որ խաղացվում է հազարավոր քառակուսի մղոն տարածություն վրա»: Այնուհետև նա շարունակում է. «Ճիշտ ժամանակին ճիշտ տեղում լինելը կանխատեսումի և նավարկության մի համերգ է, երբ տեսնում ես, որ ամեն ինչ վերցվում ու նետվում է՝ ագարակների գործիքներ, ավտոմեքենաներ, տների տանիքներ, սկսվում է ավազամրրիկ և զնդակի չափ կարկուտ է տեղում»:

Տեսնելով մրրիկ հետապնդողների քաջությունն ու գիտությունն ծարավը՝ ես ինքս խոսափում եմ նետվել նման փտանգավոր փոթորիկների մեջ:

Ես կարիք չունեմ կյանքի փոթորիկներ փնտրելու, որովհետև մրրիկներն են ինձ հետապնդում: Այդ փորձառությունը նկարագրված է 106-րդ սաղմոսում, երբ սաղմոսերգուն նկարագրում է մրրկածուփ ծովում ճամփորդողներին: Նրանք հետապնդվում են իրենց սխալ գործողությունների համար: Սաղմոսերգուն ասում է. «Աղաղակեցին Տիրոջն իրենց նեղության մեջ, եւ նա փրկեց նրանց իրենց վշտերից: Մրրիկը վերածեց խաղաղ օդի, եւ ալիքները դադարեցին: Նրանք ուրախացան, որ ալիքները հանդարտվեցին, եւ նա նրանց իրենց ուղած նավահանգիստն առաջնորդեց» (Սաղմոս 106. 28-30):

Երբ մրրիկները մեզ հետապնդեն, միայն Աստված կարող է նրանց կամ մեր մեջ եղած փոթորիկները հանդարտեցնել, որովհետև մեր Հայրը զբանջից ավելի մեծ է:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ հետ ես իմ տագնապների մեջ և Քո զորությունն ավելի մեծ է, քան ցանկացած մրրիկ: Ամեն:

Դժվարություններ դիմագրավելիս ու՞մ ես դիմում: Վստահիր Աստծուն, որ քո տագնապներից շատ ավելի մեծ է:

Կարդա՛ր
Սաղմոս 106. 23-32

Մրրիկը վերածեց
խաղաղ օդի, և
ալիքները դադարեցին:
Սաղմ. 106. 29

Վրեժխնդրության փոխարեն

1956-ին Ջիմ Հլիոթն ու ևս չորս միսիոներներ սպանվեցին հու-
Մատթեոսի ցեղախմբի ձեռքով: Իսկ դրանից հետո պատահածը
անհասկանալի էր բոլորի համար: Ջիմի կինը՝ Էլիզաբեթը, դուստ-
րը և միսիոներներից մեկի քույրը ցանկություն հայտնեցին ապ-
րել այն մարդկանց մեջ, որոնք սպանել են իրենց սիրելիներին:
Նրանք երկար տարիներ բնակվեցին այդ ցեղախմբի գաղութում,
ոչ միայն սովորեցին նրանց լեզուն, այլև
Աստվածաշունչը թարգմանեցին նրանց
համար: Այս կանանց ներումի և բարի
կամեցողության վկայությունը հուսու-
րանիներին համոզեց տեսնել Աստծո սե-
րը իրենց հանդեպ, և շատերն ընդունե-
ցին Տեր Հիսուսին՝ որպես իրենց Տեր ու
Փրկիչ: Էլիզաբեթի ու իր ընկերների արածը անհավատալի օրի-
նակ է չարի դիմաց չար հատուցելու փոխարեն բարին անելու
(Հռոմ.12.17): Պողոս առաքյալը Հռոմի եկեղեցուն քաջալերեց, որ
իրենց արարքներով ցույց տան Աստծո արած կերպարանափո-
խումն իրենց կյանքում: Ի՞նչ ունենա իր մտքում: Այն, որ մար-
դիկ հեռանային վրեժխնդրության ցանկությունից և դրա փոխա-
րեն սեր ցուցաբերեին իրենց թշնամու հանդեպ՝ նրանց կարիքնե-
րը հոգալով, ուտելիք ու խմելիք տալով: Պողոսը մի առակ է մեջ-
բերում Հին Կտակարանից. «Եթե քո թշնամին քաղցած է, հա՛ց
տուր նրան, իսկ եթե ծարավ է, ջու՛ր տուր նրան» (Հմ. 20, Առ.
25. 21-22): Պողոսը հայտնում է, թե հավատացյալների հանդեպ
ցուցաբերած բարությունը կարող է գրավել նրանց և սրտերում
վառել ապաշխարության կրակը:

Կարդա՛ր
Հռոմ. 12. 17-21

Արդ եթե քո թշնամին
քաղցած է, հա՛ց տուր
նրան: Հռոմ.12. 20

Աղոթք - Հայր, դժվար և նույնիսկ անհնար է ուրիշներին
սիրել մեր զորությամբ: Հոգուդ միջոցով օգնի՛ր մեզ, որ կա-
րողանանք սիրել մեր թշնամիներին և մեզ օգտագործի՛ր
նրանց դեպի Քեզ առաջնորդելու համար: Ամեն:

Թշնամուն սիրելու լավագույն օրինակը Ինքը Հիսուսն է:
Մենք էլ Աստծո սերը ցույց տանք մեր թշնամիներին:

Երբ միջամտում է Աստված

«Այս զավակը օրհնված է» խորագրով բանաստեղծության մեջ «Հովիվ Օ» անունով հայտնի Օմառուսի էֆուլյեն պատմում է հղիությունը ընդհատելու իր ծնողների փորձի մասին: Նրանց խանգարել են զանազան անսովոր դեպքեր, և ի վերջո նրանք որոշել են ունենալ զավակին: Իր կյանքի հանդեպ Աստծո ունեցած հոգատարությունն ու պահպանված լինելու զգացողությունը քաջալերեց Օմառուսիին, որ հրաժարվի իր շահավետ գործից և ամբողջովին նվիրվի Աստծուն ծառայելուն: Այսօր նա հավատարմորեն ծառայում է Լոնդոնի եկեղեցիներից մեկում: Հովիվ Օմառուսի նման իսրայելցիներն էլ իրենց պատմության տազնապալի իրավիճակում Աստծո միջամտության փորձառությունն ունեցան: Երբ անցնում էին անապատով, նրանք հանդիպեցին Մովսեսի Բաղակ թագավորին: Վերջինը, վախենալով իսրայելցիների մեծ թվից ու մտածելով, որ չի կարողանա նրանց հաղթել, դիմեց Բաղամ մարգարեին, որ անե՞ք դնի կասկածելի ճամփորդների վրա (Թվեր 22. 2-6):

Երբ Բաղամը բերանը բացեց, որ անի՞ծի նրանց, անե՞քի փոխարեն օրհնություն ելավ բերանից, և նա հայտարարեց. «Արդ, ես հրաման եմ ստացել, որ օրհնեմ, ուրեմն կօրհնեմ և չեմ հրաժարվի դրանից: Հակոբի սերունդները թող նեղություն չկրեն, Իսրայելի հետնորդները հոգնություն չզգան: Նրանց Տեր Աստվածը իրենց հետ է:... Աստված նրանց հանեց եզրիտոսից» (Թվեր 23.20-22): Մենք նկատենք, թե ոչ, Աստված հսկում է իր ժողովրդին: Պաշտենք Նրան երախտապարտ հոգով և պատվենք, որ մեզ օրհնյալ է հռչակում:

Աղոթք - Երկնավոր Հայր, ների՛ր, երբ հաշվի չենք առնում Քո սոված հոգատարությունը: Օգնի՛ր մեզ տեսնել, թե որքան ես մեզ օրհնում: Ամեն:

Անակնկալներ ու նեղություններ միշտ էլ կունենանք, սակայն Աստված պահում է մեզ:

Կարդա՛ր
Թվեր 23.13-23

Մի՛ մոտեցեք, -
ասաց, - իմ օձյալներին,
և մարգարեներին
վնաս մի՛ հասցրեք:
Սաղմ. 104. 15

Մաքուր ամաններ

«Ատելությունը ուտում, կրծում ու մաշում է այն ընդգրկող ամանը», - Զորջ Բուշի հուղարկավորության ժամանակ այս խոսքերն ասել է նախկին ծերակուտական Ալան Միմփսոնը: Փորձելով նկարագրել իր սիրելի բարեկամի ազնվությունը՝ Միմփսոնը հիշում է, թե ինչպես ԱՄՆ-ի 41-րդ նախագահը իր պաշտոնավարման ժամանակ և անձնական հարաբերություններում ատելության փոխարեն սերն ու ուրախություն էր նախընտրում:

Բժշկական հետազոտություններն էլ են ցույց տվել, որ ատելությունը, բարկությունն ու բացասական հույզերը մեծ վնաս են տալիս մեր օրգանիզմին: Բարձրանում է արյան ճնշումը, սիրտը արագ է խփում, հոգին ճնշվում է, և մեր «ամանը» սկսում է մաշվել ու ժանգոտել:

Առակների 10. 12-ում Սողոմոն թագավորն ասում է. «Հակառակությունն ատելություն է գրգռում, բայց սերը ծածկում է ամեն մի ներհակություն»: Այստեղ նշված վեճը տարբեր ցեղերի միջև եղած արյունալի կռիվն է: Նման վեճերի կրակը վրեժխնդրություն է բորբոքում և միմյանց ատող մարդիկ չեն կարողանում կապ ստեղծել: Մինչդեռ Աստծո սերը ծածկում, թաքցնում ու ներում է ամեն սխալ ու չարիք: Սա, իհարկե, չի նշանակում, թե մենք պետք է աչք փակենք սխալների հանդեպ, քաջալերենք չարիք գործողներին կամ էլ թաքցնենք սխալը: Եթե նույնիսկ նրանք չզղջան էլ, մեր զգացումներն աղոթքով հասցնենք Աստծուն: Իմանալով Սիրո Աստծուն՝ «ամենից առաջ իրար նկատմամբ ջերմ սե՛ր ունեցեք, որովհետև սերը ծածկում է մեղքերի շատությունը» (Ա. Պետ. 4.8):

Աղոթք - Ո՛վ Աստված, օգնի՛ր՝ կարողանամ հանձնվել Քո մեծ սիրուն, որը ծածկում է բոլոր մեղքերը և ինձ դարձնում մաքուր մի աման, որտեղ Դու սիրով կրճակվես: Ամեն:

Լցվե՛նք Աստծո սիրով ու մաքուր աման լինե՛նք:

Կարդա՛ր
Ա Պետրոս 4. 7-11

Հակառակությունն ատելություն է գրգռում, բայց սերը ծածկում է ամեն մի ներհակություն:
Առ. 10.12

Դեպի ո՞ր ես ուղևորվում

Հյուսիսային Թաիլանդի «Ուայլդ Բորս» (Վարազներ) ֆուտբոլային թիմի անդամները որոշեցին ուսումնասիրել մոտակա քարայրը: Մեկ ժամ անց, երբ ուզում էին ետ դառնալ. քարայրի մուտքը ջրով փակված էր: Բարձրացող ջրերը նրանց ավելի հեռու քշեցին և մոտ չորս կիլոմետր խորուխյամբ մի տեղում բանտվեցին: Երբ երկու շաբաթ անց նրանք հրաշքով ազատվեցին, շատերն էին զարմանքով հարցնում, թե ինչպես էին այդքան խոր տեղ հասել: Պատասխանը պարզ էր՝ քայլ առ քայլ: Նախան մարգարեն հակառակվեց Դավթին իր հավատարիմ զինվորներից մեկին՝ Ուրիային սպանելու համար: Ինչպե՞ս կարող է «Տիրոջ սրտին հաճելի մարդը» (Ա. Թագ. 13. 14) մարդասպան լինել: Պատասխանը դարձյալ նույնն է՝ քայլ առ քայլ: Դավիթը հենց այնպես, մեկ օրում մարդասպան չդարձավ: Նա աստիճանաբար ընթացավ սխալ ճանապարհով: Մեկ սխալ որոշումը նրան տարավ մեկ այլ սխալ որոշման: Ամեն ինչ սկսվեց ցանկասիրական մի ակնարկով. իր թագավորական զորութունը գործածելով իր տուն հրավիրեց Բերսաբեին: Հետո փորձեց նրա հղիութունը թաքցնելու համար ամուսնուն ուղարկելու փորձը: Երբ Ուրիան մերժեց այցելել իր կնոջը, այն դեպքում, երբ իր ընկերները պատերազմի դաշտում էին, Դավիթը որոշեց ու ծրագրեց նրա սպանությունը: Մենք կարող ենք մարդասպանություն կամ այլ հանցանք չգործել, ոչ էլ փակվել քարայրում, բայց մենք էլ քայլ առ քայլ կամ Հիսուսին ենք մոտենում, կամ էլ մեղքերին ու հանցանքներին: Մեծ խնդիրները միանգամից չեն զարգանում: Նրանք մեզ վրա հարձակվում են կամաց-կամաց, քայլ առ քայլ:

Կարդա՛

Նաթանն ասաց
Դավթին. «Դու ես
այն մարդը»:
Բ. Թագ. 12.7

Աղոթք - Տե՛ր Գիսուս, ուզում եմ վազել դեպի Քեզ: Օգնի՛ր ինձ: Ամեն:

Միշտ որոշումներ ընդունելու վիճակում եմք: Տերը թող օգնի մեզ, որ ճիշտ որոշումներ ընդունենք մեր բարիքի համար:

Շնորհք ցույց տալ

Հովիվ էրիկ Ֆիցջերալդի կինը մահացավ ավտովթարից, երբ հոգնած հրշեջը մեքենան վարելիս քնել էր: Դատավարության ժամանակ դատավորը հետաքրքրվեց, թե էրիկն ուզո՞ւմ է, որ հրշեջին տրվի առավելագույն պատժազափր: Ազավոր էրիկը պատասխանեց. «Ողբերգության և ցավի ժամանակ առիթ է ընձեռվում շնորհք ցույց տալ կամ վրեժ առնել: Ես ընտրում եմ շնորհք ցույց տալը»: Այսպիսով, հովիվը նախընտրեց իր միշտ քարոզած ներողամտության ոգին ցույց տալը: Ի զարմանս իրեն և հրշեջի՝ նրանք ի վերջո նույնիսկ լավ բարեկամներ դարձան: Էրիկը գործնակաֆնում էլ ցույց էր տալիս, որ ինքը Աստծուց շնորհ է ստացել, որ Նա ներել էր իր բոլոր հանցանքները: Նրա արարքները արձագանքն են Միքիա մարգարեի այն բառերի, թե պետք է փառաբանել Աստծուն, որը ներում է մեր գործած մեղքերն ու սխալները (Միք. 7.18): Մարգարեն պատկերավոր լեզվով նկարագրում է, թե Աստված որքա՞ն հեռու է գնում իր ժողովրդին ներելու համար. «Նա պիտի դառնա ու գլխա մեզ, պիտի թաղի մեր մեղքերը եւ ծովի խորքը պիտի նետի մեր բոլոր անօրենությունները» (Հմ.19): Այդ օրը հրշեջը ազատություն ստացավ, և դա պատճառ դարձավ, որ նա մոտենա Աստծուն: Ինչպիսի դժվարություն էլ հաղթահարելու լինենք, իմանանք, որ Աստված մեզ է մոտենում ու սիրո բաց ձեռքերով ողջագուրում է մեզ: Նա «ողորմություն է կամենում»(Հմ.18): Երբ մենք վայելում ենք Նրա սերն ու շնորհքը, Նա մեզ տալիս է մեզ ցավ պատճառողին ներելու զորություն:

Կարդա՛
Միքիա 7. 18-20

Նա պիտի դառնա ու գթա մեզ, պիտի թաղի մեր մեղքերը եւ ծովի խորքը պիտի նետի մեր բոլոր անօրենությունները: Միք. 7.19

Աղոթք - Սիրելի՛ Հայր, մեզ սիրում ես և ուրախանում ես մեզ ներելով: Մեզ պատի՛ր Քո սիրով, որպեսզի կարողանանք Քո շնորհքը ցույց տալ մեր շուրջը գտնվողներին: Ամեն:

Կա՞ մեկը, որին պիտի ներես: Խնդրի՛ր Աստծուն, որ քեզ օգնի :

Կրիայի հետ սպասել

Աշնանը, երբ կրիան զգում է, որ ձմեռը մոտենում է, սուզվում է լճակի հատակը, թաղվում տիղմի ու ցեխի մեջ, քաշվում իր պատյանի մեջ և անշարժանում: Նրա սրտի զարկերը դանդաղում, գրեթե կանգնում են, մարմնի ջերմությունն իջնում է սառչելու աստիճան: Նա դադարում է շնչել և սպասում է: Վեց ամիս կենդանին թաղված է մնում: Նրա օրգանիզմը ոսկորներից կալցիում է արձակում արյան մեջ, և կամաց-կամաց այն նույնիսկ սկսում է ձևափոխվել:

Բայց երբ լճակի ջուրը սկսում է հալվել, կրիան դուրս է գալիս թաքստոցից ու սկսում շնչել: Նրա ոսկորները կրկին սկսում են ձև ստանալ, և նա իր պատյանի վրա զգում է արևի ջերմությունը:

Կրիայի մասին մտածում եմ, երբ կարդում եմ Սաղմոսերգուհի նկարագրությունը Աստծուն սպասելու մասին: Սաղմոսերգուն նույնպես «տիղմի մեջ է», սակայն Աստված լսում է նրան (Սաղմ. 39. 2): Աստված նրան բարձրացնում ու կանգնեցնում է մի հաստատուն ժայռի վրա: Եվ նա երգում է. «Իմ օգնականն ու պաշտպանը դու ես. Աստված իմ, մի՛ ուշացիր» (Հմ.18):

Հնարավոր է, որ դու էլ ես փոփոխություն սպասում, մի նոր ուղղություն քո աշխատանքում, մի նոր հարաբերություն, հրաժարում որևէ վատ սովորությունից կամ էլ ինչ-որ դժվարության հաղթահարում: Կրիան ու սաղմոսերգուն հիշեցնում են մեզ, որ վստահենք աստծուն. Նա լսում է մեզ և կօգնի:

Աղոթք - Հայր, երբեմն դժվար է սպասելը: Սակայն վստահում եմ Քեզ ու Քո փրկությանը: Տու՛ր ինձ համբերություն և թույլ տուր, որ Քո մեծությունն ու փառքը երևան իմ կյանքում: Ամեն:

Կարդա՛

Սաղմ. 39. 1-5, 14-17

Համբերությամբ սպասեցի Տիրոջը, և ճառագայեց ինձ ու լսեց իմ աղօթքը: Սաղմ. 39.1

**Դժվարության ու նեղության մե՞ջ ես:
Սպասի՛ր Տիրոջը և Նա կազատի քեզ:**

Սիրելու համար հերթ չկա

Շնիկս, երբ ուզում է իմ ուշադրությունը գրավել, վերցնում է իմ իրերից մեկն ու անցնում դիմացովս: Մի առավոտ, երբ նստած գրում էի, Մաքսը դրամապանակս վերցրեց ու փախավ: Բայց տեսնելով, որ ես չնկատեցի, վերադարձավ՝ դրամապանակս բերանում, աչքերը լայն բացած, դնչով հպվեց ինձ, պոչը շարժեց և ուզում էր, որ խաղամ իր հետ:

Մաքսի այս վարմունքը ժպիտ առաջացրեց, միաժամանակ հիշեցրեց, որ բավականաչափ ժամանակ չեմ տրամադրում շրջապատումս եղողներին: Հաճախ եմ որոշում ժամանակ անցկացնել ընտանիքիս կամ բարեկամներիս հետ, սակայն ուրիշ բաներ են ինձ զբաղեցնում, ժամանակս խլում ու հանկարծ նկատում եմ, որ օրն անցավ, իսկ Աստծո սերը չարտահայտվեց:

Որքա՛ն մխիթարական է իմանալ, թե մեր Հայրն այնքան մեծ է, որ կարող է մեր բոլոր կարիքները հոգալ և մեզ հետ էլ մտերիմ ժամանակ անցկացնել: Նա իր ժողովրդին խոստանում է. «Դուք մինչև խոր ծերություն էլ որ հասնեք, ես նույնն եմ. ես համբերությունս պիտի տանեմ ձեզ, ե՛ս ստեղծեցի և ե՛ս էլ պիտի հանդուրժեմ, ե՛ս պիտի ընդունեմ ու փրկեմ ձեզ» (Յս. 46.4):

Աստված միշտ էլ ժամանակ ունի մեզ համար: Նա հասկանում է մեր անհրաժեշտությունների բոլոր մանրամասները, անկախ նրանից, թե որքան բարդ ու դժվարին են դրանք: Նա միշտ մոտ է ու ներկա, երբ աղոթքով կանչում ենք իրեն: Մեր Փրկչի սերը վայելելու համար երբեք կարիք չունենք հերթի մեջ սպասելու:

Աղոթք - Տե՛ր, միշտ ժամանակ ունես ինձ համար: Խնդրում եմ օգնիր, որ յուրաքանչյուր վայրկյան ապրեմ Քեզ համար: Ամեն:

**Աստված հոգում է Քո բոլոր կարիքները:
Փա՛նք տուր իրեն ու սե՛ր բաշխիր ուրիշներին:**

Կարդա՛ր
Եսայի 46. 3-10

Ե՛ս ստեղծեցի և ե՛ս էլ պիտի հանդուրժեմ:
Եսայի 46.4

Մեծագույն խորհուրդը

Հավատքով Հիսուսին ընդունելուց առաջ ավետարանի քարոզչությունն էի լսել և դժվարանում էի Նրա ինքնուրույն հարցում: Ինչպե՞ս կարող է Հիսուսը մեղքերի թողություն շնորհել, երբ Աստվածաշունչն ասում է, որ միայն Աստված կարող է ներել մեր հանցանքները: Հայտնի աստվածաբան Փաբերի «Ճանաչել Աստծուն» գիրքը կարդալուց հետո հասկացա, որ ես միայնակ չեմ իմ կասկածներում: Փաբերը գրում է, որ շատ անհավատների համար «խուկապես ցնցող պնդում է այն, որ Հիսուսը մարդեղացած Աստվածն է, որն ունի թե՛ աստվածային, և թե՛ մարդկային բնույթ»:

Բայց հենց սա է այն ճշմարտությունը, որը հնարավոր է դարձնում փրկությունը: Երբ Պողոսը ներկայացնում է Քրիստոսին՝ որպես «աներևույթ Աստծո պատկեր», ասում է. «Նրանով ամեն բան ստեղծվեց, ինչ որ երկնքում է ու ինչ որ երկրի վրա, երևացողները և աներևույթները, թե՛ գահերը, թե՛ տերությունները, թե՛ պետությունները, թե՛ իշխանությունները, բոլոր բաները նրա միջոցով և նրա համար ստեղծվեցին: Եվ նա բոլորից առաջ է ու ամեն բան նրանով է հաստատուն» (Կող. 1. 15-17): Միաժամանակ Նա ամբողջովին մարդ է: Այս ճշմարտության շնորհիվ մենք կարող ենք վստահ լինել, որ Քրիստոսի մահով ու հարությունից Նա ոչ միայն մեր գործած մեղքերի հետևանքը կրեց, այլև վերահաստատեց իր մարդկային բնույթը, որպեսզի մենք ու բոլոր ստեղծվածները կարողանանք հաշտվել Աստծո հետ (Հմ.20-22): Մերո հիանալի մի արարքով Աստվածաշնչում Հայր Աստվածը Հայտնվում է որպես Սուրբ Հոգի Աստծո զորությունը և Որդի՝ կյանքի միջոցով: Նրանք, ովքեր հավատում են Հիսուսին, փրկված են, որովհետև Նա է էմմանուելը, որ նշանակում է Աստված մեզ հետ է: Ալելուիա:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ հայտնվում ես մեզ և Տեր Հիսուսի միջոցով մեզ հաշտեցնում ես Քեզ հետ: Ամեն:

Երբ կոթվարանա հասկանալու Տեր Հիսուսին, դիմի՛ր իմաստության Հորը և Հոգու զորությանը:

Կարդա՛ր
Կող. 1. 15-22

Որն աներևույթ Աստծու պատկերն է՝ բոլոր ստեղծվածներից առաջ ծնված:
Կող. 1.15

Չավակներին առաջնորդել դեպի Աստված

Անաստված մարդը անբարո է համարում, որ ծնողներն իրենց զավակներին կրոն են սովորեցնում՝ որպես ճշմարտություն: Նա նույնիսկ համարձակվում է ասել, թե դրանով այդ ծնողները չարաշահում են նրանց: Այս ծայրահեղական տեսակետների պատճառով որոշ ծնողներ խուսափում են բացահայտորեն քաջալերել իրենց զավակներին հավատքի մեջ: Շատերս մեր երեխաների վրա ազդում ենք նրանց քաղաքական հայացքների ձևավորման, սնվելու կամ մարզական նախընտրությունների մեջ, սակայն որոշակի պատճառներով Աստծո հանդեպ մեր ունեցած համոզմունքի դեպքում փոքր-ինչ այլ կերպ ենք վարվում: Ի հակառակ սրան՝ Պողոս առաքյալը Տիմոթեոսին ուղղված նամակում գրում է. «Մանկությունից սուրբ գրքերը գիտես, որոնք կարող են քեզ իմաստուն դարձնել՝ փրկության համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է»։ Տիմոթեոսը հավատքի եկավ իր մոր օգնությամբ, որը նրան սնուցեց Աստծո խոսքով: Դրանից հետո նա շարունակեց հաստատուն մնալ այն բաների մեջ, որ սովորեց ու հավատաց (Հմ.14): Եթե աստված կյանք է ու ճշմարիտ իմաստության աղբյուրը, ուստի մեզ համար էական է, որ մեր զավակների մեջ Աստծո հանդեպ սեր մշակենք:

Մեր օրերում զանազան միջոցներ կան, որոնք ազդում են մեր զավակների վրա. հեռուստատեսություն, կինոնկար, երաժշտություն, ուսուցիչներ, լրատվություն: Լուռ չմնանք, և մեր վայելած գեղեցկությունն ու շնորհը օգնեն, որ մեր զավակներին առաջնորդենք դեպի Աստված:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ մեր զավակների սրտերը շնորհքով սնուցելու ուրախության և առանձնաշնորհման համար: Ամեն:

Տերը մեզ պարտավորեցրել է մեր զավակներին Իր ճանապարհներով առաջնորդելու:

Կարդա՛ր
Բ Տիմո. 3. 10-15

Դու հաստատուն մնա այն բաների մեջ, որ սովորեցիր... Եվ որ մանկությունից սուրբ գրքերը գիտես: Բ Տիմ. 3.14-15

Բարեկամության նստարանը

ԱՔրիկյան Ջիմբաբվե երկրի պատերազմական վիճակն ու մեծ չափերի հասնող գործազրկությունը հուսահատեցնում են մարդկանց, և նրանք հույսը դնում են «Բարեկամության նստարանի» վրա: Գործազուրկները կարող են գնալ այդտեղ և զրուցել «մեծ մայր» կոչվող տարեց կանանց հետ, որոնք մասնագիտացած են հուսահատ ու ընկճված մարդկանց լսելու և քաջալերելու գործում: «Բարեկամության նստարան» ծրագիրը գործում է այլ վայրերում ևս ինչպես օրինակ Զանզիբարում, Լոնդոնում և Նյու Յորքում: Լոնդոնաբնակ ուսումնասիրողներից մեկը ասել է, թե իրենք ուրախ են այդ ծրագրի արդյունքներով: Իսկ նյույորքցի մի խորհրդական նշել է. «Շատ չանցած՝

Կարդա՛
Ելք 33. 9-11

Տերը Մովսեսի հետ խոսում էր դեմ հանդիման, ինչպես մեկը կխոսեր իր բարեկամի հետ: Ելք 33.11

դու զգում ես, որ այլևս նստարանի վրա չես, այլ ջերմորեն զրուցում ես մեկի հետ, որը պատրաստ է լսել քեզ»: Այս ծրագիրը մարդկանց մղում է, որ ջերմորեն ու զարմանքով խոսակցություն սկսեն ամենակարող Աստծո հետ: Մովսեսը նստարան չէր գրել, այլ մի վրան՝ Աստծո հետ հազորդակցվելու համար և այն կոչել էր «Հանդիպման վրան»: Հետո «Տերը Մովսեսի հետ խոսում էր դեմ հանդիման, ինչպես մեկը կխոսեր իր բարեկամի հետ» (Ելք 33. 11): Մովսեսի սպասավոր Հեսուն վրանից առհասարակ չէր հեռանում՝ կարևոր համարելով Աստծո հետ իր ժամանակ անցկացնելը (Հմ.11): Այսօր մենք այլևս կարիք չունենք վրանային հանդիպման, որովհետև մեր Հայր Տեր Հիսուսը մեզ մոտեցրել է: Ինչպես որ իր աշակերտներին ասաց.«Ձեզ «բարեկամ» կոչեցի, որովհետև ամեն բան, ինչ իմ Հորից լսեցի, ձեզ իմացրի» (Հովհ. 15.15): Այո՛, մեր Աստվածը մեզ է սպասում:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ քաջալերում ես ազնվական խորհուրդներով: Երբ մտահոգությունների մեջ եմք, օգնիր, որ կարողանանք Քեզ դիմել: Ամեն:

Մտահոգություններ ու նեղություններ միշտ կլինեն:

Կարևոր է օգնության համար դիմել Աստծուն:

Չին հողե մի անոթ

Տարիների ընթացքում հին, հողե ամաններ եմ հավաքել, որոնցից ամենասիրածս ամանը պեղված է Աբրահամի ժամանակների մի վայրից: Առանձնապես գեղեցկությունը չի փայլում. ճաքած է, կոտրված, կեղտոտ և նորոգման խիստ կարիք ունի: Բայց ես այն պահում եմ պարզապես հիշելու համար, որ ես էլ հողաշեն մարդ եմ: Թեև տկար ու դյուրաբեկ, սակայն արժեքավոր մի գանձ ունեմ իմ մեջ՝ Տեր Հիսուսը: «Բայց այս գանձն ունենք հողե անոթներում» (Բ. Կորնթ. 4.7):

Պողոսը շարունակում է. «Ամեն բանում նեղված ենք, բայց ճնշված չենք, կարոտ ենք, բայց տարակուսած չենք, հալածված, բայց երեսից չընկած, վայր ընկած, բայց չկորած» (Հմ. 8-9): Տառապանք, վարանում, հալածանք, խորտակում. սրանք այն ճնշումներն են, որ ամանը պետք է կրի: Սակայն մենք չենք տազնապում, հուսահատվում, ու լքվում, և այս հակադարձությունները Հիսուսի տված շնորհներն են, որ մեր մեջ են:

«Հիսուսի մեռնելն ամեն ժամանակ մեր մարմնի մեջ կրում ենք» (Հմ.10): Սա այն կեցվածքն է, որ բնութագրում է Հիսուսին, որը մեռավ և մեռնում է ամեն օր: Սա նաև մեզ է բնութագրում՝ որպես մարդիկ, որ պատրաստ ենք հրաժարվելու մեր անձնական ջանքերից և ամբողջովին վստահելու Նրան, ով մեր մեջ է ապրում: «Որպեսզի Հիսուսի կյանքն էլ մեր մարմնի մեջ հայտնվի» (Հմ.10): Սա է արդյունքը՝ Հիսուսի գեղեցկությունը տեսանելի լինի հին հողե ամանի մեջ:

Աղոթք - Տե՛ր, տկար եմ և դյուրաբեկ: Շնորհակալ եմ, որ ապրում ես իմ մեջ: Ուզում եմ, որ Դու և Քո զորությունը երևաք իմ մեջ: Ամեն:

Մեզանից շատ բան է սպասվում, որ անենք: Որտեղի՞ց ենք ստանալու ուժ և զորություն դրանք կատարելու համար:

Կարդա՛

Բ Կորնթ. 4. 7-12

Բայց այս գանձն ունենք հողե անոթներում, որպեսզի զորության գերազանցությունն Աստուծունը լինի և ոչ թե մեզանից: Բ Կորնթ. 4.7

Ճոխ կյանք

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին՝ 1918-ին նկարիչ Հրեք Էնդսթրոմը պատրաստում էր իր գործերի հավաքածուն և ցանկացավ դրանում ընդգրկել մի կտավ, որը կներկայացներ ճոխություն զգացումը այն ժամանակ, երբ մարդիկ դատարկություն են զգում իրենց կյանքում: Իր այդքան սիրած նկարում պատկերված է մորուքավոր մի մարդ, որը գլխահակ նստած է սեղանի մոտ՝ ձեռքերը փակ՝ աղոթքի դիրքում: Իսկ սեղանին մի գիրք է, ակնոց, մի պնակ թանապուր, հացի մի նկանակ և մի դանակ:

Ոմանք կարող են ասել, թե դա սակավության պատկեր է, բայց Էնդսթրոմի համար ճիշտ հակառակն է: Նա այդտեղ ճոխ կյանք է ներկայացրել, շնորհակալությամբ ապրած կյանք, որ կարող ենք փորձառաբար ունենալ նաև ես ու դու՝ անկախ մեր գտնված վիճակներից: Հովհաննու 10-ում Հիսուսը հայտարարում է բարի լուրը. «Կյանք ունենան և է՛լ ավելին ունենան» (Հմ. 10): Նման բարի լուրին մենք կարող ենք վնաս հասցնել, եթե ճոխությունը հավասարեցնենք առատությունը: Հիսուսի ասած ճոխությունը չափվում է ոչ թե աշխարհի չափանիշներով, հարստության ու կալվածքի նման, այլ սրտով, մտքով, հոգով ու զորությունը, շնորհակալության ոգով, որ Բարի Հովիվը «իր կյանքը տալիս է ոչխարների համար» (Հմ.11) և հոգում է մեր ամենօրյա կարիքները: Ճոխ կյանք է, երբ մարդ Աստծո հետ եղած հարաբերությունը է հրճվում ու հնարավոր է նաև մեզանից յուրաքանչյուրի համար:

Կարդա՛ր
Յովհ. 10. 7-15

Գողը գալիս է միայն գողանալու, սպանելու և կորցնելու:
Յովհ. 10.0

Աղոթք - Բարի՛ Յովիվ, շնորհակալ եմ, որ Քո կյանքը նվիրում ես ինձ: Շնորհակալ եմ նաև խոստումիդ համար, որ պիտի հոգաս իմ ամենօրյա հացի համար: Ամեն:

Երբ հանձնվենք Քրիստոսին, Նա կխոստանա մեզ տալ ճոխ կյանք:

Ձորացնել դողդոջուն ծնկները

Մանուկ հասակում, լսելով Դոթիի Ռամբոյի երգի տողերը «Նա իմ սխալներից անդին նայեց ու տեսավ իմ կարիքը, Նա իմ սխալներից անդին նայեց ու տեսավ իմ ծնկները», զարմացել էի, թե ինչու՞ պետք է Աստված նայի ծնկներին: Մի՞թե դրանց թույլ ու տկար լինելու պատճառով: Գիտեի, թե դողացող ծնկները երկչոտություն նշան են:

Հետագայում իմացա, որ Դոթիի այդ երգը Աստծո անվերապահ սիրո մասին էր ի պատասխան իր եղբայր Հատիի կասկածների, թե իր սխալների պատճառով ինքը սիրված չէր: Դոթին վստահեցնում էր եղբորը, որ Աստված տեսել է իր տկարությունը և այնուամենայնիվ սիրել է նրան:

Աստծո անվերապահ սերը պարզորոշ է Իսրայելի և Հուդայի ժողովրդի շատ տկարացած ծնկներ ունեցողների հետ հարաբերություններում: Աստված պատգամներով իր մոլորված ժողովրդի մոտ է ուղարկում Եսայու նման մարգարեներին: Եսայու 35-ում մարգարեն խոսում է ժողովրդին վերականգնելու Աստծո տված հույսի մասին. «Ո՛ւժ առեք, լքված ձեռքեր ու տկարացած ծնկներ» (Հմ.3): Աստծո ժողովուրդը իր ստացած քաջալերանքի միջոցով ինքն էլ իր հերթին ուրիշներին պիտի քաջալերի: Եսային ասում է. «Մխիթարվեցե՛ք, թուլասի՛րտ մարդիկ, գոտեպնդվեցե՛ք և մի՛ երկնչեք» (Հմ. 4):

Ծնկներդ դողու՞մ են: Խոսի՛ր Երկնավոր Հոր հետ: Նա իր ճշմարիտ խոսքով ու իր ներկայությունը կզորացնի դողացող ծնկներդ: Եվ այն ժամանակ դու էլ պետք է կարողանաս ուրիշներին քաջալերել:

Կարդա՛ր
Եսայի 35. 1-4

Ո՛ւժ առեք, լքված ձեռքեր ու տկարացած ծնկներ: Ես. 35.3

Աղոթք - Հայր, Քո զորության ու շնորհի կարիքն ունեմ:
Ամեն:

Բնական է, որ տկարություն ունենաս:

Վստահի՛ր Աստծուն և զորության համար Նրան դիմի՛ր:

ԳՆՈՒՄ Է, ԳՆՈՒՄ Է, ԳՆԱԳ

Արվեստագետ Բենքսին մի չար կատակ արեց, երբ իր նկարներինց մեկը՝ «Փուչիկով աղջիկը», Լոնդոնի աճուրդի տանը վաճառվեց մեկ միլիոն անգլիական լիրայով: Աճուրդ անցկացնողը հազիվ էր հայտարարել՝ Վաճառված է, երբ մի ձայն լսվեց ու նկարը սահեց - ընկավ շրջանակի տակ դրված ջարդիչ մեքենայի մեջ: Հետո Բենքսին իր գլուխգործոցի աճուրդի մասնակիցների սարսափած դեմքերի լուսանկարը տեղադրեց Թվիթերում՝ հետևյալ գրությամբ. «Գնում է, գնում է, գնաց»:

Այսպիսով Բենքսին լավ զվարճացավ ևս մեկ անգամ խաղ խաղալով հարուստների գլխին: Չնայած դրա կարիքը չկար, որովհետև հարուստն արդեն

խսկ շատ կեղծիքներ ունի: Աստված ասում է. «Եթե ունևոր չես, մի՛ ձգտիր հասնել հարստին, այլ քո իմաստությամբ հեռացի՛ր նրանից: Հենց որ աչքդ տնկես մի բանի վրա, այն իսկույն կչքանա. հարստությունն արծվի թևեր է շինում իր համար և վերադառնում է իր նախնիների տունը» (Առ. 23.4-5): Փողը կարող է մեզ միայն ինչ-որ չափով ապահովություն տալ: Տքնաջան աշխատում ենք այն ունենալու համար, բայց այն կորցնելու ձևերը շատ են: Վիճակախաղում կարող ենք հաջողություն չունենալ, դրամի արժեզրկումը կփոշիացնի ունեցածը, վարձավճարներն ենք մոծում, գողերն են տանում կամ կրակն ու հեղեղն են ոչնչացնում: Նույնիսկ եթե հաջողվի մեր ունեցած փողը պահել, այն ծախսելու ժամանակն է գալիս ու անցնում: Աչքդ թարթի՛ր ու կտեսնես, որ գնում է, գնում է ու գնաց:

Քո կյանքը Հիսուսին հանձնի՛ր, միայն Նա կարող է Քեզ պահել:

Աղոթք - Հայր, օգնի՛ր, որ կարողանամ իմ անապահովությունները Քեզ հանձնել և Քո բարությանն ու հավատարմությանը վստահել: Ամեն:

Անապահո՞վ ես գգում: Հանձնվի՛ր Տիրոջը և Նա կհոգա քո մասին:

Կարդա՛ր
Առակներ 23. 1-5

Դեռևս որ աչքդ տնկես մի բանի վրա, այն իսկույն կչքանա: Առ. 23.5

Յամակ ուշադրություն

Ճամանակակից տեխնոլոգիաները զրավում են մեր ամբողջ ուշադրությունը: Համացանցի «հրաշքը», որ կարելի է օգտագործել մեր բջջային հեռախոսներով, մեզ հնարավորություն է տալիս ամեն տեսակի գիտելիք ունենալ մեր ափի մեջ: Սակայն շատերի համար այս հնարավորությունը շատ թանկ կարող է արժենալ: Լինդա Սթոնը, անդադադառնալով մեր ժամանակներում շատ արդիական ամեն ինչ շուտ իմանալու և ոչինչ բաց չթողնելու մղումին, այն կոչում է «շարունակական մասնակի ուշադրություն»:
Նման վիճակը նաև որոշակի անհանգստություն է առաջացնում:

Պողոս առաքյալն ուներ անհանգստության զանազան պատճառներ, բայց գիտեր, որ մեր հոգիները իրենց հանգիստը գտնում են Աստծո մեջ: Այդ պատճառով նա գրե՛ց նոր հավատացյալներին, որոնք ղեմացել են հալածանքներին (Ա. Թես. 2. 14) և հորդորեց նրանց. «Միշտ ուրախ եղեք, անդադար աղոթք արե՛ք, ամեն բանով գոհացե՛ք» (5.16-18):

«Անդադար աղոթելը» առաջին հայացքից կարող է դժվար թվալ, բայց մեր հեռախոսները որքա՛ն հաճախ ենք ստուգում: Ի՞նչ կլինի, եթե Աստծո հետ խոսելու, շնորհակալություն հատնելու, որևէ բան խնդրելու կամ ուղղակի իրեն փառաբանելու պարագայում էլ ունենանք այդ նույն մղումը: Եվ որ ամենակարևորն է՝ մեզ հարկավոր որևէ բան խնդրելու միտքը փոխենք այն գիտակցությամբ, որ Աստված գիտե մեր բոլոր կարիքները, և աղոթքով մեր անձերը հանգստացնենք Աստծո ներկայության մեջ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ հրավիրում ես Քեզ հետ հաղորդակցվելու և մեզ շարունակ լսելու՝ մեր աղոթքներով ու փառաբանություններով: Ամեն:

Նոր տեխնոլոգիաները խանգարո՞ւմ են քեզ: Դրանց ազդեցությունից դուրս գալու համար կենտրոնացի՛ր Աստծո վրա:

Կարդա՛

Ա Թես. 5. 12-28

Միշտ ուրախ եղեք, անդադար աղոթք արե՛ք, ամեն բանով գոհացե՛ք: Ա Թես. 5.16-18:

Գեղեցկության ժամանակը

Հունվարյան մի առավոտ արթնանալով՝ ակնկալում էի տեսնել ձմռան սովորական տեսարանը. ձյան կարկատաններից դուրս ցցված թառամած խոտեր, գորշ երկինք և տերևաթափ ծառեր: Սակայն այդ գիշեր անբնական մի բան էր պատահել. սառնամանիքը ամեն ինչ սառույցով էր ծածկել: Եվ ամենօրյա անկենդան ու ընկճող տեսարանը արևի ճառագայթների ներքո դարձել էր փայլուն ու գեղեցիկ: Ես հիացած էի: Երբեմն մեր հարցերին նայում ենք առանց հավատքի: Ընդունում ենք ամեն առավոտ մեզ ուղեկցող ցավն ու հուսահատությունը՝ անտեսելով մի նոր բանի հնարավորությունը: Չենք սպասում, որ Աստծո զորությունը հնարավոր է բուժում, զարգացում և

Կարդա՛ր
Եսայի 61. 1-7

Մոխրի փոխարեն արժանացնելով ուրախության օծման յուղի: Ես. 61.3

հաղթանակ: Սակայն Աստվածաշունչն ասում է, որ Աստված մեր օգնականն է նեղության պահին: Նա նորոգում է կոտրած սրտերն ու մարդկանց ազատում ստրկությունից: Մխիթարում է սգավորին՝ «մոխրի փոխարեն արժանացնելով ուրախության օծման յուղի, վհատ հոգու փոխարեն՝ փառքի զգեստի» (Ես. 61.3):

Աստված ոչ թե միայն ուզում է մեզ ուրախացնել դժվարություններ հաղթահարելիս, այլև Ի՛նքն է մեր հույսը նեղության ու փորձության պահին: Նույնիսկ մեր վերջնական մխիթարությունը գտնելու համար երկնքին սպասելիս, Աստված մեզ հետ ներկա է, քաջալերում է մեզ, հաճախ նաև հպանցիկ ակնարկով ցույց տալիս Իր ով լինելը: Կյանքում մեր անցած ճանապարհին կարող ենք հասկանալ Սուրբ Օգոստինոսի խոսքը. «Իմ խոր վերքի մեջ տեսա Քո փառքը, որն ինձ հիացրեց»:

Աղոթք - Հավատարիմ Աստված, հավանք տուր ինձ, որ կարողանամ այս օրը ապրել, և օգնիր, որ Քո գործողությունները տեսնեմ նեղությունների հաղթահարելիս: Ամեն:

Նեղություններ ու տագնապներ միշտ էլ կունենանք. բայց Աստված ներկա է մեզ վերցնելու ու մխիթարելու համար:

Սուրբ կոչված կրակը

Մի քանի տարվա երաշտից հետո Հարավային Կալիֆոռնիայի սաստիկ հրդեհները մարդկանց առիթ տվեցին մտածելու, որ դրանք Աստծո գործերն են: Այս միտքը ավելի հաստատվեց, երբ մի լրատվամիջոց հրդեհներից մեկին անվանեց Սուրբ կրակ: Շրջանին անձանոթ մարդիկ չգիտեին, որ դա վերաբերում էր միայն Հոլի Զիմ Բենյըն անունով հայտնի տեղանքին: Իսկ ո՞վ էր այդ Հոլի Զիմը: Տեղական պատմության համաձայն՝ դա 19-րդ դարի մի շատ անհավատ ու խոժոռ հաշվապահ էր, որի անունով դրանք հեղհորեն կոչել էին շրջանը:

Հովհաննես Մկրտչի «Սուրբ Հոգով ու կրակով» մկրտելու նկարագրությունը նույնպես ունի իր հետ առնչվող պատմություն ու բացատրություն (Ղուկ. 3.16): Ետ նայելով՝ Հովհաննեսը մտածում էր Փրկչի մասին և ակնարկում էր Մաղաքիա մարգարեի նախատեսած կրակը (3.1-3, 4.1): Սակայն միայն Աստծո Հոգին՝ հովով ու կրակով Հիսուսի աշակերտների վրա գալուց հետո Մաղաքիայի ու Հովհաննեսի խոսքերն իրենց իմաստն ստացան (Գործք. 2. 1-4):

Հովհաննեսի նախատեսած կրակը ակնկալվածը չէր: Որպես Աստծո ճշմարիտ արարքներից մեկը՝ նա եկավ հայտարարելու այլ Փրկչի ու Սուրբ կրակի մասին: Հիսուսի Հոգու մեջ նա հայտնաբերեց ու սպառեց մեր մարդկային ապարդյուն ջանքերը՝ տեղ տալով Հոգու տված սիրո, խաղաղության, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմության, հեղուկության և ժուժկալության պտղին (Գաղ. 5.22-23):

Աղոթք - Երկնավոր Հայր, խնդրում եմք Սուրբ Հոգու հանդեպ մեր ունեցած վախերը փոխարինիր սիրո, ուրախության և խաղաղության կրակով: Ամեն:

Աստված ուզում է քեզ օծել Իր Հոգու Սուրբ կրակով:
Պատրաստ ես:

Կարդա՛ր
Ղուկաս 3. 15-18

Նա ձեզ Սուրբ
Հոգով ու կրակով
կմկրտի: Ղուկ. 3. 16

Աստվածային սեր

Մի օր Դոմինիկյան Հանրապետության Սանտո Դոմինիկո քաղաքի աղքատ շրջաններից մեկը այցելեցի: Տները կառուցված էին թիթեղից, որոնց վրա կախված էին էլեկտրական լարեր: Առիթ ունեցա ընտանիքներում լինելու, մարդկանց հետ զրուցելու այն մասին, թե եկեղեցին ինչ օգնություն է ցուցաբերում գործազրկությունը, թմրամոլությունն ու այլ դժվարությունները հաղթահարելու համար:

Նրբանցքում գտնվող տներից մեկի խարխուլ աստիճաններով բարձրանալով մտա մի փոքրիկ սենյակ՝ հանդիպելու մորն ու իր որդուն: Սակայն հաջորդ պահին մեկը արագ մոտեցավ ու ասաց, որ հեռանանք այդտեղից: Ըստ երևույթին չարագործների ինչ-որ խումբ էր հավաքվում՝ մեր դեմ որոգայթ լարելու:

Մեկ ուրիշ շրջան էլ գնացինք, որտեղ այդ կարգի որևէ դժվարություն չունեցանք: Հետո հասկացանք, թե ինչու: Մարդկանց տներն այցելելիս, մեկը դբսում հսկում էր: Եկեղեցու շնորհիվ նրա դուստրը կրթություն ու սնունդ էր ստանում: Քանի որ հավատացյալները օգտակար էին լինում աղջկան, ինքն էլ մեզ էր պաշտպանում:

Լեռան քարոզի մեջ Հիսուսը սիրո մի նոր, որևէ այլ բանի չհամապատասխանող չափանիշ ներկայացրեց: Այնպիսի սեր, որն ընդունի ոչ միայն «արժանին», այլև անարժանը (Մատթ. 5. 43-45), նույնիսկ նրանք, ովքեր չեն կարող սիրել մեզ ու չեն էլ սիրի (հմ. 46-47): Սա աստվածային, կատարյալ սերն է, այնպիսի սերը, որն օրհնում է բոլորին:

Աղոթք - Տե՛ր, սերդ լցրու՛ իմ մեջ, որպեսզի ես էլ այն ուրիշների մեջ լցնեմ: Նույնիսկ նրանց, ովքեր այն չեն փոխադարձելու: Ամեն:

Մարդկային ու աստվածային սիրո մեջ մեծ տարբերություն կա: Ուրիշին սիրի՛ր աստվածային սիրով ու փառավորի՛ր Տիրոջը:

Կարդա՛ր
Մատթ. 5. 43-46

Եթե ձեզ սիրողներից սիրեք, ի՞նչ վարձ ունեք: Մատթ. 5.46

Ինչպե՞ս կարելի է ծիշտ ուղու վրա մնալ

Իբրև աշխարհի ամենաարագ կույր վագորդ՝ ԱՄՆ-ի հաշմանդամների խմբի անդամ Դեյվիդ Բրաունը իր հաջողութունները վերագրում է Աստծուն, մոր խրատներին և վագբի իր ղեկավարին՝ նախկին մարզիկ Ջերոմ Էվլերին: Վերջինը մրցումների ժամանակ Բրաունի մատներին կապած թելերի օգնությամբ խոսքերով ու հպումներով առաջնորդում էր նրան: Բրաունն ասում է. «Ամեն ինչ կախված է իր տված ուղղությանը հետևելուց, այն բանից, թե 200 մետր վագբուղու կորացող հատվածում ինչպես պետք է վագեմ: Մրցման ժամանակ մենք հաղորդակցվում ենք ոչ միայն խոսքով, այլև ֆիզիկական ցուցումներով»: Մեր կյանքի մրցումներում մենք օժտված ենք երկնային շնորհով: Մեր օգնականը՝ Սուրբ Հոգին, առաջնորդում է մեր քայլերը, երբ հետևում ենք Իրեն: Հովհաննեսն ասում է. «Այս բաները ձեզ գրեցի ձեզ մոլորեցնողների մասին» (Ա.Հովհ. 2.26): «Այն օծումը, որ դուք նրանից ընդունեցիք, ձեր մեջ է բնակվում: Եվ դուք պետք չունեք, որ մեկը ձեզ սովորեցնի, այլ ինչպես այն օծումը ձեզ սովորեցնում է ամեն բան» (Հմ.27):

Հովհաննեսն այս իմաստությունը շեշտեց իր օրերում ապրող բոլոր հավատացյալների համար, որոնք դիմագրավում էին Հորն ուրացող և Հիսուսի Մեսիա լինելը չընդունող «Նեոխն» (Հմ.22): Մենք էլ ենք նման ուրացումներ հաղթահարում: Սակայն Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ, որ հետևենք Հիսուսին և վստահենք Նրա տված առաջնորդությանը:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, մեր սրտերը ներդաշնակի՛ր Քո Սուրբ Հոգու առաջնորդությամբ և օգնի՛ր մեզ, որ կարողանանք գալ դեպի Քո տված ճշմարտությունը և ոչ թե սուտ բաները: Ամեն:

Պետք է ներդաշնակվել Ա.Հոգու առաջնորդությանը, որպեսզի կարողանանք էլ ավելի լավ լսել Նրա ձայնը:

Կարդա՛ր
Ա Հովհ. 2. 18-27

...ինչպես այն օծումը ձեզ սովորեցնում է ամեն բան:
Ա Հովհ. 2.27

Մըրսիի ողբը

Հայրն իր ՁԻԱՀ հիվանդությունը կախարդություն էր վերագրում: Երբ նա մահացավ, նրա տասը տարեկան աղջիկը՝ Մըրսին, ավելի մտերմացավ մոր հետ: Սակայն մայրն էլ հիվանդացավ ու երեք տարի անց մահացավ: Դրանից հետո Մըրսիի մեծ քույրը մեծացրեց իր հինգ քույրերին: Այդ ժամանակ էլ Մըրսին սկսեց գրել իր ցավերի մասին:

Երեմիա մարգարեն նույնպես ցավերի օրագիր էր պահում: Ողբի գրքում նա գրում էր Բաբելոնի բանակի ձեռքով Հուդայի երկրում կատարված վայրագությունների մասին: Մարգարեի սիրտը ցավում է հատկապես մանուկ զոհերի համար: «Իմ ժողովրդի դստեր կործանման համար արցունք թափելուց աչքերիս լույսը խավարեց, որովայնս տակնուվրա եղավ, փառքս լուծվեց հողի մեջ, քանզի քաղաքի բոլոր փողոցներում մեռնում են ծծկեր մանուկները» (2.11): Հուդայի ժողովուրդը Աստծուն անտեսելու մի պատմություն ունի, որի գինը վճարում էին նրա մանուկները. «Նրանք հաց ու գինի էին խնդրում իրենց մայրերից, մինչ քաղաքի մեջ ընկած ու ցրված՝ մեռնում, իրենց հոգիներն էին ավանդում» (Հմ.12): Կարելի էր ակնկալել, որ Երեմիան նման տառապանքների դիմաց պետք է մերժեր Աստծուն: Բայց հակառակը, նա վերապրողներին խնդրում է. «Քո սիրտը, ինչպես ջուր, թափի՛ր Տիրոջ առաջ, ձեռքդ վե՛ր կարկառիք քո մանուկների հոգիների համար, որոնք սովամահ էին լինում քո երթևեկության բոլոր ճանապարհներին» (Հմ.19): Լավ է Մըրսիի ու Երեմիայի նման մեր սրտերը Աստծո առաջ բացել: Ողբալը մեր մարդկային լինելու էական մասն է: Նույնիսկ եթե Աստված Ինքն է արտոնում նման ցավ, Նա պատրաստ է մեզ հետ ցավելու:

Աղոթք - Տե՛ր, ցավում եմ իմ այս...նեղության համար: Դու տեսնում ես սուգս: Խնդրում եմ այսօր ցույց տուր Քո զորությունն իմ կյանքում: Ամեն:

Մեր կյանքում անխուսափելի են ցավերն ու վշտերը: Ուստի արձանագրի՛ր դրանք ու հավատքով Տիրոջը տա՛ր:

Կարդա՛ր Ողբ 2. 10-13, 18-19

...որովայնս տակնուվրա եղավ, փառքս լուծվեց հողի մեջ, քանզի քաղաքի բոլոր փողոցներում մեռնում են ծծկեր մանուկները: Ողբ. 2.11

Կարևոր է, թե մենք ինչ ենք անում

Հուսահատված, գլուխս առա ձեռքերիս մեջ ու հառաչեցի. «Չգիտեմ՝ ինչպե՞ս եմ կարողանալու այս բոլորն անել» և ընկալուչի այն կողմում լսեցի ընկերոջս ձայնը. «Ինքդ քեզ մի քիչ վարկ կտաս և շատ բան կկարողանաս անել»: Հետո սկսեց թվարկել իմ անելիքները. փորձում էի առողջ ապրելակերպս պահել, աշխատել. բարձրագույն կրթությանս մեջ առաջադիմել, գրել և Աստվածաշնչի սերտողության մասնակցել: Այդ ամենն ուզում էի անել Աստծո համար, բայց ավելի կենտրոնացած էի ի՛նչ և ոչ թե ինչպե՛ս անելուս վրա, և փորձում էի շատ բաներ անել:

Պողոսը Կողոսայի եկեղեցուն հիշեցրեց, որ նրանք պետք է այնպես ապրեն, որ իրենց կյանքով Աստված փառավորվի: Եվ այդտեղ կարևորը ոչ թե նրանց ի՛նչ անելն էր, այլ ինչպե՛ս անելը: Նրանք իրենց գործերը պետք է անելին «ողորմասիրտ գթածությամբ, քաղցրությամբ, խոնարհությամբ, հեզությամբ ու համբերատարությամբ» (Կող. 3.12), «իրար ներելով և այդ ամենի վրա սերը հազնելով» (Հմ.13-14) և «Տեր Հիսուսի անունով» (Հմ.17):

Կարևոր է, թե մենք ինչ ենք անում, բայց ավելի կարևոր է, թե ինչպե՞ս, ինչո՞ւ և ո՞ւմ համար ենք անում: Մենք կարող ենք ընտրել. ստիպողաբա՞ր անել մեր գործերը, թե՞ Աստծոն պատիվ բերելու համար և խնդրել, որ Տեր Հիսուսը մեր արածների իմաստը ավելացնի դրանց վրա: Երբ այս ձևը որդեգրենք, գոհացում կունենանք:

Աղոթք - Տե՛ր, ների՛ր ինձ, երբ ինքս ինձ ստիպում եմ որևէ բան անելիս : Օգնի՛ր, որ կարողանամ ձգտել ամեն բան Քո փառքի համար անելու: Ամեն:

Ստածի՛ր, թե ինչու՞ ես անում ամեն բան: Ինքդ քեզ գոհացնելու՞, թե՞ Աստծուն փառավորելու համար:

Կարդա՛ր
Կող. 3.12-17

Ինչ գործ էլ որ անեք, ամեն բան Աստծու փառքի համար արեք: Ա Կորնթ. 10.31

Գովաբանությունը բարձրացրու՛

Առհասարակ տեսնելով, թե որն է քարտեզի կենտրոնը, կարելի է կռահել, թե որտեղ է այն գծված: Մենք միշտ մտածում ենք, որ մեր տունն է աշխարհի կենտրոնը, և այդ կետը դնելով ուղիղ մեջտեղում, սկսում ենք այդ կետից գծել: Մոտակա բնակավայրերը կարող են հիստուն կմ դեպի հյուսիս լինել, կամ ավտոմեքենայով կես օրվա ճանապարհ դեպի հարավ, այդ ամենը նկատի են առնվում հենց մեր գտնված տեղից: Սաղմոսներն իրենց «քարտեզը» գծում են՝ սկսելով Հին կտակարանի Աստծո երկնային բնակավայրից: Հետևաբար սուրբգրային աշխարհագրության կենտրոնը Երուսաղեմ քաղաքն է:

Կարդա՛
Սաղմոս 47

Ստացանք ողորմությունը, Աստված, քո ժողովրդի մեջ:
Սաղմ. 47.10

47-րդ սաղմոսը Երուսաղեմի փառքի մասին պատմող սաղմոսներից մեկն է: «Աստծու քաղաքում, իր սուրբ լեռան վրա մեծ ցնծությամբ ցնծում է ամբողջ երկիրն հաստատարմատ» (Հմ.2,3): Որովհետև «Աստված հայտնվեց իր տաճարում» և «դրա հիմքերը զցեց հավիտյան» (Հմ.4.9): Աստծո համբավը սկսվում է Երուսաղեմի տաճարում և տարածվում «ողջ տիեզերքում» (Հմ.11):

Եթե այս խոսքերը Երուսաղեմում չես կարդում, ուրեմն քո տունը սուրբգրային աշխարհի կենտրոնը չէ: Բայց այն նույնպես չատ կարևոր է, որովհետև Աստված չի հանգստանալու, մինչև իր փառքը «ողջ տիեզերքում» (Հմ.11) չտարածվի: Ուզու՞մ ես մասնակցել այն ձևերին, որոնցով Աստված հասնում է իր նպատակներին: Ամեն շաբաթ Աստծո ժողովրդի հետ պաշտի՛ր իրեն և բացահայտորեն յուրաքանչյուր օրդ ապրի՛ր իր փառքի համար:

Աղոթք - Հայր, ինձ օգտագործի՛ր Քո համբավը մինչև երկրի ծայրերը տարածելու համար: Ամեն:

Ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով ես ուզում Աստծո համբավը տարածել ամբողջ տիեզերքում:

Մենք հող ենք

Երիտասարդ հայրիկի փոքրիկը գրավեց շուկայում եղողներին ուշադրությունը, երբ սկսեց գոռալ. «Պաղպաղակ, պաղպաղակ»: «Շատ լավ,-ասաց հայրիկը,- բայց նախ մայրիկի համար մի բան ենք անելու, հետո»: Տղան շարունակեց գոռալ՝ պաղպաղակ: Երբ կոկիկ հագնված մի կին մոտեցավ նրանց և իմացավ երեխայի գոռալու պատճառը, ժպտալով ասաց. «Հավանաբար բալիկը ինչ-որ բանից նյարդայնացել է: Մի՛ մոռացեք, որ նա փոքր է, և պետք է ավելի համբերատար լինել»:

Իրավիճակը հրաշքով չլուծվեց, բայց այդպիսի մի դադարի կարիք հայրն ու որդին ունեին:

Այս իմաստուն կնոջ խոսքերի արձագանքը լսվում է 102-րդ սաղմոսում, երբ Դավիթը գրում է Տիրոջ մասին և ասում. «Գթասիրտ, ողորմած է Տերը, համբերատար ու ողորմաշատ (Հմ.8): Ապա շարունակում է. «Ինչպես որ մի հայր գլթում է իր որդիներին, այնպես Տերը պիտի գլթա իրենից երկյուղ կրողներին» (Հմ.13): Աստված՝ մեր հայրը «գիտե կազմվածքը մեր եւ հիշում է, որ հող ենք մենք» (Հմ.14): Գիտե, որ փոքր ենք ու դյուրաբեկ:

Մենք հաճախ ենք ձախողվում ու ճնշվում այս աշխարհից մեր ստացածներով: Բայց որքան հիանալի է իմանալ մեր Հոր համբերություն, հարատև ներկայություն և անպատմելի սիրո մասին:

Աղոթք - Շնորհակալ ենք, որ մեր համբերատար ու միշտ մեզ հետ եղող Հայրն ես, որ հիշում է, թե ո՞վ և ի՞նչ ենք մենք: Ամեն:

Կարդա՛ր
Սաղմոս 102. 8-14

...հիշում է, որ հող ենք մենք:
Սաղմ. 102.14

Մենք էլ մանուկների ցման կարող ենք զայրանալ ու բորբոքվել: Բայց ունե՛նք մի Հայր, որը միշտ համբերատար լսում ու սիրում է մեզ:

Միասին Նրա մեջ

1994 թվականին Ռուանդայում հուլիսի 25-ին սկսվեցին Մեթուսիսի թուլիսիները: Այդ սարսափելի ցեղասպանության ժամանակ եպիսկոպոս Ջեֆրի Ռուբոուսիսը իր կնոջը՝ Մերիին խնդրեց, որ կարեկցի այն կանանց, որոնց սիրելիները սպանվել էին: Մերին, որի հարազատներից շատերը նույնպես զոհ էին զնացել սպանողին, ասաց. «Այս պահին իմ միակ ցանկությունը ողբալն ու լալն է»: Որպես իմաստուն առաջնորդ և սիրող ամուսին՝ եպիսկոպոսը պատասխանեց. «Մերի, հավաքի՛ր կանանց ու նրանց հետ ողբա՛»: Նա հասկանում էր, որ կինը պատրաստ էր իր ցավով այլոց հետ կիսվելու:

Կարդա՛
Հոռմ. 12. 9-16

Ուրախացողների հետ ուրախացե՛ք և լացողների հետ լացե՛ք: Հոռմ. 12.15

Եկեղեցին՝ Աստծո ընտանիքը, այն տեղն է, որտեղ կարող ենք կիսվել մեր կյանքի լավ ու վատ բաներով: Նոր Կտակարանում գործածված «իրար» բառը ցույց է տալիս, թե մենք որքան կախված ենք միմյանցից: «Եղբայրասիրության մեջ իրար նկատմամբ զթասիրտ եղե՛ք, պատիվ տալու մեջ իրարից առաջ անցե՛ք: ... Իրար նկատմամբ նույն խորհուրդն ունեցե՛ք» (Հոռմ.12. 10,16): Միմյանց հետ մեր կապվածության չափը հատկապես ներկայացված է 15-րդ համարում. « Ուրախացողների հետ ուրախացե՛ք և լացողների հետ լացե՛ք»:

Չնայած ցեղասպանության զոհերի հարազատների ցավի մեծությունը անչափելի է, սակայն հնարավոր է այն անձնապես ու իրապես զգալ:

Աղոթք - Շնորհքի Աստված, ցերի՛ր ինձ, երբ պատրաստ չեմ լինի կիսել ուրիշների ցավերը: Օգնի՛ր, որ կարողանամ կապի մեջ լինել Քո եկեղեցու մյուս անդամների հետ: Ամեն:

Ցավ ու վիշտ միշտ էլ կլինի: Պատրաստ լինենք մեր ցավերը ուրիշների հետ կիսելու, ինչպես նաև արտոնելու, որ ուրիշներն էլ մեզ ցավակից լինեն:

Մոտ հարևաններ

Մեր շրջապատում էլ, ինչպես այլ տեղերում, համացանցային մի կայք կա, որն օգնում է կապ հաստատել հարևանների միջև: Այդպես համայնքի անդամները վտանգի պահին զգուշացնում են միմյանց, երբ լեռնային առյուծ են նկատում, կամ հրդեհի ժամանակ տարհանման հրաման է լինում և այլն: Ապացուցված է, որ այն տեղեկատվական լավ միջոց է հատկապես կորած կենդանիներին գտնելու գործում: Մի խոսքով, օգտագործելով համացանցի հնարավորությունը, հարևանները միմյանց հետ կապվում են ներկա արագընթաց իրավիճակում:

Սողոմոն թագավորի ժամանակ էլ միմյանց հետ հաղորդակցվելը կարևոր էր: Ընտանեկան կապերն իսկապես օգտակար են և կարող են աջակցության լավ միջոց լինել, -ասում է Սողոմոնը և մատնանշում բարեկամի դերը հատկապես «ձախորդության պահին» (Առ. 27.10): Ազգականները կուզենան իրենց ընտանիքներին օգնության ձեռք մեկնել դժվարության պահին, սակայն եթե հեռու են ապրում, շատ բան չեն կարողանա անել: Իսկ դրացիները, մոտ լինելով, կարող են հասնել և օգտակար լինել:

Քանի որ ժամանակակից տեխնոլոգիաները դյուրացրել են աշխարհի տարբեր անկյուններում մեր սիրելիների հետ կապը, մեզ մոտ բնակվողներին կարող ենք նաև անտեսել: Մակայն մեր ունեցած հնարավորություններն օգտագործենք մեր շրջապատում եղած մարդկանց հետ հարաբերվելիս:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ տվել ես դրացիներ, որպեսզի հոգատար լինենք նրանց հանդեպ:

Կարդա՛ր
Առակներ 27. 1-10

...մոտիկ բարեկամը
լավ է հեռու տեղ
բնակվող եղբորից:
Առ. 27.10

**Նեղության ու կարիքի պահին դրացին է օգնության
հասնում: Լավ ու մտերիմ դրացիներ լինենք:**

Ճերմակ ձյան հրաշքը

17-րդ դարում Իսահակ Նյուտոնը, որպեսզի ուսումնասիրեր, **1**թե ինչպես է լույսն օգնում մեզ գույները տեսնել, օգտագործեց մի պրիզմա: Նա տեսավ, որ երբ լույսն անցնում է առարկայի միջով, ցույց է տալիս այդ առարկայի յուրահատուկ գույնը: Առանձին սառցաբյուրեղը կիսաթափանցիկ է թվում: Ձյունը կազմված է բազմաթիվ սառցաբյուրեղներից, և երբ լույսը անցնում է դրանց միջով, այն սպիտակ է երևում:

Աստվածաշունչը մեկ ուրիշ բան էլ է նշում, որն առանձնահատուկ գույն ունի. մեղքը: Եսայի մարգարեի միջոցով Աստված նկատում է Հուդայի ժողովրդի մեղքերը, դրանց գույնը համեմատում «արյան» ու «որդան կարմիրի» հետ: Եվ խոստանում է, որ դրանք «Չյան պես ճերմակ կդարձնի» (Հմ.18): Ինչպե՞ս: Հուդան պետք է ետ դառնա իր սխալ ճանապարհից և Աստծո ներումը խնդրի:

Ենթահակալություն Տեր Հիսուսին, որ ունենք Աստծո ներումի մշտական կարիքը: Հիսուսն Իրեն ներկայացրեց որպես «աշխարհի լույս» և ասաց, որ Իրեն հետևողները «խավարի մեջ չեն գնա, այլ կյանքի լույսը կընդունեն» (Հովհ. 8.12): Երբ խոստովանենք մեր մեղքերը, Աստված կների մեզ, և մենք աշխարհը կտեսնենք խաչված Հիսուսի լույսի միջից: Սա նշանակում է, որ Աստված մեզ կտեսնի այնպես, ինչպես Հիսուսին է տեսնում՝ անարատ:

Պետք չէ մեր գործած սխալների համար ամոթի ու հանցանքի զգացումով տառապել: Դրա փոխարեն հարկավոր է կառչել Աստծո ներումի ճշմարտությանը, որը մեզ «ձյան պես ճերմակ» կդարձնի:

Աղոթք - Երկնավոր Զայր, շնորհակալ եմք ձրիաբար մեզ շնորհած ներումիդ համար: Ամեն:

Բոլորս էլ մեղավոր ու հանցավոր ենք: Սակայն գոհութուն Աստծո, որ Քրիստոսով ներում է մեզ:

Կարդա՛ր Եսայի 1. 15-20

Եթե ձեր մեղքերը արյան պես կարմիր են, պապ ես ձյան պես ճերմակ կդարձնեմ: Եսայի 1.18

Մեր վանդակից ազատված

Երբ գրող Մարտին Լեյբդը դուրս էր գալիս քայլելու, սովորաբար հանդիպում էր չորս շների հետ զբոսնող մի մարդու: Շներից երեքը վազվզում էին բաց դաշտում, իսկ մեկը մնում էր տիրոջ մոտ ու վազում էր միայն մի փոքր տարածքում: Մի օր նա հարցրեց շան այդ տարօրինակ պահվածքի մասին: Տերը բացատրեց, որ դա փրկարար շունն է, որը գրեթե ողջ կյանքն անցկացրել է փակ վանդակի մեջ և շարունակում է իրեն այդպես զգալ:

Աստվածաշունչը հայտնում է, որ մենք էլ կալանված ու անհույս ենք, եթե մեզ Աստված ազատ չարձակի:

Սաղմոսերգուն խոսում է թշնամու կողմից տառապանք կրելու մասին «մահվան տառապանքը շրջապատեց ինձ, եւ անօրենության հեղեղն ինձ վրդովեց: Դժոխքի ցավերը պաշարեցին ինձ, և մահացու վտանգներն ինձ հասան: Նեղությանս մեջ ես Տիրոջը դիմեցի և իմ Աստծուն աղաղակեցի» (Սաղմ. 17. 5-7): «Վերից փութալով՝ Տերը վերցրեց ինձ, վերցրեց ինձ ջրերի հեղեղից» (Հմ.17):

Աստված նույն բանը կարող է մեզ համար էլ անել: Նա կարող է շղթաները կտրել և մեզ արձակել մեզ բանտող վանդակներից: Որքա՛ն տխուր ու ցավալի կլինի, եթե շարունակենք փոքր շրջանակի մեջ վազել, ասես արգելափակված ենք հին բանտում: Իր զորությամբ թող որ վախն ու ամոթը մեզ չկաշկանդեն: Աստված մեզ ազատել է մահվան այդ վանդակներից, ու մենք կարող ենք ազատ վազել:

Աղոթք - Հայր, Դու ազատում ես բանտարկյալներին: Աղաչում եմ՝ ինձ էլ ազատի՛ր և դուրս բեր ընդարձակ մի տեղ: Ամեն:

Կարդա՛ր

Սաղմոս 17.3-6,16-19

Տերն ինձ զորություն տվեց:

Սաղմոս 17.19

Կարող ենք վախի ու անորոշության վանդակում լինելու զգացողություն ունենալ: Սակայն Աստված մեզ կազատի դրանցից:

Երբ կյանքը դժվար լինի

Տիզիկապես ու հոգեպես սպառված՝ նստեցի աթոռին: Աստծո առաջնորդություններ ընտանիքը Կալիֆոռնիայի տեղափոխվեց Վիսկոնսին: Այստեղ գալուց անմիջապես հետո մեր ավտոմեքենան խափանվեց, ու երկու ամիս մնացինք առանց մեքենա: Ամուսնուս մեջքի անակնկալ վիրահատությունից հետո նրա սահմանափակ շարժվելը և իմ մշտական հիվանդությունները դժվարացրին մեր տեղափոխվելը: Դրան ավելացրած մեր նոր փոխադրված, բայց հին տանը բնորոշ մի շարք խնդիրներ, որոնց լուծումը ծախսատար էր: Մեր ավագ շուկայի հիվանդացավ, չնայած փոքրիկը ուրախացնում էր մեզ: Մի խոսքով, մեր սպասածից ավելի գործեր ու ծախսեր եղան, և մեր վիճակը բավական վատացավ: Ինչպե՞ս կարելի էր հավատն անխախտ պահել այսքան դժվարությունների մեջ:

Կարդա՛ր Սաղմոս 15

Իմ Տերն ես դու, ինձ արված բարիքները քեզնից են:
Սաղմոս 15.2

Երբ ազդեցի, Աստված հիշեցրեց սաղմոսերգուի մասին, որի փառաբանությունը հանդամանքներից անկախ էր: Դավիթը խոսեց իր զգացումների մասին, հաճախ մեծ խոցելիություններ և պահպանություն փնտրեց Աստծո ներկայության մեջ (Սաղմ. 15. 1): Ընդունելով, որ Աստված տվողն ու պահպանողն է (Հմ. 5-6), նա փառաբանեց Նրան և հետևեց Նրա խորհրդին (Հմ. 7): Դավիթը հաստատեց, որ ինքը «չպիտի սասանվի», որովհետև «Տիրոջը մշտապես տեսնում էր իր առջև» (Հմ. 8): Ուստի ուրախացավ և Աստծո ներկայությանը հրճվեց (Հմ. 9-11):

Մենք էլ կարող ենք ուրախանալ՝ ընդունելով, որ մեր խաղաղությունն էլ կախված չէ մեր ներկա իրավիճակից:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ Դու ես մեր Աստվածը: Ամեն:

**Քո բոլոր նեղությունները կարող ես Աստծո
ձեռքերի մեջ դնել:**

Մոնչացող մուկը

Տարիներ առաջ տղաներս ու ես Հյուսիսային Այդըհոյի Սը-
լուեյ Բիթթերուլթ անապատում մի քանի օր անցկացրինք:
Իմանալով, որ այդ շրջանում գորշ արջեր շատ կան, մեզ հետ
վերցրինք արջերին հեռու պահելու գործիք, որպեսզի գերծ
մնայինք այդ գազանների «այցերից»:

Մի գիշեր լսեցի, որ Ռենդին փորձում էր դուրս պրծնել իր
քնապարկից: Լուսարձակը միացնելով
մոտեցա և մտածում էի, որ արջ է մո-
տեցել որդուս: Սակայն տեսա, որ հա-
զիվ 10 սանտիմետրանոց մի դաշտա-
մուկ բռնել էր Ռենդիի գլխարկն ու
այնքան էր քաշքշել, որ հանել էր գլ-
խից: Երբ ես ծիծաղեցի, մուկը գլխար-
կը թողեց ու փախավ: Մենք նորից
մտանք քնապարկերի մեջ: Բայց ես այլևս չկարողացա քնել ու
սկսեցի մտածել մեկ այլ գիշատչի՝ չարի մասին:

Սատանան ամեն ջանք գործադրեց Հիսուսին փորձելու հա-
մար (Մատթ. 4. 1-11) և նրան հրապուրելու համար գործածեց
Աստծո խոսքը: Յուրաքանչյուր պատասխանի հետ Հիսուսը
նրան հիշեցնում էր, որ Աստված խոսել է այդ հարցի մասին, և
հետևաբար պիտի հնազանդվի նրան: Սա պատճառ եղավ, որ
սատանան հեռանա:

Երբ սատանան փորձում է մեզ կլանել, լավ կլինի հիշել, որ
ինքն էլ է արարած այն փոքրիկ մկան նման: Հովհաննեսն
ասում է. «Ավելի մեծ է նա, ով ձեր մեջ է, քան թե նա, ով աշ-
խարհի մեջ է» (Ա. Հովհ. 4.4):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Դու ինձ հանդիպած բո-
լոր փորձություններից ավելի մեծ ես: Խնդրում եմ՝ տու՛ր
դրանցից ազատվելու միջոց: Ամեն:

**Անկասկած, փորձություններ կլինեն քո կյանքում, բայց
վստահի՛ր Նրան, ով զորացնում է քեզ:**

Կարդա՛

Մատթեոս 4. 1-11

Որովհետև ավելի
մեծ է նա, ով ձեր
մեջ է, քան թե նա,
որ աշխարհիս մեջ է:
Ա Յովհ. 4.4

ԿԻՐԱԿԻ սիրով

Երբ հանրային բանավեճ սկսվեց Սինգապուրի մի հակասահան օրենքի շուրջ, հավատացյալները տեսակետներով բաժանվեցին: Ոմանք մարդկանց պիտակեցին «նեղմիտ» կամ էլ մեղադրեցին նրանց՝ իրենց հավատքը զիջելու համար:

Հակասությունները կարող են լուրջ բաժանումներ առաջացնել Աստծո ընտանիքում՝ ցավ պատճառելով ու մարդկանց հուսահատեցնելով: Հաճախ ես էլ իմ համոզմունքներում ինձ փոքր եմ զգացել, անվստահ, թե ինչպես եմ կիրառելու Աստվածաշնչյան ուսուցումներն իմ կյանքում: Մտածել եմ, որ ես էլ նույն չափով մեղավոր եմ, երբ քննադատում եմ ինձ հետ չհամաձայնողներին:

Կարծում եմ, որ հարցը ոչ թե մեր մտքերը արտահայտելու ձևի մեջ է, այլ մեր դիրքորոշման: Մենք պարզապես չենք ընդունում ուրիշների տեսակետը, թե՞ փորձում ենք մերժել նրանց, ովքեր մեզ նման չեն մտածում:

Լինում են ժամանակներ, երբ մենք, նկատելով սուտ վարդապետությունները, պետք է բացատրենք մեր դիրքորոշումը: Եփես. 4. 2-6-ը հիշեցնում է, որ այդ բանը հարկավոր է անել խոնարհությամբ, հեզությամբ, համբերատարությամբ և սիրով: «Ձանալով Հոգու միաբանությունը խաղաղության կապով պահել» (Հմ.3): Մի շարք հակասություններ կարող են և չլուծվել: Բայց Աստծո խոսքը մեզ հիշեցնում է, որ մեր նպատակը մարդկանց հավատը շինելն է և ոչ քանդելը (Հմ. 29):

Աղոթք - Սիրելի՛ Տեր, առաջնորդի՛ր ինձ, որ ճշմարտությունն ասելիս սիրով անեմ ամեն բան ու փորձեմ միայն շիտել և ոչ թե քանդել: Ամեն:

Պետք է աղոթել Տիրոջը, որ մեզ իմաստություն տա ուրիշների հետ մեր հարաբերությունը սիրով շարունակելու:

Կարդա՛ Եփես 4. 2-6

Ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, սիրով իրար համբերելով:
Եփես. 4.2

Մշտական Երկայություն

2018-ի Ֆոլտերոլի աշխարհի առաջնություն խաղերի ժամանակ Կոլումբիայի հարձակվող Ռադամել Ֆալկաոն 78-րդ րոպեին գոլ խփեց Լեհաստանի դարպասն ու ապահովեց իր թիմի հաղթանակը: Դա Ֆալկաոյի 30-րդ գոլն էր միջազգային խաղերում:

Կոլումբիացի այս ֆոլտերոլիստը հաճախ է իր հաջողությունն օգտագործել՝ իր հավատքը ցուցադրելու համար, երբ մարզադաշտում բարձրացրել է շապիկը և ցույց տվել դրա վրա գրված բառերը. «Հիսուսի հետ բնավ մենակ չես լինի»:

Ֆալկաոյի այս հայտարարությունը հիշեցնում է Հիսուսի տված երաշխավորություն խոստումը, որտեղ ասում է. «Եվ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28. 20): Իմանալով, որ երկինք է վերադառնալու, Հիսուսը մխիթարեց իր աշակերտներին՝ նրանց վատահեցնելով, որ ինքը միշտ նրանց հետ է լինելու իր Հոգու միջոցով (Հմ.20. Հովհ. 14. 16-18): Քրիստոսի Հոգին կարող է մխիթարել, առաջնորդել, պաշտպանել ու զորացնել նրանց, երբ իրենք Նրա պատգամն են տանում հեռու և մոտ քաղաքներ: Ու երբ նրանք անձանոթ վայրերում մենություն պահեր ունենան, իրենց ականջներում պիտի արձագանքեն Քրիստոսի խոսքերը՝ որպես հիշեցում իր ներկայություն:

Հոգ չէ, թե ուր ենք գնում, մոտիկ ենք, թե հեռու, եթե հետևում ենք Հիսուսին ու Նրա հետ ենք գնում մեզ անձանոթ վայրեր, մենք նույնպես կարող ենք վատահել այս խոստմանը:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, շնորհակալ եմ, որ բոլորովին մեճակ չեմ, որովհետև Դու ինձ հետ ես: Ամեն:

Միայնության զգացում միշտ էլ կարող ենք ունենալ:
Վստահ լինենք, որ Տե՛րը մեզ հետ է:

Կարդա՛

Մատթեոս 28. 16-20

Եվ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը:

Մատթ. 28.20

ԱՆԵՐԼԱԿԱՅԵԼԻ

2001 թվականին Բարտ Միլարդը գրեց «Ես կարող եմ միայն Հպատկերացնել» խորագրով հայտնի երգը, որում նկարագրվում է, թե որքան հիանալի պիտի լինի Քրիստոսի ներկայութիւնը: Երգի բառերը մխիթարութիւն են հղան մեր ընտանիքի համար, երբ մեր 17 տարեկան աղջիկը՝ Մելիսան, ավտովթարի զոհ դարձավ:

Այդ «պատկերացնելը» ինձ համար այլ կերպ արտահայտվեց աղջկա մահվան հաջորդ օրերին, երբ Մելիսայի ընկերների ծնողները մոտենում ու ցավով ասում էին, թե չեն կարող պատկերացնել, թե ինչի միջով եմ ես անցնում: Այդ խոսքերը օգնում էին մեզ, որովհետև ցույց էին տալիս, որ իրենք էլ տանջվում մեր կորստով՝ այն նկատելով աներևակայելի:

Դավիթը կորստյան մեծութիւնը մատնանշում է, երբ նկարագրում է «մահվան ստվերների միջով անցնելու փորձառութիւնը» (Սաղմ. 22. 5): Սիրելիի մահը հաստատ այդ դեպքն է, և մենք չգիտենք, թե ինչպես ենք նավարկելու այդ խավարում: Նույնիսկ չենք կարող պատկերացնել, թե ինչպես ենք կարողանալու դուրս գալ դրանից:

Բայց ինչպես Աստված խոստացել է մեզ հետ լինել խավար ձորում քայլելիս, այնպես էլ մեզ հույս է տալիս ապագայի համար՝ վստահեցնելով, թե ձորից այն կողմ մենք իր հետ ենք լինելու:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ հետ ես նույնիսկ խավար ձորում, ու մենք պատկերացնում ենք երկնքի օրհնութիւնները: Ամեն:

Սիրելիների կորուստը մեծ ցավ է, մեզ մնում է մխիթարել ու մխիթարվել:

Կարդա՛ր
Սաղմոս 22

Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից, քանզի դու, Տէր, ինձ հետ ես: Սաղմ. 22.5

Աստծո իրականությունը

Ք. Լուիսի «Նարնիայի ժամանակագրությունը» գրքում նարնիացիներն ուրախանում են, երբ երկար բացակայությունից հետո Ասլան առյուծը վերադառնում է: Բայց նրանց ուրախությունը ցավի է փոխվում, երբ Ասլանը գիջում է չար կախարդի պահանջին: Ասլանի պարտությունը դիմագրավող նարնիացիները առյուծի զորությունը դարձյալ զգում են, երբ նրա ահեղ մոնսթրից վախեցած կախարդը փախչում է: Թվում է, թե ամեն ինչ կորած էր, սակայն Ասլանը ապացուցում է, որ ինքն ավելի մեծ ու հզոր է, քան այդ չարագործ կախարդը:

Լուիսի այլաբանական պատմության Ասլանի հետևորդների նման Եղիսեեի սպասավորն էլ հուսահատվեց, երբ մի առավոտ արթնացավ ու տեսավ, որ քաղաքը շրջապատված է թշնամու զորքով: Նա բացականչեց. «Տե՛ր, ի՞նչ պիտի անենք» (Դ. Թագ. 6.15): Մարգարեն հանդարտ պատասխանեց. «Մի՛ վախեցիր, քանզի մեզ հետ եղողները նրանց հետ եղողներից շատ են» (Հմ.16): Ապա Եղիսեե ազդեցիկով խնդրեց. «Տե՛ր, բա՛ց սպասավորիս աչքերը, որ տեսնի» (Հմ.17): «Տերը բացեց նրա աչքերը, և նա տեսավ, որ Եղիսեեի շուրջը լեռը լի էր ձիերով ու հրեղեն մարտակառքերով» (Հմ.17): Դժվարին իրավիճակները կարող են վհատեցնել, թե ամեն ինչ կորած է, սակայն Աստված ուզում է մեր աչքերը բանալ ու հայտարարել, որ ինքը շատ ավելի մեծ է:

Կարդա՛ր

Դ. Թագ. 6. 8-17

Տերը բացեց նրա աչքերը, և նա տեսավ, որ Եղիսեեի շուրջը լեռը լի էր ձիերով ու հրեղեն մարտակառքերով: Դ Թագ. 6.17

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ քո հավատարմության համար: Ամեն:

Դժվար ու տագնապալի ժամանակներ դիմագրավելիս վստահ լինենք, որ Աստված ամեն ինչից զորեղ է:

Ճակատամարտից հետո

Տեանելով մեր ժամանակների տարբեր խնդիրներն ու տագնապները, մենք հաճախ ենք ինքներս մեզ հարցնում. «Ի՞նչ ասել այս ամենի մասին»:

451 թվականի դեպքերի զարգացումն ու առաջացած լուրջ խնդիրները նույնպես Վարդանանց առջև նույն հարցն էին դրել. պարտված ճակատամարտից հետո ինչպե՞ս էին շարունակելու ապրել: Նրանք կորցրել էին իրենց զորապետին, պարտվել էին ճակատամարտում: Ի՞նչ ասել այդ ամենի մասին:

Վարդանի ու իր ընկերների ղեմադրված դժվարությունները նման են մեր շուրջը տիրող կացությունը: Ո՞րն է լինելու մեր դիրքորոշումն ու հավատքը կյանքի մերօրյա դժվարին հանգամանքներում. պիտի ենթարկվե՞նք ներկա ժամանակների զանազան հոսանքներին ու չար խորհուրդներին: Քրիստոնեական ճշմարիտ հավատի սկզբունքներից հրաժարվելով՝ պիտի տկարանա՞նք:

Տեր Հիսուսի փնտրածը կենդանի Աստծո նկատմամբ հավատն է եղել: Հավատը, որից մեզ ոչինչ չպիտի կարողանա բաժանել: Ըստ Պողոս առաքյալի՝ տկարությունը զորության վերածելու հնարավորությունը միշտ կա: Դա հավատն է նախընտրելու Տեր Հիսուսին, որը մեզ հույս է ներշնչում բոլոր պարագաներում:

Արժի ապրել նաև ճակատամարտից հետո՝ այն հույսով, որ «մեր խոնարհ մարմինը պիտի նորոգի, որ իր փառավոր մարմնին կերպարանակից լինի» (Փիլ. 3. 21): Այսպիսի հավատքով ապրեց հայր և պահպանեց իր հավատքը նաև պարտություն կրած ճակատամարտից հետո:

Աղոթք - Դայր, մեր հուսահատ պահերին հույս ներշնչիր մեզ, որ Քեզ ապավինենք բոլոր պարագաներում: Ամեն:

Տագնապներ, նեղություններ ու մահ միշտ կլինեն, բայց Տերը մեզ նորոգում է ու փառավորում:

Կարդա՛
Փիլիպ. 3. 12-21

Մեր խոնարհ մարմինը պիտի նորոգի, որ իր փառավոր մարմնին կերպարանակից լինի: Փիլիպ. 3.21

Հանգրվանելու մի տեղ

Իրենց առաջին կողակիցներին կորցնելու ողբերգությունից տարիներ հետո Ռոբին և Սաբրինան ամուսնացան ու միացրին իրենց երկու ընտանիքները: Նրանք նոր տուն կառուցեցին և այն կոչեցին Հավիլահ (եբրայերեն բառ է, որ նշանակում է «ցավի մեջ փաթաթվել» և «առաջ անցնել»): Հավիլահը նաև նշանակում է ցավի մեջ մի գեղեցիկ բան ստեղծել: Նրանք ասում էին, որ այդ տունը իրենց անցյալը մոռանալու համար չեն շինել, այլ «մոխիրներից կյանք ստեղծելու և իրենց հույսը գովերգելու»: Իրենց համար դա «հանգրվանելու մի տեղ է, վայր, որտեղ գովերգում են կյանքն ու կառչում ապագայի խոստմանը»: Այս մարդկանց պատմությունը մի գեղեցիկ պատկեր է Հիսուսով մեր նոր կյանքի մասին, որը մոխիրներից դուրս գալիս ու դառնում է հանգրվանելու մի տեղ մեզ համար: Երբ մենք իրեն ընդունենք, «Քրիստոսը մեր սրտերում հավատով կբնակվի» (Եփ. 3.17): Աստված Տեր Հիսուսի միջոցով մեզ որդեգրում է իր ընտանիքում, որպեսզի մենք էլ իրեն պատկանենք (Հմ.1. 5-6): Մեր կյանքին նպատակ տալու համար Նա կարող է օգտագործել նույնիսկ մեր դժվարությունները:

Մենք ամեն օր Աստծո մասին մեր պատկերացումներում աճում ենք՝ վայելելով իր սերը և ուրախությունը գովերգելով այն, ինչ տրված է մեզ: Իր մեջ է կյանքի ամբողջությունը, որ մենք չենք կարող ունենալ առանց իրեն (3.19): Խոստում ունենք, որ այս հարաբերությունը հավիտյան շարունակվելու է: Հիսուսն է մեր հանգրվանելու, պատկանելու տեղը, կյանքը գովերգելու պատճառը նաև մեր հույսը հիմա և հավիտյան:

Աղոթք - Տեր Հիսուս, երախտապարտ եմ, որ Քեզ եմ պատկանում: Շնորհակալ եմ պարգևած հույսի համար՝ հիմա և հավիտյան: Ամեն:

Ցավերի մեջ իսկ Հիսուսը պատրաստ է փոխելու քո կյանքը և առիթ է տալիս իրեն պատկանելու:

Կարդա՛ր
Եփես. 3. 14-21

Որպեսզի Քրիստոսը մեր սրտերում հավատով բնակվի:
Եփես. 3.17

Յին խոստումներ

1979 թվականին դոկտոր Գաբրիել Բարբեյը և իր խումբը Երուսաղեմի Հին քաղաքից դուրս գտնվող գերեզմանատանը արծաթյա երկու մագաղաթ գտան: 2004-ին՝ 25 տարվա մանրամասն ուսումնասիրությունից հետո հաստատվեց, որ այդ գտածոները սուրբգրային ամենահին հատվածներն են, որոնք թաղվել են այդտեղ Ք.Ա. 600թ: Ամենահուշահիշատակային մագաղաթներում պահպանված քահանայական օրհնությունն է. «Տերն օրհնի քեզ ու պահպանի քեզ, իր երեսը ցույց տայ քեզ ու ողորմի քեզ» (ԹՎ. 6. 25-26): Այս օրհնությունը տալով՝ Աստված Մովսեսի միջոցով Ահարոնի ու իր որդիներին ցույց տվեց, թե ինչպես էին օրհնելու ժողովրդին՝ իր անունով: Առաջնորդները պետք է անգիր սովորեին, այնպես, ինչպես Աստված ուզում էր, որ ասեին իր ժողովրդին: Նկատելիորեն չհշտելով, որ Աստված է օրհնողը և երեք անգամ կրկնելով՝ «Տերը»: Նաև վեց անգամ Նա ասում է «ձեզ»՝ ցույց տալու համար, թե Աստված որքան է ուզում, որ իր ժողովուրդը ստանա իր սերն ու բարեհաճությունը: Մի պահ մտածի՛ր, թե ինչպես են գոյություն ունեցող Աստվածաշնչի հնագույն մասերը ներկայացնում Աստծոն օրհնելու ցանկությունը: Ինչպիսի՛ հիանալի հիշեցում Աստծո անսահման սիրո և մեզ հետ ունենալիք հարաբերության մասին: Եթե դու քեզ հեռու ես զգում Աստծուց, ամուր կառչի՛ր այս հին օրհնության մեջ տված խոստմանը: Թող Աստված օրհնի քեզ: Թող Աստված պահպանի քեզ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ ինձ տված Քո բոլոր բարիքների համար: Օգնի՛ր, որ կարողանամ տեսնել, թե ինչպես ես դու ինձ ուրախություն ու խաղաղություն տալիս, որպեսզի քեզ փառավորեմ: Ամեն:

Աստված ուզում է օրհնել քեզ: Ընդունի՛ր իր օրհնությունն ու այն փոխանցի՛ր ուրիշներին:

Կարդա՛ր
ԹՎԵՐ 6. 22-27

Տերն օրհնի քեզ ու պահպանի քեզ: ԹՎԵՐ 6.25

Մեխված սեր

Կարլան զանգահարել էր, հաղորդագրություն գրել, իսկ հիմա կանգնած էր եղբոր տան փակ դարպասի առջև և չէր կարողանում արթնացնել նրան: Հիվանդության պատճառով դեպրեսիայի մեջ ընկած եղբայրը մեկուսացել էր և փակվել իր տանը: Եղբորն օգնելու հուսահատ ջանքերից հետո Կարլան մի փաթեթ պատրաստեց, որում հավաքեց նրա սիրած ուտելիքները և սուրբգրային քաջայերական խոսքերի հետ փորձեց ցանկապատից այն կողմ իջեցնել: Սակայն դարպասի վրայի մեխերից մեկը պատռեց կապոցն, ու դրա պարունակությունը թափվեց: Լավ նպատակով արված ու սիրով լի նվերը փչացավ: Արդյո՞ք եղբայրը կնկատեր իր նվերը, արդյո՞ք Կարլայի ծրագրած գործը կհասներ իր նպատակին: Նա միայն կարող էր աղոթել ու հուսալ՝ սպասելով եղբոր ապաքինմանը:

Կարդա՛ր
Եսայի 53.1-6

Մեր անօրենությունների համար դատապարտվեց. մեր խաղաղության համար նա՛ պատիժ կրեց:
Ես. 53 .5

Աստված այնքան սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդուն իջեցրեց մեր մեղքի պատի վրայով՝ սիրո և բուժման ընծաներ բերելով (Հովհ. 3.16): Եսայի մարգարեն Աստծո այս սիրո արարքի գինը կանխատեսել է: Այս Որդին «խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրենությունների համար դատապարտվեց. մեր խաղաղության համար նա՛ պատիժ կրեց, և նրա՛ վերքերով մենք բժշկվեցինք» (Ես. 53. 5): Նրա վերքերը գերագույն բժշկության հույսն են տալիս, որովհետև իր վրա վերցրեց «մեր անօրենությունները» (Հմ.5): Մեր մեղքերի ու կարիքների համար մեխերով մեխված Աստծո պարգևը՝ Հիսուսը, այսօր մեր կյանք է մտնում նոր ու թարմ զորություն մե՞զ և հեռանկարով:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ Տեր Հիսուսի պարգևի համար, որ ցանկապատի վրայից իջեցրի իմ սրտի մեջ, որ հասնի իմ կարիքներին: Ամեն:

Աստծո մեխող սերը թափանցում է մեր մեջ՝ մեզ կերպարանափոխելու համար:

Յիսուսով ազատագրված

«Այնքան երկար ապրեցի մորս հետ, որ նա ստիպված զնաց տնից», - ասում է Գ.Ա.-ն: Մինչ թմբանյութից հրաժարվելն ու Հիսուսին հանձնվելը նրա կյանքը սարսափելի էր: Նա խոստովանում է, որ թմբանյութ ապահովելու համար փող է գողացել նույնիսկ իր սիրելիներից: Այդ կյանքն իր ետևում թողած՝ այժմ նա փորձում է զնահատել այն տարիները, ամիսներն ու օրերը, երբ այլևս թմբանյութ չի օգտագործում: Ես ու Գ.Ա.-ն հաճախ ենք հանդիպում ու զրուցում Աստծո մասին, և ես տեսնում եմ ամբողջովին փոխված մարդու:

Մարկոսը խոսում է մի դիվահարի մասին, որը փոխվել է: Բժշկվելուց առաջ նա մի անօգնական, անտուն ու հուսահատ մարդ էր (Մարկ. 5. 3-5): Բայց նա ամբողջովին փոխվում է, երբ Հիսուսն ազատում է նրան չար ոգիներից (Հմ.13): Ինչպես Գ.Ա.-ի, այնպես էլ դիվահարի կյանքը մինչ Հիսուսի միջամտությունը անբնական էր: Նրանց ներքին խռովքը շատ չի տարբերվում այն վիճակից, որում հայտնվում են մարդիկ այսօր: Շատ հիվանդներ ապրում են լքված շենքերում, մեքենաների մեջ կամ այլ անհարմար տեղերում: Ոմանք էլ թեև ապրում են իրենց տներում, սակայն հոգեպես մենակ են: Աներևույթ շղթաները այն աստիճան են կապում նրանց սիրտն ու միտքը, որ այդ մարդիկ մեկուսանում են, չեն շփվում մարդկանց հետ: Մեր ցավերը, անցյալում գործած ամոթալի արարքներն ու ներկան կարելի է վստահել Հիսուսին: Նա սպասում է բոլոր նրանց, ովքեր գնում են դեպի Ինքը (Հմ.19):

Կարդա՛ր Մարկոս 5. 1-20

Նա գնաց ու սկսեց... քարոզել, ինչ որ Յիսուսն արել էր իրեն, և բոլորը զարմանում էին: Մարկ. 5.20

Աղոթք - Յայր, որքան երախտապարտ եմ, որ անցյալում ինձ կլանած բոլոր այդ բաները կարելի է թողնել անցյալում: Ամեն:

Եթե ունենք խնդիրներ ու տկարություններ, Աստված կարող է մեզ ազատել դրանցից:

Աստծո՛վ հարստանալ

Տնտեսական մեծ ճգնաժամի օրերին ծնողներս դեռ փոքր են հեղել ու շատ զրկանքներ են կրել: Այդ պատճառով էլ նրանք հետագայում դարձան շատ տնտեսող, աշխատասեր ու երախտապարտ բարի տնտեսվարներ: Նրանք իրենց ժամանակը, տաղանդն ու գանձերը տվեցին եկեղեցուն, կարիքավորներին ու բարեսիրական կազմակերպություններին: Որպես հավատացյալներ՝ նրանք ընդունեցին Պողոսի հայտարարությունը. «Նրանք, ովքեր ուզում են հարստանալ, փորձություն, որոգայթի և շատ անմիտ, վնասակար ցանկությունների մեջ են ընկնում, որ ընկղմվում են մարդկանց կործանումի և կորստյան մեջ» (Ա. Տիմ. 6.9):

Այս խրատը Պողոսը Եփեսոսի եկեղեցու երիտասարդ հովիվ Տիմոթեոսին տվեց՝ խոսելով հարստության մասին. «Որովհետև արձաթասիրությունը բոլոր չարիքների արմատն է, որին մի քանիսն անձնատուր լինելով՝ հավատից մոլորվեցին ու իրենց անձերը շատ ցավերով խոցեցին» (Հմ.10):

Իսկ ո՞րն է ազահուության հակաթուղի: Հիսուսն ասում է. «Աստծո՛վ հարուստ լինել» (Ղուկ. 12. 13-21): Ամեն ինչից առավել մեր երկնավոր Հորը հետևել, գնահատել ու սիրել: Նա է մեր գլխավոր ուրախությունը: Ինչպես սաղմոսերգուն է գրել. «Առավոտյան լիացանք քո ողորմությանմբ, ցնծացինք և ուրախ եղանք մեր կյանքի բոլոր օրերին» (Սաղմ. 89. 14):

Թող Հիսուսը մեզ ազատի մեր սրտի ցանկություններից և մեզ Աստծո՛վ հարստացնի:

Աղոթք - Հայր, գոհացրո՛ւ մեզ Քո անսահման սիրով և մեր ազահուությունը փոխարինի՛ր հոգևոր քաղցով: Ամեն:

Երբ չարը մեզ մոլորեցնի փողի մասին սխալ գնահատականներով, խնդրենք Տիրոջից, որ օգնի մեզ ճիշտ քայլ անելու:

Կարդա՛

Ա Տիմ. 6. 6-11

Բայց մեծ շահ է խկական աստվածապաշտությունը՝ գոհունակության հետ: Բ Տիմ. 6.6

Ուրախ մտքեր

Բիլ Շապիրոյի «Ի՞նչ ենք թաքցնում» խորագրով հարցազրույցների ժողովածուի մեջ յուրաքանչյուր մարդ պատմում է իր համար կարևոր ու նվիրական մի բանի մասին, որից նա բոլորովին չի ուզում բաժանվել:

Սա պատճառ դարձավ, որ ես էլ մտածեմ ինձ համար կարևոր և ուրախություն պատճառող բաների մասին: Դրանցից մեկը քառասուն տարի առաջ մորս ձեռքով գրված կերակրի մի բաղադրատոմսն է, մյուսը՝ տատիկիցս մնացած թեյի վարդազույն բաժակները: Մեկ ուրիշի համար նվիրական արժեք կարող են ունենալ տարբեր հիշատակները. գովեստի մի խոսք, թոռնիկի ծիծաղը, կամ էլ Աստվածաշնչից քաղված մի բան:

Կարդա՛
 Փիլիպ. 4. 4-9

Ամեն ժամանակ Տիրոջով ուրախ եղեք. դարձյալ ասում եմ՝ ուրախ եղեք: Փիլիպ. 4.4

Մեր սրտում ու հոգում պահվող որոշ բաներ էլ մեզ տխրեցնում են: Օրինակ թեթև մի անհանգստություն, բարկություն կամ զայրույթ, որ լուռ կրծել է մեր մտքերը:

Պողոս առաքյալը դրական մոտեցում ցուցաբերեց «մտածելու» մասին, երբ փիլիպեցիներին ուղղված նամակում ժողովրդին քաջալերեց միշտ ուրախ լինել, ազնվությամբ վարվել և ամեն բան աղոթքով հասցնել Աստծուն (Փիլ. 4. 4-9): Պողոսի քաջալերական խոսքերը մեզ օգնում են հասկանալու, որ կարելի է մոլթ մտքերը դուրս նետել և թողնել, որ «Աստծու խաղաղությունը մեր սրտերն ու մտքերը Հիսուս Քրիստոսով պահպանի» (Հմ.7): Երբ մեր մտքերը շիտակ, ճշմարիտ, մաքուր ու փառաբանության արժանի խորհուրդներով լցվեն, այդ ժամանակ էլ մեր սրտերում խաղաղություն կունենանք (Հմ.8):

Աղոթք - Հայր, առաջնորդի՛ր մտքերս և կյանքս ու սիրտս անձ Քո հոգատար ձեռքերի մեջ: Ամեն:

Մեր սրտերը կարող են անարժան մտքերով լցվել, բայց կարելի է օգնության համար դիմել Աստծուն:

Անակնկալ փոփոխություն

1943 թ. հունվարին Հարավային Դակոտայի Սփիրիթիչ քաղաքի վրա օդային տաք հոսանքներ եկան և -20 ջերմաստիճանը հասավ +7-ի: 27 աստիճանի այդ կտրուկ փոփոխությունն ընդամենը երկու րոպե տևեց: ԱՄՆ-ում ջերմաստիճանի ամենամեծ ու կտրուկ փոփոխությունը եղել է Մոնտանա նահանգի Լոմա քաղաքում 1972-ի հունվարի 15-ին, երբ սնդիկի սյունը -48-ից հասել էր +9-ի:

Հանկարծակի փոփոխությունները միայն կլիմայական երևույթներ չեն: Դրանք նաև մեր կյանքի բնական մասերից են:

Հակոբը մեզ հիշեցնում է. «Ահա, ո՛վ դուք, որ ասում եք. «Այսօր և վաղն այսինչ քաղաքը գնանք ու այնտեղ մի տարի լինենք, վաճառենք ու շահենք»: Դուք, որ չգիտեք՝ ինչ է լինելու վաղը»: (Հակ. 4.13-14): Անակնկալ վնաս, զարմանալի ախտորոշում, նյութական պայմանների փոփոխություն:

Կյանքը բազում անակնկալներով լեցուն մի ճամփորդություն է: Դրա համար է Հակոբը մեզ զգուշացնում հեռու մնալ «պարծենկոտությունից» (Հմ.16) և խրատում. «Փոխարենը պետք է ասելք. «Եթե Տերը կամենա, ու ապրենք, այս բանը կամ այն բանը կանենք» (Հմ.15): Մեր կյանքի դեպքերը անորոշ կարող են լինել, սակայն մեկ բան որոշակի է. կյանքի բոլոր անակնկալ պահերի մեջ Աստված մեզ մենակ չի թողնում: Նա է միակ մնայունը մեր կյանքում:

Աղոթք - Հայր, Երի՛ր ինձ, երբ մտահոգվում եմ այնպիսի բաների համար, որոնք չեմ կարող կանխատեսել կամ հավակշռել: Օգնիր, որ հանգիստս գտնեմ Քո մեջ: Ամեն:

Անսպասելի փոփոխություններ միշտ էլ կլինեն, հարկավոր է Աստծուն վստահել ու Նրան հանձնվել:

Կարդա՛ր
Յակոբոս 4.13-17

Դուք, որ չգիտեք՝ ինչ է լինելու վաղը»: (Հակ. 4.14)

Համբերելու հավատք

Իսրայելացի բեեռախույզ էրնեստ Շաբլիթոնը 1914 թվականին Անտարկտիդան հաղթահարելու անհաջող արշավ ձեռնարկեց, երբ իր «Համբերություն» անունով նավը խորտակվեց սառցաբեկորների մեջ: Չունենալով հաղորդակցության որևէ միջոց՝ Շաբլիթոնն ու նրա նավի անձնակազմը փրկարար նավերով մի կերպ հասան Փիզ կղզու ափը:

Անձնակազմի մեծ մասը մնացին այգտեղ, իսկ Շաբլիթոնն ու ևս հինգ հոգի երկու շաբաթ ճամփորդեցին օվկիանոսում, որպեսզի օգնություն հասցնեն կղզու մնացողներին: Այսպիսով «ձախողված» արշավը դարձավ հաղթական մի արձանագրություն այն մասին, որ արշավախմբի անդամները փրկվեցին

իրենց ցուցաբերած քաջության և հավատարմության շնորհիվ:

Պողոս առաքյալը գիտեր՝ ինչ է նշանակում համբերելը: Դեպի Հռոմ փոթորկոտ մի ծովային ճամփորդության ժամանակ Աստված հրեշտակի միջոցով նրան հայտնեց, որ նավը խորտակվելու է: Պողոսը նավի վրա եղողներին հանգստացրեց, և Աստծո խոստման համաձայն՝ նրանք փրկվեցին՝ չնայած նավը խորտակվեց (Գործք. 27. 23-24):

Երբ աղետներ են պատահում, ուզում ենք, որ Աստված միջամտի և ամեն ինչ լավ լինի: Բայց Աստված մեզ հավատ է տալիս համբերելու և սճելու համար:

Աղոթք - Երկնավոր Հայր, առաջ գնալու համար օգնությանդ կարիքն ունեմ: Ամեն:

Կարդա՛ր
Գործք Առ. 27. 27-38

...Նեղությունը
համբերություն է
առաջացնում:
ԴՌ. 5.3

Նեղություններ ու տառապանքներ միշտ էլ կունենանք: Սակայն հարկավոր է քաջալերվել, որովհետև Աստված խոստացել է մեզ հետ լինել ու փրկել մեզ:

Գաղտնիքը

Երբեմն կասկածում եմ, որ կատուս՝ Հիթբլիֆը, իր բաժինը կորցնելու վախից տառապում է: Երբ գնումներ կատարելուց հետո տուն եմ վերադառնում, Հիթբլիֆը մոտենում է՝ տեսնելու, թե ինչ կա իմ տոպրակում: Երբ կանաչեղեն եմ կտրատում, կանգնում է ետևի թաթերին ու թախանձագին նայում՝ դեմքիս, որ իրեն էլ տամ: Բայց երբ տալիս եմ ուզածը, շուտով կորցնում է հետաքրքրությունն ու ձանձրացած հեռանում: Իմ փոքրիկ բարեկամը արտացոլում է միշտ ավելին ունենալու իմ անհագ ցանկությունը:

Ըստ Պողոսի՝ գոհանալը մի բան է, որ սովորում ենք (Փիլ. 4.11): Մենք ջանք ենք թափում ունենալու այն ամենը, ինչը մեր կարծիքով գոհացնելու է մեզ և հաջորդ բանին նայում ենք՝ մտածելով թե մեր ուզածը չենք ունենալու: Երբեմն իսկական ուրախություն զգալու համար նույնիսկ կարիք է լինում ահազդու բաների փորձառությունն ունենալ:

Կյանքի տված ամենավատ բաների փորձառությունը ունենալով՝ Պողոսը բացահայտում է ինքնաբավ լինելու գաղտնիքը (11-12):

Իրողությունն այն է, որ երբ Աստծուն ներկայացնենք ամբողջական զգալու մեր ցանկությունը, կունենանք անբացատրելի խաղաղության զգացողությունը (Հմ.6-7), որը Քրիստոսի գործության, գեղեցկության ու շնորհքի խորքն է տանում:

Աղոթք - Հայր, օգնիր, որ Քեզ հանձնեմ կյանքս ապահովելու բոլոր ջանքերս ու դրա փոխարեն Քեզ հետ լինելու պարզև ընդունեմ: Ամեն:

Խորհրդավոր խաղաղության փորձառությունը կարող ենք ունենալ, երբ չենք ակնկալում:

Կարդա՛ր
Փիլիպ. 4. 10-19

...Ես սովորել եմ ինչի մեջ որ կամ, նրանով բավարարվել: Փիլիպ. 4.11

Նպատակ ու նշանակետ

2018-ին հայտնի մարզիկ Քուլին Օ, Բրայդը մի շատ խիզախ շգործ ստանձնեց՝ 54 օրում քայլելով անցնել Անտարկտիդայի ամբողջ 932 մղոն տարածքը:

Նկատի ունենալով հսկայական հեռավորությունն ու սառը միջավայրում անցկացնելիք տևական ժամանակը՝ նա ասաց. «Երբ տարված էի իմ այս ծրագրով ու կենտրոնացած էի իմ նշանակետի վրա, սկսեցի մտածել այս ճամփորդության խորիմաստ դասերի մասին»:

Այս իրավիճակը ծանոթ է Հիսուսին հավատացողներին: Այլ խոսքով՝ ծանոթ է հավատացյալի մեր կոչմանը, երբ կենտրոնանում ենք մեր կյանքի վրա, որը փառավորում է Աստծուն և Նրա մասին հայտնում ուրիշներին: Պողոսը, որի համար վտանգավոր ճամփորդությունները մշտական էին, ասում է. «Ես ոչ մի բանի չեմ նայում և իմ անձն էլ պատվական չեմ համարում, միայն թե ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը և ծառայությունը, որ Տեր Հիսուսից ստանձնել եմ Աստծու շնորհի Ավետարանը վկայելու համար» (Գործք 20.24):

Տեր Հիսուսի հետ մեր հարաբերություններում տեսնենք, թե որն է մեր հավատքի ճամփորդության նպատակը, մինչև հասնենք այն օրվան, երբ Տիրոջը կտեսնենք երես առ երես:

Աղոթք - Երկնավոր Հայր, մեր կյանքի ճանապարհին օգնիր, որ կարողանանք Քեզ պատվել մեր բոլոր արարքներով ու քաջալերել ուրիշներին, որ Քեզ հետ քայլեն: Ամեն:

Հիսուսի հետ ունեցած մեր հարաբերությունը թող ճշտի մեր կյանքի ընթացքն ու միջոց դառնա Իր հանդեպ մեր սերը հայտնելու:

Կարդա՛ր
Գործք 20. 17-24

Ես ոչ մի բանի չեմ նայում և իմ անձն էլ պատվական չեմ համարում, միայն թե ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը և ծառայությունը, որ Տեր Հիսուսից ստանձնել եմ Աստծու շնորհի Ավետարանը վկայելու համար: Գործք 20.24

Թողնելու կոչ

Երիտասարդ տարիներին մտադիր էի ամուսնանալ այն տղայի հետ, որի հետ սովորել եմ միջնակարգ դպրոցում: Սակայն երբ բաժանվեցի նրանից, ապագաս անորոշ էր, ու չգիտեի՝ ինչ անել: Վերջապես զգացի, որ Աստված առաջնորդում է, որ ես իրեն ծառայեմ՝ ուրիշներին ծառայելով:

Ընդունվելով Աստվածաբանական ճեմարան՝ հասկացա, որ Աստծո կոչին հետևելու համար պետք է թողնեմ ամեն բան, հեռանամ արմատներից, բարեկամներից ու ընտանիքից:

Երբ Հիսուսը քայլում էր Գալիլեայի ծովափին, տեսավ, որ Պետրոսն ու նրա եղբայր Անդրեասը ուռկան էին ձգում ծովը, որ ձուկ բռնեին և իրենց ապրուստը հոգան: Նա ասաց նրանց. «Իմ

հետևի՛ց եկեք, ու ես ձեզ մարդկա՛նց որսորդ կդարձնեմ» (Մատթ. 4. 19): Հետո Հիսուսը տեսավ ուրիշ երկու եղբայրների՝ Հակոբոսին ու Հովհաննեսին և նրանց էլ նույն բանն ասաց (Հմ.21):

Երբ աշակերտները Հիսուսի մոտ եկան, իրենց ունեցածը թողեցին: Պետրոսն ու Անդրեասը «թողած իրենց ուռկանները՝ նրա հետևից գնացին» (Հմ. 20): Հակոբոսն ու Հովհաննեսն էլ «նափն ու իրենց հորն իսկույն թողած՝ նրա հետևից գնացին» (Հմ.22): Ղուկասը գրում է. «Եվ նավերը ցամաք հանեցին, բոլոր բաները թողեցին ու նրա հետևից գնացին» (Ղուկ. 5.11):

Հիսուսի յուրաքանչյուր կոչ իր մեջ ուրիշ բաներից (ուռկան, նավ, հայր, բարեկամներ, ընտանիք, տուն) հրաժարվելու հորդոր ունի: Աստված մեզ բոլորիս հիրավիրում է իր հետ հարաբերվելու, ապա մեզանից յուրաքանչյուրին կանչում է ծառայելու:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, օգնիր հասկանամ, թե Քո կոչին հետևելու համար ի՞նչն եմ թողնելու: Ամեն:

Աստված քեզ համար էլ կոչում ունի:

Պատրա՞ստ ես լսելու և հնազանդվելու:

Կարդա՛

Մատթեոս 4. 18-22

Եվ նրանք, իսկույն իրենց ուռկանները թողած, նրա հետևից գնացին: Մատթ. 4.20

Ամբողջովին ճանաչված լինել

«Հիմա դու այստեղ չէիր լինի, եթե այնտեղ՝ վերևում մեկը չհսկեր», - բեռնատարի վարորդն ասաց մորս՝ մեքենան լեռան եզերքից քաշելուց ու անիվների հետքերը նայելուց հետո: Մայրս հղի էր ինձանով: Հետագայում նա հաճախ էր հիշում, թե ինչպես էր Աստված փրկել երկուսիս կյանքը և վստահեցնում էր, որ Աստված ինձ դեռ ծնվելուց առաջ է գնահատել: Մեզանից որևէ մեկը չի կարող խուսափել Աստծո ամենազեղումից ու ամենատես աչքից: 2500 տարի առաջ Նա Երեմիա մարգարեին ասաց. «Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ ես ընտրեցի քեզ» (Եր. 1.5): Աստված մեզ ավելի մոտիկից է ճանաչում, քան որևէ մեկը կարող է իմանալ և մեր կյանքի նպատակն ու իմաստը ճշտել: Նա ոչ միայն մեզ ձևակերպեց իր իմաստությամբ ու զորությամբ, այլև առանց մեր իմացության պահեց մեր կյանքի յուրաքանչյուր պահն ու մեր անձնական յուրաքանչյուր մանրամասնություն՝ սկսելով սրտի տրոփյունից, մինչև մեր ուղեղի զարմանալի աշխատանքը: Անդրադառնալով այն հարցին, թե ինչպե՞ս է մեր Երկնավոր Հայրը իր ձեռքերի մեջ պահում մեր գոյության յուրաքանչյուր երևույթը, Դավիթը բացականչում է. «Ինձ համար խիստ պատվական եղան քո բարեկամներն, Աստված, և շատ զորացան նրանց իշխանները» (Սաղմ. 138. 17): Աստված ավելի մոտ է մեզ, քան մեր վերջին շունչը: Նա է մեզ կազմել, մեզ լավ գիտե և արժանի է մեր պաշտամունքին ու փառաբանությունը:

Կարդա՛ր
Երեմիա 1. 1-8

Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ ես ընտրեցի քեզ: Եր. 1.1-8

Աղոթք - Հիանալի ես, ո՞վ Աստված: Շնորհակալ եմ, որ վերև պահում ու առաջնորդում ես ինձ կյանքիս յուրաքանչյուր պահի մեջ: Ամեն:

Աստված հսկում է քեզ ամեն պահի: Փա՛նք տուր Նրան:

Բաց էլեկտրալար

Դասախոս Նուրի Օրդուեյը, նկարագրելով Ջոն Դոնի «Սուրբ Դստեհեմ-14» ստեղծագործության ներգործությունն իր վրա, ասում է. «Ասես էլեկտրական մետաղալարի կպա»: Նա վերհիշում է այն պահը, երբ իր նախկին անաստվածությունից հետո ընդունել է գերբնականի կարելիությունը:

Բաց էլեկտրալարի դիպչելու նման է նաև Պետրոսի, Հակոբոսի ու Հովհաննեսի այն օրվա զգացումը, երբ նրանք Հիսուսի հետ լեռը բարձրացան ու ականատես եղան Նրա այլակերպությանը: Այնտեղ Հիսուսի «հագուստները փայլուն դարձան, ճյան պես խիստ սպիտակ» (Մարկ. 9. 3) և եղիան ու Մովսեսը երևացին, որ Հիսուսի հետ խոսում էին: Հիսուսը «լեռից իջնելիս նրանց պատվի-րեց, որ ոչ մեկի չպատմեն, ինչ որ տեսան, մինչև այն ժամանակը, երբ Մարդու Որդին մեռելների միջից հարություն առնի» (Հմ.9): Բայց նրանք չհասկացան, թե Հիսուսն ինչ նկատի ունենր, երբ ասում էր. «հարություն առնելուց հետո» (Հմ.10):

Հիսուսի ասածները աշակերտների համար անհասկանալի էին, որովհետև նրանք դեռ չէին կարողանում ըմբռնել Նրա մահվան ու հարության իմաստը: Տարիներ անց Պետրոսը նկարագրեց Քրիստոսի այլակերպությունը՝ որպես այն պահը, երբ «ականատես եղան նրա մեծափառությունը» (Բ.Պետ. 1.16):

Ինչպես դասախոս Օրդուեյն ու աշակերտները սովորեցին, մենք էլ, երբ տեսնենք Հիսուսի գործությունը, «բաց էլեկտրալարին դիպչելու» զգացողություն կունենանք: Ապրո՞ղ Քրիստոսը մեզ նշան է անում:

Աղոթք - Հայր, երբ աղոթքով քեզ ենք մոտենում, հանդիպում ենք ինչ-որ անհասկանալի բանի: Ների՛ր մեզ, եթե սովորական մի բան ենք նկատում Քո ներկայության փառավորությունը: Ամեն:

Դու էլ կարող ես ունենալ «բաց էլեկտրալարին դիպչելու» փորձառություն և կյանքդ փոխող Աստծո միջամտություն:

Կարդա՛

Մարկոս 9. 2-10

Ականատես եղան նրա մեծափառությանը:
Բ Պետրոս 1.16

Խանգարված ծրագրեր

Լողոպեղ դառնալու Ջեյնիի ծրագրերը հօդա ցնդեցին, երբ Լաշխատանքային փորձաշրջանում նրա ներկայացրած գործը շատ զգացական ստացվեց: Հետո իրեն առիթ ընձեռվեց թերթում հոդված գրելու, ինչի մասին երբևէ չէր մտածել: Տարիներ անց էլ դարձավ կարիքավոր ընտանիքների շահերի պաշտպան: Այդ ամենից նա եզրակացրեց. «Ետ նայելով կարող եմ ասել, թե Աստված ինչու է ծրագրերը փոխեց: Նա ավելի մեծ ծրագրեր ուներ ինձ համար»:

Աստվածաշնչում շատ պատմություններ կան վեճերի մասին: Իր երկրորդ ավետարանչական ճամփորդության ժամանակ Պողոսն ուզում էր Ավետարանը հասցնել Բյուզանդիա, բայց Հիսուսի Հոգին չթույլատրեց (Գործք 16. 6-7): Պողոսի համար դա անհասկանալի էր, որովհետև իր ծրագրերը Աստծո առաքելությանը համընթաց էր: Իր հարցի պատասխանը նա մի գիշեր ստացավ երազում, երբ իրեն հայտնեցին, որ Մակեդոնիայում ավելի մեծ է իր կարիքը: Այնտեղ էր, որ Պողոսը հիմնեց Եվրոպայի առաջին եկեղեցին:

Սողոմոնը նույնպես ասում է. «Բազմաթիվ խորհուրդներ կան մարդու սրտում, բայց Աստծու խորհուրդը մնում է հավիտյան» (Առ. 19. 21):

Ծրագրեր մշակելը տրամաբանական է:

Մեր մարտահրավերը լսելն ու հնազանդվելն է՝ իմանալով, որ պետք է Աստծուն վստահել:

Աղոթք - Ամենագե՛տ Աստված, երբ ծրագրերս խանգարվե՛ն, Քեզ նայելու հավատք տո՛ւր, որովհետև Դու ավելի մեծ նպատակներ ունես իմ կյանքի համար: Ամեն:

Կարդա՛ր
Գործք 16. 6-10

Բազմաթիվ խորհուրդներ կան մարդու սրտում, բայց Աստծու խորհուրդը մնում է հավիտյան: Առ. 19.21

**Ծրագրերդ հանձնի՛ր Աստծուն և պատրաստ եղի՛ր
Նրա ծրագրերին հետևելու:**

Երկուսով ավելի լավ է

1997-ին Հավայան կղզիներում անցկացված «Երկաթե մարդ» հեռուստաֆիլմի ժամանակ երկու կանայք՝ Ինգրա Համն ու Վելչը, ձգտում էին վերջնագծին հասնել: Հոգնած ու շնչասպառ նրանք վազեցին այնքան, մինչև որ խփվեցին իրար ու միասին ընկան գետնին: Դժվարություններ փորձեցին ոտքի կանգնել, սակայն վերջնագծից ընդամենը 20 մետր հեռու նորից ընկան: Երբ նրանցից մեկը սկսեց սողալով առաջ գնալ, ժողովուրդը սկսեց ծափահարել: Իսկ երբ մրցակիցը հետևեց նրա օրինակին, մարդիկ ավելի մեծ աղմուկով բացականչեցին: Ինգրա Համը չորրորդը հասավ վերջնագծին ու հոգնած ընկավ իր աջակիցների գիրկը, ապա շրջվելով ձեռքը մեկնեց իր հետ ընկած մրցակցին: Վելչը իր հոգնած թևերը մեկնեց և Ինգրա Համի օգնությունը

Կարդա՛

ժողովող 4. 9-11

Երկու հոգով ավելի-լավ է, քան մենակ, որովհետև ավելի վարձ կա նրանց վաստակի համար: Ժող. 4.9

հատեց վերջնագիծը՝ գրավելով 5-րդ տեղը: Մարդիկ աղմուկով ծափահարեցին: Այս գույքի 140 մղոն լողի, հեծանվավազքի և վազքի մրցումը շատերին ոգեշնչեց: Իսկ ինձ համար այդ հոգնաբեկ մրցակիցների՝ միասին հաղթելու պատկերը տպավորվել է որպես Ժողովողի 4. 9-11-ում եղած ճշմարտության հաստատում: «Երկու հոգով ավելի լավ է, քան մենակ, որովհետև ավելի վարձ կա նրանց վաստակի համար: Քանի որ եթե մեկն ընկնի, նրա ընկերը կկանգնեցնի նրան, բայց վա՛յ մենակին, որ ընկնի, երբ ուրիշ մեկը չկա, որ բարձրացնի նրան» (Հմ.9-10): Մեր կյանքում անպայման ընկնելու վտանգ լինում է: Գիտակցումը, որ մենակ չենք, մեզ կարող է մխիթարել: Մեզ սիրող Հայրը օգնում է մեզ և գորացնում, որպեսզի կարողանանք հասնել կարիքավորներին՝ դրանով հաստատելով, որ իրենք մենակ չեն:

Աղոթք - Ամենակարող Հայր, շնորհակալ եմ, որ միշտ ներկա ես և օգնում ու առիթներ ես տալիս, որ մենք էլ ուրիշներին օգնության հասնենք: Ամեն:

Ինչպես որ Աստված է մեզ օգնում, մենք էլ պատրաստ լինենք ուրիշներին օգնելու:

Աչքի տեսածից ավելի

Ռողեռ մարգաձևով զբաղվողները սովորաբար 4 մատ են ունենում մի ձեռքի վրա, որովհետև նրանց բուլթ մատը հիմնականում պոկվում է պարանոժ կապած ցուլի շարժումները կառավարելիս: Բլթամատ կորցնելու վտանգը այդ մարդկանց հետ չի պահում իրենց աշխատանքից, բայց մատի բացակայությունը շատ բաներ դժվարացնում է, իհարկե: Հապա փորձիր ատամներդ լվանալ, մազերդ սանրել, կոշիկներիդ կապերն ամրացնել, կամ էլ ճաշ ուտել առանց բլթամատի: Կտեսնես, որ մարմնի այդ փոքրիկ մասը շատ կարևոր դեր ունի:

Պողոս առաքյալը ներկայացնում է եկեղեցում գոյություն ունեցող նման մի իրավիճակ, երբ փոքրամարմին ու թույլ ձայն ունեցող անդամներին երբեմն ասում են. «Ինձ պետք չես» (Ա. Կորնթ. 12.21): Եվ դա կարող է բարձրաձայն ասվել:

Աստված մեզ կոչ է անում, որ համահավասար հետաքրքրություն ու հարգանք ցուցաբերենք ուրիշների հանդեպ (Հմ.25): Մենք Քրիստոսի մարմնի մասերն ենք (Հմ.27)՝ անկախ մեր ստացած պարգևներից: Մենք միմյանց կարիքն ունենք, որովհետև մեզանից ոմանք աչք ու ականջ են, ոմանք էլ՝ այսպես ասած «բուլթ մատ»: Մեզանից յուրաքանչյուրը կարևոր դեր ունի Քրիստոսի մարմնի մեջ, երբեմն մեր տեսածից ավելի:

Աղոթք - Հայր, ների՛ր մեզ, երբ մոռանում ենք, որ մեզանից յուրաքանչյուրը Քրիստոսի մարմնի մասն է, և Դու՛, միայն Դու՛ ես Գլուխը: Ամեն:

Քրիստոսի մարմնի մեջ դու կարող ես աչք լինել, բայց քաջալերի՛ր նրան, որը բթամատ է:

Կարդա՛ր
Ա Կորնթ. 12. 20-27

Արդ դուք Քրիստոսի մարմինն եք ու մեկ առ մեկ՝ նրա անդամները:
Ա Կորնթ. 12.27

Մաքուր պաշտամունք

Ժողին հոգևորում էր մի եկեղեցում, որը հայտնի էր իր լավ ծրագրերով ու թատերական ներկայացումներով: Սակայն նա մտահոգված էր եկեղեցու այդ բազմազբաղուծությամբ, և կասկածներ ուներ, որ եկեղեցու աճը պայմանավորված է հենց այդ առևտրային գործունեությամբ: Նա որոշեց իմանալ ճշմարտությունը և մեկ տարվա համար հանեց բոլոր ավելորդ ծրագրերն ու խնդրեց եկեղեցու անդամներին կենտրոնանալ բացառապես այն գաղափարի վրա, որ եկեղեցին պարզ տաճար է, որտեղ մարդիկ Աստծուն են պաշտում:

ժողովի որոշումը կարող է ծայրահեղ թվալ, սակայն հիշենք այն պահը, երբ Հիսուսը մտավ Երուսաղեմի տաճարի դրսի սրահները: Այդ սուրբ տեղը, որ պետք է լցված լիներ պարզ աղոթքներով, պաշտամունքի անվան տակ վերածվել էր առևտրի վայրի, աշխարհիկ շուկայի: Հիսուսն «սկսեց դուրս հանել տաճարում վաճառողներին ու գնողներին և շուռ տվեց փող փոխողների սեղանները և աղավնի ծախողների աթոռներն էլ ջարդեց» (Մարկ. 11. 15): Տեսնելով նրանց արածները՝ բորբոքվեց ու ասաց. «Իմ տունը բոլոր ազգերի համար աղոթքի տուն պետք է կոչվի: Իսկ դուք այն ավազակների որջ եք դարձրել» (Հմ.17):

Առևտուր անելու, առևտրով զբաղվելու մեջ սխալ բան չկա: Սակայն դա՛ չէ եկեղեցու նպատակը: Մենք Աստծո կենդանի տաճարն ենք, մեր գլխավոր պարտականությունը Տիրոջը պաշտելն է:

Աղոթք - Հայր, ցույց տուր մեզ, թե որտե՞ղ է մեր պաշտամունքը ձախողվում: Օգնի՛ր տեսնել, որ ամեն բան Քո մասին է: Ամեն:

Զգիտեմ, թե դու ինչ պատճառով ես եկեղեցի հաճախում, բայց Տերն ակնկալում է, որ աղոթքի ու պաշտամունքի համար իր տուն գնաս:

Կարդա՛

Մարկոս 11. 15-18

Իմ տունը բոլոր ազգերի համար աղոթքի տուն պետք է կոչվի: Մարկ. 11. 17

Աստված հսկում է

Մեր փոքրիկ թոռնիկը հրաժեշտի համար ձեռքը թափահարեց, ապա շրջվելով հարցրեց. «Տատիկ, ինչու՞ ես դուռն մոտ կանգնում և նայում մինչև մեր հեռանալը»: Համեմատ Տված հարցը իր տարիքի համեմատ սրամիտ համարելով՝ ես ուզեցի լավ պատասխան տալ ու ասացի. «Դա քաղաքավարությունն է, դուք իմ հյուրն եք և մինչև վերջ իմ նայելը նշանակում է, որ ես մտածում եմ ձեր մասին»: Նա լսեց իմ պատասխանն ու մեծավարի մի փոքր տարակուսանքով նայեց: Եվ ես ասացի պարզ ճշմարտությունը. «Նայում եմ, որովհետև սիրում եմ ձեզ: Երբ տեսնում եմ ձեր մեքենայի հեռանալը, վստահ եմ լինում, որ դուք ապահով տուն եք հասնելու»: Թոռնիկս ժպտաց, ջերմորեն գրկեց ինձ ու վերջապես հասկացավ ասածս:

Կարդա՛ր
Սաղմոս 120. 5-8

Տերը քեզ կպահպանի:
Սաղմ. 120.5

Եվ ես հիշեցի, որ մեր երկնավոր Հայրը միշտ հսկում է մեզ բոլորիս: Ինչպես 120-րդ սաղմոսն է ասում. «Տերը քեզ կպահպանի, Տերը քեզ կընդունի իր աջ ձեռքով» (Հմ.5):

Ի՛նչ հիանալի երաշխիք է Տիրոջ այս խոսքը Իսրայելի ուխտագնացներին, որոնք Աստծուն պաշտելու համար բարձրանում էին դեպի Երուսաղեմ տանող վտանգավոր ճանապարհներով: «Ցերեկն արեգակը քեզ չի վնասի, ոչ էլ լուսինը՝ գիշեր ժամանակ: Տերը քեզ կպահպանի ամեն չարիքից, Տերը կպահպանի քեզ» (Հմ.6-7): Մեր դեպքում նույնպես, երբ, դիմագրավելով հոգևոր վտանգներ ու սպառնալիքներ, քայլում ենք մեր կյանքի ուղիներով, «Տերը կհսկի մոտքն ու ելքը» (Հմ.8):

Աղոթք - Մեր սիրո՞ղ Հայր, շնորհակալ եմք, որ հսկում ու պահպանում ես մեզ, երբ անցնում ենք մեր կյանքի ճանապարհը: Ամեն:

Բնական է, որ մեր կյանքի ընթացքում դժվարին «լեռներ» կբարձրանանք, վստահ լինենք, որ Աստված հսկում է մեզ:

Կոտորված՝ բաժնեկցելու համար

Ավտովթարի պատճառով կնոջը կորցնելուց հետո ամեն հինգշաբթի հանդիպում էինք: Երբեմն հարցեր էր ունենում, որոնց պատասխանները չկային, մեկ այլ դեպքում ուղղակի հիշատակներով վերապրելու համար էր գալիս: Ժամանակի ընթացքում նա ընդունեց, որ այդ վթարը մեր աշխարհի թերուխտների հետևանք էր, և Աստված այդ պարագայում էլ կարող է գործել: Մի քանի տարի անց նա մեր եկեղեցում դասընթաց անցկացրեց վշտի ու ողբալու մասին: Շուտով դարձավ այն մարդը, որի մոտ էին գնում կորուստ ունեցողները: Երբեմն մեզ թվում է, թե տալու որևէ բան չունենք՝ առանց մտածելու, որ Աստված կարող է մեր այդ «քիչ ունեցածը» վերցնել ու դարձնել «պետք եղածից ավելին»:

Երբ Հիսուսն իր աշակերտներին պատվիրեց ժողովրդին ուստելու բան տալ, նրանք բողոքեցին, թե երկու ձկնից ու հինգ հացից բացի ուրիշ բան չունեն: Այդժամ Հիսուսը բազմապատկեց նրանց ունեցած աղքատիկ ուստելիքը և նրանց տալով՝ պատվիրեց, որ «ժողովրդի առաջ դնեին» (Ղուկ. 9. 16): Քրիստոսը հրաշքը գործում է, բայց հաճախ ուզում է մեզ էլ օգտագործել:

Հիսուսը մեզ ասում է. «Իմ ձեռքերի մեջ դրեք ձեզ ու ձեր ունեցածը: Զեր խաթարված կյանքը, ձեր պատմությունը, ճախողումը, ցավն ու տառապանքը և կզարմանաք, թե Ես դրանցով ինչեր կանեմ: Հիսուսը գիտի մեր դատարկությունից լիություն ստանալ ու մեր տկարություններից իր գործությունը հայտնել:

Աղոթք - Տե՛ր, իմ «քիչ ունեցածը» վերցրու՛ և դարձրու՛ «պետք եղածից ավելին»: Վերցրու՛ ցավս, անհաջողությունս ու տառապանքս և ավելի մեծ բան դարձրու: Ամեն:

Կոտորվածության զգացում միշտ էլ կունենանք: Բայց պետք է, որ աղոթքով մեր այդ ցավերը Տիրոջը հասցնենք:

Կարդա՛

Ղուկաս 9. 11-17

Պուք դրանց ուստելիք տվեք: Ղուկ. 9.13

Նա ամեն բան գիտե

Արդեն երկու տարի մեր տանը մի փոքրիկ ջրամբարում ապրում էր Ֆին անունով սիամական ձուկը: Կրտսեր դուստրս հաճախ զրուցում էր նրա հետ, և երբ մանկապարտեզում խոսել են ընտանի կենդանիների հետ, նա հպարտ հայտարարել է, որ ձուկը իր սեփականությունն է: Բայց մի օր ձուկը սատկեց, և աղջիկս շատ վշտացավ:

Մայրս ինձ հուշեց, որ ուշադիր լինեմ դստերս զգացումներին և նրան ասեմ, որ Աստված գիտե նրա մասին: Համաձայնեցի, որ Աստված ամեն բան գիտե, բայց միաժամանակ մտածեցի, որ այդ խոսքը պետք է, որ մխիթարական լինի:

Հետո հասկացա, որ Աստված ոչ թե պարզապես տեղյակ է մեր կյանքում կատարվող դեպքերին, այլ մեծ սիրով թափանցում է մեր հոգու մեջ և տեսնում, թե դրանք ինչ ազդեցություն են թողնում մեր կյանքի վրա: Նա հասկանում է, որ «փոքր բաները» մեզ համար մեծ կարող են թվալ:

Հիսուսը տեսավ այրու տվածի մեծությունն ու նրա սիրտը, երբ նա իր վերջին երկու լուծման ձգեց տաճարի գանձանակը: Նա իր աշակերտներին ասաց, թե ինչ է նշանակում իր համար, երբ «այդ աղքատ որբեկայրին գանձանակը գցողների մեջ ամենաշատը գցեց...նա իր չքավորությունից գցեց այն ամենը, ինչ ուներ, իր կյանքի ամբողջ ապրուստը» (Մարկ.12. 43-44):

Այրին չխոսեց իր վիճակի մասին, բայց Հիսուսը նկատեց, որ այն, ինչը ուրիշների համար փոքր ընծա կարող էր համարվել, այրու համար մի ամբողջ զոհաբերություն էր:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ ամբողջությամբ հասկանում ես ու սիրում: Օգնիր, որ կարողանամ զգալ Քո մխիթարությունը և նկատի ունենամ Քո անսահման իմացությունն իմ մասին: Ամեն:

Տերը գիտե ու տեսնում է մեր մտածածը, արածն ու տվածը: Ուստի վստահենք ու ապավինենք Իրեն:

Կարդա՛ր
Մարկոս 12. 41-44

Նրա իմաստությունը
սահման չունի:
Սաղմ. 146.5

Ամեն առիթ

Երբեւէ վիշապ բռնե՞լ ես: Ես չէի բռնել, մինչև այն պահը, երբ Ետղաս Համոզեց, որ բջջային հեռախոսիս մեջ ավելացնեմ մի խաղ: Այն աշխարհի քարտեզն է պատկերում և խաղացողին թույլ է տալիս բռնել մոտակա գունավոր արարածներին: Ի տարբերություն մյուս խաղերի՝ սա շարժում է պահաջում և քո գնացած տեղերը խաղադաշտի մաս են դառնում: Իսկ արդյունքն այն է, որ ավելի շատ եմ քայլում: Այս խաղը խաղալիս ուզում եմք հնարավորինս շատ բռնել մեր շրջապատի արարածներին: Դյուրին է կենտրոնանալ ու նույնիսկ տարվել մի խաղով, որը ստեղծված է հենց խաղացողներին զրավելու համար: Բայց երբ խաղում էի այդ խաղը, մտածեցի. «Արդյո՞ք նույնքան նպատազրված եմ իմ շուրջը եղող հոգևոր առիթները օգտագործելիս»: Պողոսը թելադրում է, որ մենք արթուն լինենք մեր շուրջը եղող Աստծո գործի համար: Կողոսացիներին ուղղված նամակի 4-րդ գլխում նա խնդրեց, որ Աստված իրեն առիթ տա Ավետարանը տարածելու (Հմ.3): Ապա մարտահրավեր նետեց՝ ասելով. «Դրսինների հետ իմաստությանձմբ վարվեցե՛ք ու ժամանակը օգտագործեցե՛ք» (Հմ.5): Նա չէր ուզում, որ նրանք Քրիստոսին ուրիշներին ներկայացնելու առիթը կորցնեին: Իսկ զրա համար պետք էր նրանց ու նրանց կարիքները տեսնել ու շնորհքով պատասխանել (Հմ.6): Մեր աշխարհում այդ խաղերից ավելի շատ ուրիշ բաներ կան, որ մեր ժամանակի ու ուշադրության կարիքն ունեն: Աստված մեզ հրավիրում է նավարկել իրական աշխարհի արկածներում և ամեն օր առիթներ փնտրել, որոնք Իր սերը ցուց կտան:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Դու հաճախ իմ շուրջը գտնվող մարդկանց օգտագործում ես: Օգնի՛ր, որ կարողանամ օգտագործել ներկայացված ամեն առիթ քո սերը ցույց տալու համար: Ամեն:

Աստված կարող է քեզ օգտագործել, որ կարողանաս մեկ ուրիշի վրա ազդել և նրան Աստծո մոտ առաջնորդելու:

Կարդա՛ր
Կողոս. 4. 2-5

Դրսինների հետ իմաստությանձմբ վարվեցե՛ք ու ժամանակը օգտագործեցե՛ք:
Կող. 4.5

Խփել խլուրդին

Գիտենք, թե որևէ վիրահատությունից հետո ինչպես են սկսում իրար ետևից վճարման մուրհակները ստացվել վիրահատող բժշկից, լաբորատորիայից ու հիվանդանոցից: Ձեյսոնը նույնպես շտապ վիրահատությունից հետո նման փորձառություն ունեցավ և դժգոհեց, որ ապահովագրական ընկերությունից ստացված հետո էլ հազարավոր դոլարների պարտք ենք: «Դրանք վճարելուց հետո միայն մեր կյանքը կհեշտանա, -ասում էր նա: - Ինձ թվում է, թե ես խաղում եմ այն խաղը, երբ անընդհատ իրենց բներից դուրս են գալիս խլուրդները և խաղացողը մուրճիկով խփում է նրանց»:

Երբեմն կյանքը մեզ խփում է նույն ձևով: Պողոս առաքյալը նման պարագաների համար է ասել. «Իտե՛մ պակասություն քաշելը և առատություն մեջ լինելն էլ. ամեն բանում ամեն ինչի տեղյակ եմ, կշտանալուն էլ, քաղցելուն էլ, հավելուրդով ունենալուն էլ, պակասություն քաշելուն էլ» (Փիլ.4.12): Ո՞րն է գաղտնի՞քը. «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Հմ.13): Երբ ես առանձնապես դժվարին կացություն մեջ էի, բարեմաղթանքի մի բացիկի վրա կարդացի. «Եթե այստեղ չէ, որտե՞ղ է հապա»: Լավ հիշեցում այն մասին, որ եթե ինքնաբավ չեմ հիմա և այստեղ, ի՞նչ երաշխիք, որ ինքնաբավ կլինեմ մեկ այլ պարագայում: Ինչպե՞ս կարելի է սովորել Տեր Հիսուսին վստահել: Թերևս կենտրոնացման հարց է. շնորհակալ լինել ավելի բարի բաների համար, ավելին սովորել հավատարիմ Հոր մասին, աճել վստահություն ու համբերատարություն մեջ, ընդունել, որ կյանքը Աստծո մասին է, ոչ թե իմ, և կամ էլ Իրենից խնդրել, որ սովորեցնի ինքնաբավ լինել, գոհանալ մեր վիճակից:

Աղոթք - Հայր, Դու բարի ես և Քո արածները նույնպես բարի են: Սովորեցրու՛ ինձ ինքնաբավ լինել: Ուզում եմ սովորել: Ամեն:

Փոխի՛ր կենտրոնացումդ, որպեսզի կարողանաս ինքնաբավ լինել:

Կարդա՛ր
Փիլիպ. 4. 10-20

Բայց մեծ շահ է խկական աստվածապաշտությունը՝ գոհունակության հետ: Ա Տիմ. 6.6

Կյանքից ավելի լավ

Թեև Մերին սիրում էր Հիսուսին, բայց կյանքը շատ դժվար էր ու դաժան նրա հանդեպ: Մահացել էին իր երկու որդիներն ու թոռները: Հետո կաթվածի հետևանքով ինքը անդամալույծ էր դարձել: Մի քիչ լավանալուց հետո նա սկսեց եկեղեցի հաճախել ու թեև դժվարությամբ էր խոսում, Աստծուն փառաբանել՝ ասելով. «Հոգիս սիրում է Հիսուսին, փառք Իր սուրբ անվանը»:

Մերիի այս փառաբանական խոսքերից շատ առաջ Դավիթը, երբ Հրեաստանի անապատում էր, գրեց. «Աստված, Աստված իմ, ես առավոտից քեզ եմ դիմում. հոգիս ծարավ է քեզ, առավել ևս մարմինն իմ, ինչպես մի անապատ և անջուր երկիր, ուր ճամփա չկա» (Սաղ. 62. 2.3):

Թերևս դու էլ ես լինում դժվարությունների մեջ, երբ նեղվում ես անորոշությունից ու կարիքից: Անհանգիստ վիճակները կարող են մեզ շփոթության մատնել, սակայն պետք է շեղվել ընթացքից, հարկավոր է կառչել Նրան, ով կարեկից է (Հմ.6), հագեցնում է մեզ (Հմ.6), մեզ օգնական է (Հմ.8) և Նրա աջը նեցուկ է մեզ (Հմ.9): Քանի որ Աստծո սերը կյանքից ավելի լավ է, Մերիի ու Դավիթի նման մենք էլ կարող ենք մեր գոհացումը հայտնել ու փառաբանություն խոսքերով Աստծուն պատվել (Հմ.4-6):

Աղոթք - Տե՛ր, երախտապարտ եմ, որ կյանքիս հուսահատ պահերին կարող եմ Քեզ փառաբանել, որովհետև Քո՛ սերն ու կարեկցությունը կյանքից ավելի լավ է: Ամեն:

Կարդա՛ր Սաղմոս 62.1-8

Քո ողորմությունն ավելի լավ է, քան կյանքս, և շրթունքներն իմ պիտի գովեն քեզ:
Սաղմ. 62.4

Կարող եմք լինել «անապատային» վիճակներում, սակայն Դավթի այս խոսքերը կբաջալերեն մեզ:

Վճարված հաշվեգիրը

Տիգերիացի վաճառական **Ջիլը**, հիվանդանոցում տեսնելով **Սարունքը** վիրակապած երիտասարդին, հետաքրքրվեց, թե ի՞նչ է պատահել: «Մեկը կրակել է ինձ վրա», - պատասխանեց երիտասարդը: Նրա վիճակը բավական լավ էր, և կարող էր տուն գնալ, սակայն նրան դուրս չէին գրում, քանի դեռ կառավարութայան հաստատած կարգի համաձայն՝ հաշվեգիրը չէր վճարել: **Ջիլը** իր բարեգործական կազմակերպության միջոցներով անանուն ձևով փակեց հաշիվը՝ հուսալով, որ այդ օգնությունն ստացողը մի օր ինքն էլ ուրիշներին կօգնի:

Աստծո տված բարիքներից բաժին հանելու և տալու խորհուրդը ամբողջ Աստվածաշնչի մեջ կա: Օրինակ, երբ **Մովսեսը** Իսրայելի ժողովրդին ցուցումներ էր տալիս, թե ինչպես են ապրելու խոստացյալ երկրում, նրանց ասաց, որ **Աստծո** սերը հայտնելու համար նախ իրենց ունեցածից տան **Աստծուն** (Բ.Օրին. 26.1-3), ապա օգնեն կարոտյալին՝ գաղթականին, որբին ու այրիին (Հմ.12): Որովհետև նրանք ապրում են մի երկրում, որտեղ «կաթ ու մեղր է հոսում» (Հմ.15):

Մենք էլ կարող ենք **Աստծո** սերը տարածել՝ բաժանելով մեր ունեցածը: Հնարավոր է՝ **Ջիլի** նման տալու առիթ չունենանք, բայց կարող ենք դիմել **Աստծուն**, որ մեզ ցույց տա, թե ո՞վ ունի մեր կարիքը և ինչպե՞ս օգնենք նրան:

Աղոթք - Հայր, շնորհակալ ենք, որ հոգում ես կարոտյալների հոգսերը: Բաց աչքերս, որ տեսնեմ նրանց նյութական ու հոգևոր կարիքները և օգնի՛ր, որ կարողանամ լավագույնս անել: Ամեն:

**Նայի՛ր շուրջդ ու տես, թե ով ունի օգնության կարիք:
Փորձի՛ր լավագույնս անել ու տալ:**

Կարդա՛

Բ. Օր. 26. 12-15

Տասանորդ կտաս այս անգամ դևտացուն, եկվորին, որբին ու այրուն:

Բ Օր. 26.12

Հիանալի հմտություն

Մեր քույր ի երգչախմբի ղեկավարը վարեց համերգը և մի-ատամանակ նվագակցում էր: Նա այնքան վարպետորեն կատարեց այդ երկու պարտականությունները, որ համերգի ավարտին, տեսնելով, որ հոգնած տեսք ունի, ես հետաքրքրվեցի նրա որպիսությունը: Պատասխանեց, որ ինքը այսպիսի բան նախկինում երբեք չէր արել ու բացատրեց, որ դաշնամուրը այնքան աններդաշնակ էր, որ ինքը ստիպված է եղել բավական դժվարու-թյուններ հաղթահարել: Ես դարձյալ զարմացա նրա հմտությամբ ու սքանչացա Արարչով, որ մարդուն ստեղծում է նման կարողությամբ:

Դավիթ թագավորն ավելի մեծ սքանչելիքի մասին գրեց՝ ասելով. «Գոհու-թյուն պիտի մատուցեմ քեզ, Տե՛ր, քանզի ահեղ ու սքանչելի ես դու, սքանչելի են գործերը քո, որոնք ես շատ սիրեցի» (Սաղմ. 138.14): Մարդկային կարողությունների, թե ընություն հրաշալիքների մեջ եղած սքանչելիքները արտացոլում են Ստեղծողի մեծափառությունը:

Մի օր, երբ Աստծո ներկայությունը զգանք, Նրան պիտի փառավորենք այս խոսքերով. «Արժանի՛ ես, Տե՛ր և մեր Աստված, որ ընդունես փառքը և գորությունը, դու, որ բոլոր բաներն ստեղծեցիր, ու քո կամենալով կան և ստեղծվեցին» (Հայտն. 4.11): Աստծո՛ մեզ տված հրաշալի հմտություններն ու իր ստեղծած գեղեցկությունը իրեն պաշտելու հիանալի պատճառներ են:

Աղոթք -Հայր, որքան հիանալի ես: Քո մատնահետքերն են տեսնում ամենուր: Շնորհակալ եմ ամեն ինչի համար: Ամեն:

Նայի՛ր ու տե՛ս Աստծո հիանալի ու սքանչելի ստեղծագործությունը: Փառավորի՛ր իրեն ու բարձրացրու Նրա անունը:

Կարդա՛

Սաղմոս 138. 1-14

Գոհություն պիտի մատուցեմ քեզ, Տե՛ր, քանզի ահեղ ու սքանչելի ես դու, սքանչելի են գործերը քո, որոնք ես շատ սիրեցի: Սաղմ. 138.14

Նույնիսկ խնդրելուցդ առաջ

Բարեկամներս՝ Ռոբերտոն ու Քոլին, տասնամյակների ամուսիններ են: Ես սիրում եմ հետևել նրանց շփումներին: Ընթրիքի ժամանակ մեկը կարագն է փոխանցում՝ նախքան մյուսի ասելը: Մյուսը ջրի բաժակն է լցնում ճիշտ ժամանակին: Երբ պատմություններ են պատմում, լրացնում են միմյանց նախադասությունները: Թվում է, թե իրար մտքեր են կարգում:

Երբ Եսայի մարգարեն պատկերում է Աստծո ու մարդկանց հարաբերությունը գալիք թագավորությունում, նկարագրում է քաղցր ու մտերիմ հաղորդակցություն: Աստված իր ժողովրդի մասին ասում է. «Այնպես պիտի լինի, որ դեռ նրանք ձայն չտված՝ պիտի լսեմ նրանց, դեռ նրանք չխոսած՝ պիտի ասեմ, թե՛ ի՞նչ եք ուզում» (Ես. 65. 24):

Սակայն դա ինչպե՞ս է հնարավոր: Կան բաներ, որոնց համար տարիներ շարունակ ազդեցել եմ անպատասխան: Հավատում եմ, որ Աստծո հետ մեր մտերմության մեջ աճելով և մեր սրտերը իր ցանկությունը հավասարեցնելով՝ մենք կկարողանանք ուզել իր փափագածը: Ազդեցելիս շատ այլ բաների կողքին խնդրում ենք այն բաները, որոնք Աստծո թագավորության մաս են կազմում, ինչպես նկարագրված է Եսայի 65-ում. «Նրա մեջ այլևս լացի ձայն և կամ բոթի ձայն չպիտի հնչի» (Հմ.19), ապահով տներ, առատ ուտելիք, իմաստալից և օգտակար գործեր (21-23) ու խաղաղություն երկրի մեջ (Հմ.25):

Երբ Աստծո թագավորությունը իր ամբողջությամբ գա, Աստված մեր բոլոր ազդեցներին կպատասխանի:

Աղոթք - Դայր, շնորհակալ եմ, որ լսում ես իմ աղոթքները: Դավատում եմ, որ սիրում ես ինձ ու ամեն բան պիտի անես: Խնդրում եմ փոխի՛ր ցանկություններս, որպեսզի ուզեմ այն, ինչ Դու ես ուզում: Ամեն:

Աղոթի՛ր Աստծուն, որովհետև բարի Աստված տալով՝ Նա հոգում է քո բոլոր կարիքները:

Կարդա՛ր Եսայի 65.17-25

Նրանք ձայն չտված՝ պիտի լսեմ նրանց, դեռ նրանք չխոսած՝ պիտի ասեմ, թե՛ ի՞նչ եք ուզում: Ես. 65.24

Մահվան դատապարտելու ուրախություն

1995թ. էնթոնի Ռեյ Հինթընը անարդարացիորեն դատապարտվեց ճաշարանի երկու տնօրենների սպանության համար: Թեև նա հանցանքի ժամանակ կիրառված չէր հեղել այդ վայրից, սակայն իրեն համարեցին հանցապարտ և մահվան դատապարտեցին: Դատավարության ժամանակ նա ներեց իր դեմ սուտ վկայություն տվողներին՝ ասելով, թե ինքը, ի հեճուկս այս անարդարության, ուրախություն ունի սրտում. «Մահից հետո ես երկինք եմ գնալու, - ասաց նա: - Դու՞ք ուր եք գնալու»:

Ռեյը հաջողությամբ անցավ նաև ստի դետեկտորի քննությունը, սակայն դա էլ անտեսվեց, և նրան դատապարտելու գործընթացը շարունակվում էր: Մահվան դատավճիռը շատ ծանր էր:

Վերջապես մոտ երեսուն տարի անց, 2015-ի ավագ ուրբաթ օրը ԱՄՆ-ի Գերագույն դատարանը փոխեց դատավճիռը:

Ռեյի կյանքը Աստծո իրականության վկայությունն է: Հիսուսի հանդեպ իր ունեցած հավատը Ռեյին ուղեկցում էր դատավարությունից դեռ շատ առաջ (Ա.Պետ. 1. 3-5): Նա անարդարության դեմ հանդիման գերբնական ուրախության փորձառությունն ունեցավ (Հմ.8): Ազատ արձակվելուց հետո նա ասաց. «Բանտում բոլորովին չկարողացան իմ ուրախությունն ինձանից խլել»: Այդպիսի ուրախությունը փաստում է, որ իր ունեցած հավատն անկեղծ է (Հմ.7-8):

Մահվան դատապարտելու ուրախություն: Դժվար է այն կեղծել: Աստված թեև չի երևում, սակայն գոյություն ունի և մեր փորձությունների մեջ պատրաստ է պահպանելու մեզ:

Աղոթք - Հուլյսի՛ Աստված, մեզ լցրու՛ ուրախությամբ ու խաղաղությամբ, որովհետև վստահում ենք Քեզ՝ հակառակ մեր պայմաններին: Ամեն:

Դժվարության ու տառապանքի պահին Աստված Քեզ կարող է ուրախություն տալ:

Կարդա՛ր
Ա Պետ. 1. 3-9

Որին հավատացիք, թեև հիմա չեք տեսնում, և ուրախ եք՝ անպատմելի ու փառավոր խնդությանը: Ա Պետ. 1.8

Հաճույք գրքի մեջ

Ցուևատուկու ճապոներեն բառ է, որն ասվում է այն մարդկանց մասին, որոնք սիրում են գրքեր հավաքել, բայց դրանք չեն ավարտում: Անկողնու կողքի պահարանին դրված գրքերը վկայում են, որ մարդը սովորելու կամ այլ ժամանակում ու վայրում հայտնվելու ցանկություն ունի և անընդհատ այդ գրքերի էջերում է փնտրում այդ հաճույքն ու ներշնչումը: Հետևաբար գրքերի կույտը միշտ մնում է:

Գրքի միջոցով հաճույք ու օգնություն գտնելու գաղափարը ավելի ճշմարիտ է Աստվածաշնչի պարագայում, հատկապես Իսրայելի ժողովրդի նոր առաջնորդ նշանակված և ժողովրդին դեպի խոստացյալ երկիրն առաջնորդող Հեսուևի ասածների մեջ խորանալու իմաստով: Գնահատելով Հեսուևին

սպասվող դժվարությունը՝ Աստված վստահեցրեց նրան. «Բեզ հետ կլինես» (Հմ.5): Եվ պատվիրեց. «Այս օրենքների գիրքը քո շուրթերից չհեռացնես, այլ գիշեր-ցերեկ դրա մասին մտածի՛ր, որպեսզի գիտենաս կատարել բոլոր դրա մեջ գրվածները» (Հեսուև 1.8): Թեև Հեսուևն ուներ օրենքի գիրքը, սակայն պետք է միշտ ավելի ուշադիր լիներ՝ հասկանալու համար, թե ո՞վ է Աստված և ի՞նչ է կամենում Իր ժողովրդի համար:

Պատվիրանի, ճշմարտության կամ քաջալերանքի կարի՞ք ունես այսօր: Երբ կարդում ես ու սնվում ես խոսքով, կարող ես նաև գրքի էջերում եղածը համտեսել (Բ.Տիմ.3.16):

Աղոթք -երկնավոր Հայր, շնորհակալ եմ քո խոսքի միջոցով տվածդ առաջնորդության համար: Քեզանից ավելին լսելու ցանկությունն տուր մեզ: Ամեն:

Կարդա՛ր Յետև 1. 1-9

Այս օրենքների գիրքը քո շուրթերից չհեռացնես, այլ գիշեր-ցերեկ դրա մասին մտածի՛ր:
Յետև 1.8

Աստծո խոսքը մեր տրամադրությանն ենթարկ է ու ձրի:
Հաճույքով մտածի՛ր նրա մասին:՞

Դանդաղության պատճառ

ԲԻ Բի Սի-ի «Կաթնասուունների կյանքը» տեսաներիզների շարքում Դեյվիդը էդենբորոն ծառն է բարձրանում, որպեսզի մոտիկից տեսնի աշխարհի ամենադանդաղաշարժ եռակճղակ կենդանուն: Հասնելով կենդանուն, փորձում է բարձրաձայն ողջունել, բայց որևէ արտահայտություն չտեսնելով նրա դեմքին, եզրակացնում է, որ եթե մեր միակ սնունդն էլ այդ դժվարամարս ու ոչ սննդարար տերևները լինեին, մենք էլ այդպես դանդաղ կշարժվեինք:

Նեեմիան Իսրայելի պատմությունում հիշեցնում է դանդաղ շարժվելու մեկ այլ օրինակ (9. 9-21), որը սակայն զվարճալի չէ: Նեեմիի համաձայն՝ մեր Աստվածը դանդաղ ընթանալու գերագույն օրինակ է բարկության պահերին: Հիշեցնելով Աստծո՝ կենսատու պատվիրանները՝ Նեեմին վերհիշում է, թե Աստված ինչպես է հոգում Իր ժողովրդի մասին պահպանում է նրան Եգիպտոսից դուրս գալու ճանապարհին ու տալիս խոստացյալ երկիրը (Հմ.9-15): Չնայած Իսրայելի ժողովուրդը շարունակում էր ապստամբել (Հմ.16), բայց Աստված չդադարեց նրան սիրելուց: Նեեմին բացատրում է, որ մեր Արարիչը բնույթով «գլխած է եւ ողորմած, համբերատար և բազումողորմ» (Հմ.17): Ուրիշ ի՞նչ պատճառ կար քառասուն տարի համբերելու և ժողովրդի գանգատները, անհավատությունն ու անվստահությունը հանդուրժելու համար (Հմ. 21): Նա համբերել է Իր «մեծ ողորմության» պատճառով (Հմ. 19):

Աստծո սրտի մեծությունը հանդուրժում է մեզ ու սիրում:

Աղոթք - Երկնավոր Հայր, Քո Հոգու ողորմածությամբ, կարեկցանքով ու գթառատությամբ լցրու՛ մեզ, որպեսզի ուրիշները Քո սերը տեսնեն մեր մեջ: Ամեն:

Համբերատար Աստծո նման թող որ մենք էլ ներենք, գթանք ու կարեկցենք բոլորին:

Կարդա՛ր
Նեեմի 9. 9, 13 -21

Տե՛ր Աստված մեր, որ գթած ես և ողորմած, համբերատար և բազումողորմ...:
Նե. 9.17

Չիրփի

Չիրփի անուևով ծովածիծառը տասներկու տարի ամեն օր այցելում էր Ջոնին, որը իրեն խնամել էր, երբ կոտորվել էր իր ոտքը: Թեև Չիրփին բնակվում է Անգլիայի Դեռն քաղաքի Ինսթո ծովափին, բայց սեպտեմբերից մարտ ամիսների միջակայքում նրանք հեշտ էին գտնում իրար: Երբ Չիրփին ծովափ էր հասնում, առանց սխալվելու, ուղիղ մոտենում էր Ջոնին: Նրանք անսովոր կապվածություն ունենին միմյանց հետ:

Ջոնի և Չիրփիի կապը ինձ հիշեցնում է մարդու և թռչունի մեկ այլ անսովոր հարաբերության մասին: Երբ Աստված Եղիա մարգարեին անապատ ուղարկեց, որպեսզի «գնա դեպի արևելք ու թաքնվի Քոռաթի հեղեղատի մոտ», որը Հորդանան գետի դիմացն է: «Այնտեղ հեղեղատի ջրից կիմես, իսկ ես հրամայել եմ ազուպներին, որ քեզ այնտեղ կերակրեն» (Գ. Թագ. 17. 3-4): Հակառակ այդ դժվար պարագաներին՝ Եղիան իրեն հարկավոր ուտելիքն ու ջուրը ունեցավ: Թեև ազուպները ճաշ պատրաստողներ չէին, սակայն նրանք Եղիային անհրաժեշտ ուտելիքը բերեցին:

Ջարմանալի չէ, երբ մարդը օգնում է թռչունին, զարմանալին հակառակն է, երբ «ամեն առավոտ ազուպները հաց ու միս էին բերում նրան, ինչպես նաև հաց ու միս՝ երեկոները» (Տմ.6): Այդ բանը հնարավոր է բացատրել միայն Աստծո զորություններով ու հոգատարությամբ: Եղիայի նման մենք էլ կարող ենք վայելել Աստծո՝ մեր հանդեպ ունեցած նախատեսությունը:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր վստահ լինել, որ իմ բոլոր կարիքները Դու՛ պիտի հոգաս՝ անկախ հանգամանքներից: Ամեն:

Մենք կարիքներ միշտ ունենք: Սակայն Աստված ամեն բան հայթայթում է:

Կարդա՛ր
Գ Թագ. 17. 2-6

Ամեն առավոտ ազուպները հաց ու միս էին բերում նրան, ինչպես նաև հաց ու միս՝ երեկոները, իսկ ջուրը նա հեղեղատից էր խմում: Գ. Թագ. 17.6

Հուսահատության մի պատկեր

Ամբրիկայի Միացյալ Նահանգների «Մեծ գործազրկության ու հուսահատության» տարիներին Հայտնի լուսանկարիչ Դորոթեա Լանգը նկարել էր Ֆլորենս Օուենս Թոմսոնին՝ իր գավակների հետ: «Գաղթական մայրը» անունով այդ Հայտնի աշխատանքը պատկերում է Նիբոմո քաղաքի սիսեռ հավաքողների ծանր վիճակն ու մոր հուսահատությունը: Այդ քաղաքում էր նաև Ֆամ ապահովագրական ընկերության ղեկավարության գրասենյակը, և լուսանկարի հեղինակը հույս ուներ նրանց ուշադրությունը սեեռել հողագործների ծանր վիճակի վրա:

Երեմիայի ողբերի գիրքը հուսահատության մեկ այլ պատկեր է ներկայացնում. Հուդայի պատկերը Երուսաղեմի քանդվելուց հետո: Նաբուգոդոնոսորի բանակի՝ քաղաք մտնելուց առաջ ժողովուրդը պաշարման պատճառով սովի էր մատնված (Դ. Թագ. 24. 10-11): Թեև նրանց դժբախտությունների պատճառը Աստծո նկատմամբ տարիներ ի վեր եղած անհնազանդությունն էր, բայց Երեմիան Աստծուն է դիմում ժողովրդի անունից (Ողբ Եր. 2. 11-12):

106-րդ սաղմոսի հեղինակն էլ նկարագրում է Իսրայելի պատմության հուսահատ ժամանակներից մեկը, երբ ժողովուրդը դժվար ու ծանր պայմանների պատճառով թափառում էր անապատում (Հմ.4-5), և մարդիկ գործնական քայլ արեցին. «Աղաղակեցին Տիրոջն իրենց նեղության մեջ, և նա փրկեց նրանց իրենց վշտերից» (Հմ.6):

Հուսահատ ես: Լուռ մի՛ մնա: Աղաղակի՛ր Աստծուն, Նա կլսի ու կվերականգնի ձեր հույսը և խոստանում է միշտ մեզ հետ լինել:

Աղոթք - Երկնավոր Հայր, երախտապարտ եմ Քո մխիթարող ներկայության համար: Ամեն:

Նեղություններ ու ցավեր միշտ էլ կունենանք, սակայն Աստված խոստացել է մեզ հետ լինել բոլոր պարագաներում:

Կարդա՛

Սաղմոս 106. 4-9

Աղաղակեցին Տիրոջն իրենց նեղության մեջ, և նա փրկեց նրանց իրենց վշտերից:

Սաղմ. 106. 6

Վերամիացում

Հայրը տուն էր եկել որդու ծննդյան տարեդարձը տոնելու և չիր հետ բերել էր նվերի մի մեծ տուփ: Փոքրիկ տղան ուրախ-ուրախ բացեց տուփը, որի մեջ մեկ այլ տուփ էր փաթաթված, հետո՝ ավելի փոքրը, որի մեջ մի փոքրիկ թուղթ կար՝ վրան գրված՝ Անակնկալ: Երբ հայրը ներս մտավ, փոքրիկը արտասովալից աչքերով շփոթված նայեց վերև ու նետվելով հոր գիրկը՝ բացականչեց. «Հայրի՛կ, քեզ շատ եմ սիրում ու կարոտել էի»:

Այդ արտասովալից, բայց ուրախ վերամիացումը ներկայացնում է Հայտնության 21-ում նկարագրված այն պահը, երբ Աստծո զավակները երես առ երես տեսնում են իրենց սիրող Հորը՝ ամբողջովին նորոգված ու վերափոխված: Այնտեղ «Աստված նրանց աչքերից ամբողջ արտասուքը կտրեի»: Այլևս չի լինելու ցավ ու վիշտ, որովհետև մենք լինելու ենք մեր երկնավոր Հոր հետ, ինչպես Հայտնության 21-ի «մեծ ձայնն է» հայտարարում. «Ահա Աստծո խորանը մարդկանց հետ» (հմ. 3-4):

Մի քաղցր սեր և ուրախություն կա, որ վայելում են Հիսուսին հետևողները, ինչպես Ա. Պետ. 1.8-ում է նկարագրվում. «Որին չտեսած՝ սիրում եք, որին հավատացիք, թեև հիմա չեք տեսնում, և ուրախ եք՝ անպատմելի ու փառավոր խնդությամբ»: Պատկերացրեք մե՛ր անհավատալի ու սրտաբուխ ուրախությունը, երբ տեսնենք Նրան, ով սիրում է մեզ և ուզում էր բաց ձեռքերի մեջ ընդունել:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, ուրախությամբ սպասում ենք այն օրվան, երբ Քեզ հետ ենք լինելու: Իսկ մինչ այդ օգնի՛ր, որ ուրախությամբ ծառայենք Քեզ: Ամեն:

Թեև մեր աշխարհում կյանքը լի է ցավերով ու վշտերով, սակայն Տիրոջ ներկայության մեջ հավիտյան ուրախ ենք լինելու:

Կարդա՛ր
Հայտն. 21. 1- 7

Ահա Աստծու
խորանը մարդկանց
հետ...: Հայտն. 21.3

Ձանգը

Ձեքսոնը մանկուց երազում էր Միացյալ Նահանգների նա-
վատորմի ասպետ դառնալ: Այդ ցանկությունը նրան մղեց
երկար տարիների Ֆիզիկական պատրաստվածություն անցնել և
ի վերջո մասնակցել «Դժոխքի շաբաթ» անունով հայտնի մար-
զումներին, որոնց ժամանակ ստիպված էր ենթարկվել բավական
դաժան փորձությունների: Ձեքսոնը զգալով, որ Ֆիզիկապես ի
վիճակի չէր ավարտելու այդ մարզում-
ները, զանգ հնչեցրեց՝ հրամանատարին
ու մյուս մասնակիցներին հայտնելով,
որ ինքը հրաժարվում է ծրագրից: Շա-
տերի համար այդ դեպքը ձախողում
կարող է դիտվել, բայց , հակառակ իր
մեծ հուսախաբուլթյան, Ձեքսոնը դա
նկատեց որպես պատրաստություն մի
նոր ասպարեզի համար: Պետրոսը
նույնպես ձախողման անձնական փոր-

Կարդա՛

Մատթեոս 16. 13-20

Ես էլ քեզ ասում եմ,
որ դու Պետրոս ես, և
այդ վեմի վրա իմ
եկեղեցին կկառու-
ցեմ, և դժոխքի դռնե-
րը նրան չեն հաղթի:
Մատթ. 16.18

ձառություն ունեցավ: Սկզբում նա արիաբար հայտարարեց,
որ ինքը հավատարիմ կլինի Հիսուսին, նույնիսկ նրա համար
պատրաստ է բանտարկվել կամ մեռնել (Ղուկ. 23.33): Սակայն
հետո դառնորեն լացեց, երբ ուրացավ Հիսուսին (հմ.60-62):
Բայց Աստված ուրիշ ծրագիր ուներ: Պետրոսի ուրանալուց
առաջ Հիսուսը նրան ասաց. «Ես էլ քեզ ասում եմ, որ դու Պետ-
րոս ես, և այդ վեմի վրա իմ եկեղեցին կկառուցեմ, և դժոխքի
դռները նրան չեն հաղթի» (Մատթ. 16.18, տես Ղուկ. 22. 31-32):

Անհաջողության մե՞ջ ես, որից քեզ թույլ ու անարժան ես
զգում: Անհաջողության հնչող զանգերը թող պատճառ չդառ-
նան, որ չնկատես Աստծո ունեցած հատուկ նպատակները:

Աղոթք - Տե՛ր, օգնի՛ր ինձ, որ կարողանամ ամեն պարագա,
նույնիսկ իմ ձախորդությունները, օգտագործել Քո փառքի ու
պատվի համար: Ամեն:

Որպես թույլ արարած՝ միշտ էլ կունենաս ձախողումներ, սակայն
Աստված քեզ դեռ կարող է օգտագործել իր փառքի համար:

Դարձյալ աղոթելու ժամանակն է

Մտենալով մեր տանը՝ բարեկեցի հարեանուհուս՝ Միրիամին ու իր դստերը՝ էլիզաբեթին: Վերջինս տարիների ընթացքում վարժվել էր մեր ինքնաբուխ խոսակցություններին, որոնք շատ հաճախ «մի քանի ըոպերից» ավելի էին տևում՝ վերածվելով աղոթքի պահի: Այսօր էլ, մինչ մենք զրուցում էինք, էլիզաբեթը բարձրացավ իրենց դռան առջևի ծառը, նստեց ճյուղերից մեկի վրա և սկսեց զբաղվել: Քիչ անց ծառից իջավ ու դեպի մեզ վազելով ու մեր ձեռքերը բռնելով՝ ժպտաց ու գրեթե երգելու նման ասաց.«Ժամանակն է դարձյալ աղոթելու»: Նույնիսկ այդ փոքր տարիքում աղջնակը հասկացել էր, թե որքան կարևոր է աղոթքը մեր կյանքում:

Կարդա՛
Եփես. 6. 10 - 20

Աղոթքով ու աղաչանքով աղոթք արեք, ամեն ժամանակ՝ Դոգով: Եփես. 6.18

Եփեսոսի հավատացյալներին քաջալերելով, որ «զորանան Տիրոջով ու նրա զորության կարողությամբ» (Եփ.6.10)՝ Պողոսը հարատեղելու կարևորության մասին հատուկ տեսություն առաջարկեց և ապա նկարագրեց հոգևոր ընթացքի ժամանակ Աստծո ժողովրդին անհրաժեշտ սպառազինությունը, որպեսզի կարողանան սատանայի հնարներին դիմակայել. պաշտպանություն, խորաթափանցություն , վստահություն Աստծո ճշմարտության հանդեպ (Հմ.11-17): Միաժամանակ նա շեշտեց, որ այդ աստվածատուր զորությունը աճում է ծրագրված կերպով, երբ խորամուխ ենք լինում կենսատու աղոթքի մեջ (Հմ.18-20):

Աստված լսում է մեր աղոթքները և մտահոգված է մեզանով, անկախ նրանից, դրա մասին բարձրաձայն ասվում է, թե ոչ: Մեզ անընդհատ հրավիրելով աղոթքի՝ Նա միշտ պատրաստ է զորացնել մեզ:

Աղոթք - Զայր, շնորհակալ եմ աղոթքով Քեզ մոտենալու առանձնաշնորհի համար: Ամեն:

Մշտական աղոթքի մեջ լինելը զորացնում է մեզ և փոխում մեր կեցվածքը:

Տեսնել փրկությունը

Հիսուսներեք տարեկանում Սոնյան ծայրահեղ որոշում ընդունեց. թողնել երկիրն ու աշխատանքը և ապաստան փնտրել մեկ այլ երկրում: Պատճառն այն էր, որ մի խումբ չարագործներ նրա քրոջ որդուն սպանելուց հետո էլ տասնյոթ տարեկան որդուն էին ստիպում միանալ իրենց: Այդ պարագայում փախուստը միակ ելքն էր թվում Սոնյայի համար: «Աղոթում եմ Աստծուն և պատրաստ եմ անել ամեն ինչ, որպեսզի ես ու որդիս սովից չմեռնենք: Նախընտրում եմ նրան տեսնել այս կյանքում՝ թեկուզ տառապելիս, քան թե մահացած», - բացատրում է նա:

Կարդա՛ր
Դուկաս 3. 1-6

Եվ ամեն մարմին Աստծու փրկությունը կտեսնի:
Դուկ. 3.6

Աստվածաշունչը ասելիք ունի Սոնյային, նրա որդուն և նրանց նմաններին, որոնք տարատեսակ բռնությունների ու անարդարությունների են ենթարկվել: Հայտարարելով Հիսուսի գալստյան մասին՝ Հովհաննես Մկրտիչը բարի լուր հայտնեց ողջ աշխարհին: «Տիրոջ ճանապարհը պատրաստեցեք ու նրա շավիղներն ուղի՛ղ արեք» (Դուկ. 3.4), - ասաց նա և պնդեց, որ երբ Հիսուսը եկավ, Աստված ամբողջական ու հզոր ազատագրություն պիտի հաստատեր: Ազատագրություն բառի սուբբեգրային իմաստը Փրկությունն է:

Այն իր մեջ ընդգրկում է մեր մեղավոր սրտերի և աշխարհի բոլոր չարիքների բուժումը: Աստծո կերպարանափոխող գործը տրամադրելի է բոլորին: Հովհաննեսը շարունակում է. «Եվ ամեն մարմին Աստծո փրկությունը կտեսնի» (Հմ.6): Կարևոր է, թե ինչպիսի չարիք եք հաղթահարում, Քրիստոսի խաչն ու հարությունը վստահությունն են ներշնչում, որ կտեսնենք Աստծո փրկությունը:

Աղոթք - Հայր, խոստացար, որ ամեն մարդ կտեսնի Քո փրկությունը: Ընդունում եմ խոստումդ ու աղերսում, որ ցույց տաս ինձ Քո բուժումն ու փրկությունը: Ամեն:

Հակառակ գոյություն ունեցող չարիքների, տառապանքների ու ցավերի՝ Աստված խոստացել է փրկել մեզ:

Պատվական մեկնում

Քանդակագործ Լիզ Շեփերդի՝ 2018 թ. բացված «Սպասում» խորագրով ցուցահանդեսը «Բոստոն Գլոբի» լրագրողը բնութագրել էր որպես «հիշեցում կյանքում ամենակարևորի, բացահայտի ու գերազանցի մասին»: Ներշնչված իր մահամերձ հոր կողքին անցկացրած պահերից՝ ցուցահանդեսի հեղինակը փորձել է մարդկանց փոխանցել այն դատարկությունն ու փխրուն վիճակը, որ մենք ունենում ենք մեր սիրելիների կորստյան պատճառով:

Մահվան պատվական լինելու միտքը կարող է անհասկանալի ու անընդունելի լինել մեզ համար: Սակայն սաղմոսերգուն հայտարարում է. «Տիրոջ աչքում պատվական է մահն իր սրբերի» (Սաղմ. 115.15): Աստված արժևորում է իր ժողովրդի մահը, որովհետև մահն է այն ճանապարհը, որով նրանց տուն է ընդունում:

Ովքե՞ր են Աստծո հավատարիմ ծառաները կամ սրբերը: Ըստ սաղմոսերգուի՝ նրանք են, ովքեր ծառայում են Աստծուն և երախտապարտ են Նրա կատարած փրկության համար, ովքեր կանչում են Նրա անունը և հարգում են Նրա առջև իրենց ասած խոսքերը (Հմ.16-18): Նման արարքները ցույց են տալիս Աստծո հետ քայլելու մեր ակնհայտ նախընտրությունը:

Այսպես գործելով՝ մենք կլինենք Հիսուսի կողքին, որն Աստծուց է ընտրվել և պատվական է Նրա համար: Աստծո խոսքն ասում է. «Ահա Միտնում անկյան գլուխ՝ ընտիր, պատվական քար եմ դնում, ու նրան հավատացողը չի ամաչի» (Ա.Պետ.2.6): Երբ մեր վստահությունը Աստծո մեջ է, մեր մեկնումն այս կյանքից պատվական է իր համար:

Աղոթք - Հայր, օգնիր, որ Քեզ վստահեմ նույնիսկ կյանքի մատուցած մարտահրավերների ու կորուստների մեջ: Ամեն:

Հավատա՛, վստահի՛ր և հնազանդվի՛ր Աստծուն և իր աչքում կլինես պատվական:

Կարդա՛

Սաղմոս 115. 12 - 19

Տիրոջ աչքում հարգելի է մահն իր սրբերի: Սաղմ. 115.15

Փայտահատը

Մի տարի, երբ քոլեջի ուսանող էի, նյուլթական վիճակս մի փոքր ապահովելու նպատակով ձեռնարկեցի փայտ կտրելու, կուտակելու և ապա վաճառելու գործը: Ծանր ու դժվարին աշխատանք էր, բայց ես այդպիսով հասկացա Դ. Թագավորաց 6-ում նկարագրված մարդու վիճակը:

Եղիսեեի տնօրինած մարգարեների դպրոցը շատ էր մեծացել, և նրանց տեղը նեղ էր: Աշակերտներից մեկն առաջարկեց գնալ անտառները, գերանները կտրել և իրենց տեղը մեծացնել: Եղիսեեն համաձայնեց, և ինքն էլ հետները գնաց: Ամեն ինչ լավ էր, մինչև այն պահը, երբ փայտ կտրողներից մեկի կացինը ջուրն ընկավ (հմ. 5):

Ոմանք ասում են, թե Եղիսեեն պարզապես իր գավազանով գտել ու ջրից դուրս է բերել կացինը: Բայց այդպիսի բացատրությունը այն արժեքը չունի: Որովհետև իրականում հրաշք է եղել, Աստծո ձեռքով երկաթե կացինը դուրս է եկել ջրի երես, և մարդը ձեռքը մեկնել ու վերցրել է այն (հմ. 6-7): Այս պարզ հրաշքը մի մեծ ճշմարտություն է պարունակում: Աստված մտահոգվում է մեր կյանքում եղած նույնիսկ ամենափոքր բաներով, լինի դա կացին, բանալի, ակնոց կամ հեռախոս, որոնց կորուստը մեզ նեղություն է պատճառում: Միշտ էլ, որ Նա մեզ վերադարձնում է մեր կորուստները, բայց հասկանում ու մխիթարում է մեզ: Փրկության երաշխիքի կողքին շատ կարևոր է նաև Աստծո հոգածություն երաշխիքն ունենալ: Լավ է իմանալ, որ Նա հոգում է մեր մասին, հուզվում մեր կորուստներով, որքան էլ փոքր լինեն դրանք: Մեր մտահոգությունները նաև իր մտահոգություններն են:

Աղոթք - Սիրող Յայր, լսիր իմ հոգսերի մասին: Խնդրեմ, վերցրու՛ դրանք ու վարվիր, ինչպես Դու ես ուզում, և ինձ խաղաղություն տուր: Ամեն:

Փոքր բաները կարող են նեղություն տալ քեզ, բայց Աստված կհոգա:

Կարդա՛
Դ Թագ. 6. 1-7

Ձեր ամբողջ հոգսը նրա վրա՝ օգտեցեք, որովհետև նա ձեզ համար հոգ է անում: Ա Պետ. 5.7

Պատուղը

Շքեղ խանութում մի ջահ տեսա, որը գույնով, չափսով ու գնով շատ հարմար էր իմ աշխատասենյակին: Գնեցի այն, բայց երբ տուն բերեցի ու միացրի, ոչ լույս կար, ոչ գեղեցկություն: Ամուսինս հանգստացրեց ինձ՝ ասելով, որ ինքը կնորոգի: Երբ քանդեց ջահը, անմիջապես հասկացավ չմիանալու պատճառը. լարը միացված չէր: Առանց էլեկտրական հոսանքին միացնելու՝ այդ «կատարյալ» գեղեցկությունն արժեք չուներ:

Նույն բանն էլ մեր կյանքում է: Հիսուսն իր աշակերտներին ասում է. «Ես որթատունկն եմ, դուք՝ ճյուղերը. նա, ով իմ մեջ է մտնում, ես էլ՝ իր մեջ, նա շատ պտուղ է բերում»: Այնուհետև ավելացնում է այս շատ կարևոր հիշեցումը. «Որովհետև առանց ինձ ոչինչ չէր կարող անել» (Հովհ. 15:5): Այս ճշմարտությունը ասվել էր այգի մշակելու շրջանում, և Նրա աշակերտները շատ լավ հասկացան ասվածի իմաստը. որթատունկերը տոկուն բույսեր են, դրանց ճյուղերը դիմանում են հատումներին: Բայց երբ դրանք կտրվեն իրենց կյանքի աղբյուրից, անարժեք ու մեռած ճյուղեր կլինեն: Նույնն է նաև մեր պարագայում:

Քանի դեռ մենք Հիսուսի մեջ ենք ու թույլ ենք տալիս, որ Նրա խոսքը բնակվի մեր մեջ, մենք կապված կլինենք մեր կյանքի աղբյուր Քրիստոսին: «Իմ Հայրը նրանով կփառավորվի, որ շատ պտուղ բերեք», - ասաց նա (Հմ.8): Իսկ նման պտղաբեր արդյունք ստանալու համար ամենօրյա սնունդ է հարկավոր: Աստված ձրիաբար տալիս է այն՝ Աստվածաշնչի և Իր սիրո միջոցով:

Աղոթք - Ամենազոր Տե՛ր, զորացրո՛ւ ինձ, որպեսզի մնամ Քո մեջ և արտոնի՛ր, որ Քո սիրո խոսքը բարի պտուղ տա իմ մեջ: Ամեն:

Եթե ուզում ես պտղատու մեկը լինել, Տե՛ր Հիսուսի հետ կապդ հաստատի՛ր ու զորացրո՛ւ:

Կարդա՛ր
Յովհ. 15. 5-8

Ես որթատունկն եմ, դուք՝ ճյուղերը. նա, ով իմ մեջ է մտնում, ես էլ՝ իր մեջ, նա շատ պտուղ է բերում: Յովհ. 15.5

Օրհնված հաց

Երբ մեր ավագ որդին դարձավ տասներեք տարեկան, ես ու Ետիկինս նրան տվեցինք մանկուկությունից ի վեր իր մասին մեր գրած օրագիրը: Դրա մեջ մենք համառոտ նշել էինք իր սիրածն ու չսիրածը, հուզիչ ու հիշատակելի բաները: Դրանք երբեմն նման էին նամակների, որոնցում արտացոլված էին իր մեջ մեր տեսածները և հատկապես Աստծո գործը: Իր տարեգարձին ստացած նվերով որդիս շատ ուրախացավ. նրան տրվել էր իր ինքնուկույն, արմատների մասին իմանալու պարզեք:

Հացի նման պարզ բանը օրհնելով՝ Հիսուսն իր ինքնուկույնն էր հայտնում ու Աստծուն փառաբանում: Համոզված եմ նաև, որ Նա մատնանշում էր նաև նյութական աշխարհի ապագան և այն, որ ամեն ստեղծագործություն մի օր լցվելու է Աստծո փառքով: Ուստի Հացի օրհնության մեջ (Մատթ. 26. 26) Հիսուսը ցույց էր տալիս ստեղծագործության արմատն ու ճակատագիրը (Հռոմ. 8. 21-22):

Գուցե քո պատմության «սկզբում» խառնաշփոթ լինի, գուցե մտածես, որ ապագայի որևէ հույս չկա: Սակայն ավելի մեծ մի պատմություն կա. Աստծո՝ պատմությունը, որ եկավ քեզ ազատելու (Մատթ. 26.28), Աստված, որ իր Հոգին դրեց քո մեջ՝ քեզ նորոգելու ու վերականգնելու համար: Աստված, որ ուզում է օրհնել քեզ:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, կյանքս Քո ձեռքերի մեջ եմ դնում՝ որպես հաց: Միայն Դու՛ կարող ես ինձ դեպի իմ արմատները տանել ու առաջնորդել ճակատագիրս: Ո՛վ Հիսուս, Դու ես հեղինակն ու ամբողջացնողը իմ հավատի: Ամեն:

Տերը հիշեցնում է, որ քո կարծածից շատ ավելին կա քո կյանքի պատմության մեջ: Հանձնվի՛ր Նրան, ու թող որ Ի՛նքը քեզ օրհնի:

Կարդա՛

Մատթ. 26. 26-29

Հիսուսը հացն առավ ու օրհնելով կտրեց:

Մատթ. 26.26

Ժառանգ լինելը շահելով չէ

«Հայրի՛կ, շնորհակալ եմ ընթրիքի համար», - անձեռոցիկը սեղանի վրա դնելով՝ ասացի ես: Քոլեջի արձակուրդին տուն էի եկել, և երկար ժամանակ հեռու լինելուց հետո մի տեսակ անսովոր էր, որ ծնողներս վճարեին ինձ համար: «Բարով ես եկել, Ջուլի, պետք չէ, որ դու ամեն ինչի համար շնորհակալություն հայտնես: Գիտեմ, որ անկախ ես մեզանից, բայց դու իմ աղջիկն ես, մեր ընտանիքի անդամը», - ասաց հայրս: Ու ես դարձյալ շնորհակալ եղա:

Ընտանիքումս չեմ արել այնպիսի բան, ոչ շահեմ ծնողներին սերը կամ արժանի լինեմ այն ամենին, ինչ արել են ինձ համար: Հորս ասածից հետո մտածեցի, որ ես Աստծո ընտանիքի մաս դառնալու համար էլ որևէ բան չեմ արել:

Եփեսացիներին ուղղված նամակում Պողոսն ասում է, թե Աստված իրենց է ընտրել «որպեսզի սուրբ և անարատ լինեն նրա առաջ սիրով» (Հմ. 1.4), ինչպես նաև իր առջև անարատ լինեն (Հմ. 5. 25-27): Բայց դա հնարավոր է միայն Հիսուսով, որ «փրկություն ունենան նրա արյունով և մեղքերի թողություն՝ իր շնորհի մեծություն չափով» (Հմ.1.7): Մենք կարիք չունենք շահելու Աստծո շնորհը, ներումն ու իր ընտանիքի մաս դառնալու իրավունքը: Մենք դրանք պարզապես ընդունում ենք որպես իր պարգևը: Երբ մեր կյանքը դարձնենք դեպի Հիսուսը, կլինենք Աստծո զավակները: Իսկ դա նշանակում է, որ կստանանք հավիտենական կյանք և կլինենք երկնքում մեր տեղն ունեցող ժառանգ:

Աղոթք - Հավատարիմ Հայր, շնորհակալ եմ, որ Որդուդ ձրի տալիս ես, որ Քո ընտանիքի անդամը լինեմ: Օգնի՛ր՝ կարողանամ Քեզ պատվել՝ քո բոլոր արածներիդ համար: Ամեն:

Կարդա՛ Եփես. 1. 3-14

Մեզ առաջուց սահմանեց, որ Հիսուս Քրիստոսի միջոցով իրեն որդեգիր լինենք՝ իր կամքի հաճությամբ: Եփ. 1.5

Աստծո սիրո ազատությունը որդեգրում է մեզ ու Տեր Հիսուսի միջոցով ժառանգորդ դարձնում:

Նյութերի ցանկ

Ազդիթք	Հուն. 1,24, փետ. 1.6, մարտի 17,22,25
Անձկություն.....	Փետր. 1, 23
Աստծո հետ հաղորդակցություն	Մարտի 29
Աստծո հոգածություն.....	Հուն. 13,14,24, փետր. 9,17,20, մարտի 3,6,7,11,17,21,28
Աստծու սերը.....	Հուն. 3,20,22,30, փետր. 4,9,22,23
Աստծուն վստահել	Հուն. 9,10,17,23,31, փետր. 2,19,27, մարտի 2,5,10,14,18,27,30
Ավետարանչություն.....	Հուն. 1,5, փետր. 8, մարտի 12
Բարեկամություն.....	Հուն. 27
Բարկություն.....	Հուն. 20, մարտի 20
Գոհաբանություն.....	Հուն. 31, փետր. 25,29, մարտի 31
Դաստիարակում.....	Հուն. 26
Դրախտ.....	Մարտի 1, 23
Եկեղեցի.....	Մարտի 7,8
Երջանկություն.....	Փետր. 26,28
Խորհուրդ.....	Հուն. 8, 23
Ծառայություն.....	Հուն. 16, փետ. 4,7,11, մարտի 15
Կյանքի պայքարներ.....	Հուն. 17, փետ. 2,14,19, մարտի 13,14
Համբերություն.....	Հուն. 23
Հանցանք.....	Փետր. 12
Հարաբերություններ.....	Փետր. 10,11
Հավիտենական կյանք.....	Մարտի 27
Հավատացյալների միաբանություն.....	փետ. 16
Հիվանդությանը դիմադրել.....	Փետ. 6
Հիսուսի ծնունդը.....	Հուն. 6
Հոգեկան պարզեանք.....	Մարտի 7
Հոգևոր աճում.....	Հուն. 2,14, փետ. 26
Հոգեկան բարեփոխություն.....	Փետ. 20,24
Հոգու պտուղը.....	Մարտի 29

Հուլյս.....	Փետր. 20,21
Հուսահատություն.....	Փետր. 21, մարտի 22
Մահ.....	Մարտի 27
Մեղք.....	Հուն. 11,21,22, փետ. 13
Մեղքերի թողություն.....	Հուն. 11,21,22, փետր. 13
Մտահոգություն.....	Փետր. 27, մարտի 28
Նախապատվություն.....	Հուն. 6
Ներում.....	Դեկ. 8
Պաշտամունք.....	Հուն. 12, փետր. 8,14, մարտի 8,16
Սատանա.....	Փետր. 15
Սեր թշնամու հանդեպ.....	Հուն. 18
Սեր ուրիշների հանդեպ.....	Հուն. 13, փետր. 4, 18
Սխալ ուսուցում.....	Փետր. 16
Սուրբ Գրքի սերտողություն.....	Հուն. 2, մարտի 19
Սուր Հոգի.....	Հուն. 15, փետր. 3,5
Ստեղծագործություն.....	Հուն. 4, մարտի 16
Վախ.....	Հուն. 10, 30
Վիժում.....	Հուն. 19
Վիշտ.....	Փետր. 10,18,28, մարտի 10
Վհատություն.....	Հուն. 27, փետր. 1, 23
Տալ.....	Հուն. 7,16, մարտի 15
Տանջանք.....	Մարտի 18
Փորձություն.....	Հուն. 21, փետր. 15
Փրկություն.....	Հուն. 3,25, փետր. 13, մարտի 2,21,26
Քաջակերություն.....	Մարտի 6
Քրիստոս Փրկիչ.....	Մարտի 26
Քրիստոսի Աստվածությունը.....	Հուն. 25
Քրիստոսի մահը.....	Հուն. 11
Քրիստոսի համար ապրել.....	Հուն. 29, մարտի 1, 12,24
Քրիստոսի հարությունը.....	Փետր. 28, մարտի 4
Քրիստոսի նման ապրել.....	Հուն. 5,29, փետր. 7

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

**Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ**

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. (374) 94 52 75, 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ
Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի և
Արցախի մասնաճյուղերին

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Էլկայք՝ www.amaa.am

Արցախ
375000 ք. Ստեփանակերտ, Ալեք Մանուկյան 7ա
Հեռ. (+374) 94 52 75, (+374) 95 02 95